ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 99-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 10-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 08-Ի ԹԻՎ 12 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 10-րդ նստաշրջանի 2026 թվականի սեպտեմբերի 08-ի թիվ 12 հերթական նիստի օրակարգը.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 155-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մազի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրելու մասին.

3) Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.

4) Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին.

5) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծի հողամասի քաղաքաշինական գոտիավորման (կառուցապատման) չափորոշիչների փոփոխման մասին.

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղում փողոց անվանակոչելու մասին.

7) Հենասյունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին.

8) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.

9) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի «Մեղրաձորի Հակոբ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տարածքում գտնվող բարդի տեսակի ծառերի հատման և մաքրման աշխատանքների մասին.

10) Հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.
11) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026 թվականի համայնքային սոցիալական ծրագիրը հաստատելու մասին.
12) Ծաղկաձոր համայնքի գլխավոր հատակագծով նախատեսված հողամասի նպատակային նշանակության փոփոխության ժամկետներում փոփոխություն կատարելու մասին.
13) Հենասյունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին.
14) Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ձեռք բերվող աշխատանքները հրատապ բաց մրցույթի ընթացակարգով անցկացնելու մասին.
15) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 14-ի N 98-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին.
16) Մարմարիկ գետի ավազանի պահպանության և կայուն զարգացման տեղական քաղաքականությանը համաձայնություն տալու մասին.
17) «Խելացի Կանգառ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գումար վերադարձնելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 100-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 155-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 155-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Բաժին 1 խումբ 6 դաս 1 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված «4511» (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) «21177,0» թիվը փոխարինել «23084,5» թվով:
2) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) հոդված «5112» (Շենքերի և շինությունների կառուցում) «724463,4» թիվը փոխարինել «657463,4» թվով:
3) Բաժին 4 խումբ 5 դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) հոդված «5112» (Շենքերի և շինությունների կառուցում) «50 000,0» թիվը փոխարինել «102 000,0» թվով:
4) Բաժին 5 խումբ 1 դաս 1 (Աղբահանում) հոդված «4511» (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) «104806,0» թիվը փոխարինել «106944,1» թվով:
5) Բաժին 6 խումբ 3 դաս 1 (Ջրամատակարարում) հոդված «4511» (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) «28580,0» թիվը փոխարինել «32030,0» թվով:
6) Բաժին 8 խումբ 1 դաս 1 (Հանգստի և սպորտի ծառայություններ) հոդված «5113» (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) «0,0» թիվը փոխարինել «15000,0» թվով:

7) Բաժին 11 խումբ 1 դաս 2 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) հոդված «4891» (Պահուստային միջոցներ) «235464,5» թիվը փոխարինել « 227968,9 » թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

11.08.2026թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 101-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՆԺԱՄԿԵՏ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել «Ծաղկաձորի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 1:
2. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անժամկետ և անհատույց օգտագործման տրամադրել «Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն հավելված 2,3:
3. Համայնքի ղեկավարի հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

Հավելված 1
Ծաղկաձոր համայնքի ավագանու 2026
թվականի սեպտեմբերի 08-ի թիվ 101 որոշման

Ծաղկաձորի համայնքապետարան
կազմակերպության անվանումը

Հաստատում եմ համայնքի ղեկավար_____ Ն. Հարությունյան
պաշտոնը ստորագրությունը անուն ազգանունը

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆՄԱՆ

ԱԿՏ N 9 «08» սեպտեմբերի 2026 թ.

Ստացող *<<Ծաղկաձորի կոմունալ տնտեսության >> ՀՈԱԿ*
կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը

Հիմքը *08.09.2026թ Ծաղկաձոր համայքի ավագանու թիվ 101 որոշում*
որոշումը, հրամանը, պայմանագիրը և այլն

h/h	Հիմնական միջոցի անվանումը, համառոտ բնութագիրը	Գույքայի ն համարը	Հիմնական միջոցի			
			համախառն հաշվեկշռային արժեքը	**կուտակված մաշվածութ-յունը**	**Հաշվեկշռային արժեքը**	
1	2			3	4	5
1.	Ավտոմեքենա Mitsubishi L200 /պիկապ/	01889	18,028,800.00	383,273.55	17,645,526.45	
2.	Ռոտորային ձյունամաքրիչ	01831	990,000.00	55,059.14	934,940.86	

« » _____ 20 թ. N _____ լիազորագրի համաձայն՝ տրված _____
ում, ում կողմից (պաշտոնը, անունը, ազգանունը, կազմակերպությունը)

Հանձնող			Ստացող		
կ.տ..			կ.տ..		
Ղեկավար՝	Ռ. Եղիազարյան		Տնօրեն	Է. Հովհաննիսյան	
	ստորագրությունը	անունը, ազգանունը	պաշտոնը	ստորագրությունը	անունը, ազգանունը
Գլխավոր հաշվապահ՝	Ն. Խաչատրյան		Գլխավոր հաշվապահ	Մ. Սաղոյան	
	ստորագրությունը	անունը, ազգանունը	պաշտոնը	ստորագրությունը	անունը, ազգանունը

Հավելված 2
Ծաղկաձոր համայնքի ավագանու 2026
թվականի սեպտեմբերի 08-ի թիվ 101 որոշման

Ծաղկաձորի համայնքապետարան
կազմակերպության անվանումը

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆՄԱՆ

ԱԿՏ N 10 «08» սեպտեմբերի 2026 թ.

Ստացող *<<Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց >> ՀՈՒԿ*
կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը

Հիմքը *08.09.2026 թ Ծաղկաձոր համայքի ավագանու թիվ 101 որոշում*
որոշումը, հրամանը, պայմանագիրը և այլն

h/h	Հիմնական միջոցի անվանումը, համառոտ բնութագիրը	Գույքայի ն համարը	Հիմնական միջոցի			
			համախառն հաշվեկշռային արժեքը	կուտակված մաշվածութ-յունը	Հաշվեկշռային արժեքը	
1	2			3	4	5
1.	Աթոռ աշակերտական	01832	7,500.00	522.72	6,977.28	
2.	Աթոռ աշակերտական	01833	7,500.00	522.72	6,977.28	
3.	Աթոռ աշակերտական	01834	7,500.00	522.72	6,977.28	
4.	Աթոռ աշակերտական	01835	7,500.00	522.72	6,977.28	
5.	Աթոռ աշակերտական	01836	7,500.00	522.72	6,977.28	
6.	Աթոռ աշակերտական	01837	7,500.00	522.72	6,977.28	
7.	Աթոռ աշակերտական	01838	7,500.00	522.72	6,977.28	
8.	Աթոռ աշակերտական	01839	7,500.00	522.72	6,977.28	
9.	Աթոռ աշակերտական	01840	7,500.00	522.72	6,977.28	
10.	Աթոռ աշակերտական	01841	7,500.00	522.72	6,977.28	
11.	Աթոռ աշակերտական	01842	7,500.00	522.72	6,977.28	
12.	Աթոռ աշակերտական	01843	7,500.00	522.72	6,977.28	
13.	Աթոռ աշակերտական	01844	7,500.00	522.72	6,977.28	
14.	Աթոռ աշակերտական	01845	7,500.00	522.72	6,977.28	
15.	Աթոռ աշակերտական	01846	7,500.00	522.72	6,977.28	
16.	Աթոռ աշակերտական	01847	7,500.00	522.72	6,977.28	
17.	Աթոռ աշակերտական	01848	7,500.00	522.72	6,977.28	
18.	Աթոռ աշակերտական	01849	7,500.00	522.72	6,977.28	
19.	Աթոռ աշակերտական	01850	7,500.00	522.72	6,977.28	
20.	Աթոռ աշակերտական	01851	7,500.00	522.72	6,977.28	
21.	Սեղան աշակերտական	01852	35,000.00	2,505.20	32,494.80	
22.	Սեղան աշակերտական	01853	35,000.00	2,505.20	32,494.80	
23.	Սեղան աշակերտական	01854	35,000.00	2,505.20	32,494.80	
24.	Սեղան աշակերտական	01855	35,000.00	2,505.20	32,494.80	
25.	Սեղան աշակերտական	01856	35,000.00	2,505.20	32,494.80	
26.	Սեղան աշակերտական	01857	35,000.00	2,505.20	32,494.80	
27.	Սեղան աշակերտական	01858	35,000.00	2,505.20	32,494.80	
28.	Սեղան աշակերտական	01859	35,000.00	2,505.20	32,494.80	

29.	Սեղան աշակերտական	01860	35,000.00	2,505.20	32,494.80	
30.	Սեղան աշակերտական	01861	35,000.00	2,505.20	32,494.80	
31.	Գրասեղան	01862	80,000.00	5,726.16	74,273.84	
32.	Հագուստի պահարան անկյունակ	01863	420,000.00	30,062.36	389,937.64	
33.	Պահարան ցուցադրական	01864	150,000.00	10,736.56	139,263.44	

« » _____ 20 թ. N _____ լիազորագրի համաձայն՝ տրված _____

ում, ում կողմից (պաշտոնը, անունը, ազգանունը, կազմակերպությունը)

Հանձնող

կ.տ..

Ղեկավար՝ _____ Ռ. Եղիազարյան

ստորագրությունը անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ՝ _____ Ն. Խաչատրյան

ստորագրությունը անունը, ազգանունը

Ստացող

կ.տ..

Տնօրեն _____ Ա.Մուրադյան

պաշտոնը ստորագրությունը անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____ Ս. Հովհաննիսյան

պաշտոնը ստորագրությունը անունը, ազգանունը

Հավելված 3
Ծաղկաձոր համայնքի ավագանու 20.
թվականի սեպտեմբերի 08-ի թիվ 101 որոշմ

Ծաղկաձորի համայնքապետարան
կազմակերպության անվանումը

Հաստատում եմ համայնքի ղեկավար _____ Ն. Հարությունյ
պաշտոնը ստորագրությունը անուն ազգանունը

ՊԱՇԱՐՆԵՐԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆՄԱՆ

ԱԿՏ N 1 «08» սեպտեմբերի 2026 թ

Ստացող *<<Ծաղկաձորի մանկական արվեստի տնտեսության >> ՀՈԱԿ*
կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը

Հիմքը *08.09.2026 թ Ծաղկաձոր համայքի ավագանու թիվ 101 որոշում*
որոշումը, հրամանը, պայմանագիրը և այլն

հ/հ	Պաշարների անվանումը, բնութագիրը	Գույքային համարը	Պաշարների			Հաշվեկշռային արժեքը	Նշումներ
			Չափի միավորը	քանակը	գինը		
1	2			3	4	5	
1.	Նկարի շրջանակ 50*40	00352	հատ	5.00	4000.00	20,000.00	
2.	Նկարի շրջանակ 40*30	00353	հատ	10.00	3000.00	30000.00	

« » _____ 20 թ. N _____ լիազորագրի հա-մաձայն՝ տրված

_____
ում, ում կողմից (պաշտոնը, անունը, ազգանունը, կազմակերպություն

Հանձնող			Ստացող		
կ.տ..			կ.տ..		
Ղեկավար՝		Ռ. Եղիազարյան	Տնօրեն		Ա. Մուրադյան
	ստորագրությունը	անունը, ազգանունը	պաշտոնը	ստորագրությունը	անունը, ազգանունը
Գլխավոր հաշվապահ՝		Ն. Խաչատրյան	Գլխավոր հաշվապահ		Ս. Հովհաննիսյա
	ստորագրությունը	անունը, ազգանունը	պաշտոնը	ստորագրությունը	անունը, ազգանունը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 102-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ և 10-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 54-րդ և 60-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 12-ի N 1/փ-328 եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի 2026 թվականի հուլիսի 21-ի N01.2/03.1/06347-2026 գրությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Ծաղկաձոր քաղաքի վարչական տարածքում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականության հանդիսացող հատուկ պահպանվող տարածքների հողեր, հանգստի համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության 2.67 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 07-005-0021-0007) հողամասը փոփոխել անտառային , անտառների հողեր՝ նպատակային և գործառնական նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 103-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ և 10-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 54-րդ և 60-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 17--ի N 1/փ- 354 եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի 2026 թվականի օգոստոսի 19-ի N 01.2/03.1/07274-2026 գրությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արթուր Ալեքսանի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող, մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Աղավնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող, նպատակային և գործառնական նշանակություն՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ խոտհարք 0,33451 հա մակերեսով հողամասի (կադաստրային ծածկագիր՝ 07-010-0147-0034) նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրերի, բնակելի կառուցապատման հողեր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 104-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ (ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ) ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման հավելվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական կոմիտեի նախագահի 2026 թվականի հուլիսի 10-ի N01.2/03.1/06004-2026, հուլիսի 30-ի N 01/03.1/06656-2026 և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի 2026 թվականի օգոստոսի 24-ին 03-ի N01/03.1/07372-2026 գրությունները՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, քաղաք Ծաղկաձոր Օլիմպիական փողոց 16 հողամաս հասցեում գտնվող Դավիթ Վահրամի Դավթյանին և Աստղիկ Սամվելի Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող 3,99 հա մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման նպատակային և գործառնական նշանակության հողամասի գոտին փոփոխել, սահմանել միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտի (ԲՆԿԳ-3) :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 105-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԱՁՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29 -ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի որոշման քաղվածքը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ծաղկաձոր համայնքի, Մեղրաձոր գյուղում փողոցը անվանակոչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնք, գյուղ Մեղրաձոր 12-րդ փողոց՝ համաձայն հավելվածի:

2. սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր


PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT
PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT
PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT
PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT
12-րդ փողոց
Գ. Մարտիրոսյան

Հասցե տրամադրելու մասին որոշում (որոշման քաղվածք)

ՔԱՂՎԱԾՔ

Անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին

Տրամադրվող հասցեն	Ծածկագիր	QR-կոդ
Ծաղկաձոր, Մեղրաձոր, 12-րդ փողոց	07072M9WBJWC	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 106-Ա

ՀԵՆԱՍՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի թիվ 66 որոշումը և «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» բաց բաժնետիրական ընկերության գրությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» բաց բաժնետիրական ընկերությանը, օգտագործել Ծաղկաձոր համայնքի , Ծաղկաձոր քաղաքում գտնվող 104, Փյունիկ բնակավայրում 64 և Մեղրաձոր բնակավայրում 4 հատ հենասյուներ՝ ցանցի տեխնոլոգիական արդիականացման նախագծի գովազդային վահանակներ ամրացնելու նպատակով, համայնքի ավագանու կողմից սահմանված մատուցվող ծառայությունների վճարի դիմաց:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ
ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ
ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 107-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի, 1-ին մասի 21-րդ կետի և պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը տրամադրել մրցութային կարգով վարձակալության իրավունքով, առանց կառուցապատման նպատակի:
2. Սահմանել մրցութային կարգով վարձակալության իրավունքով տրամադրվող հողամասի համար տարեկան վարձաչափը և ժամկետը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

Աղյուսակ
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2026 թվականի սեպտեմբերի 8 -ի N 107-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՌԱՆՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԻ

Լոտ	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը հա	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը	Տարեկան վարձավճար /դրամ/	Ժամկետը /տարի	սահմանափակումն եր
1	Ծաղկաձոր համայնք գյուղ Մեղրաձոր	07-045-0438-0046	0,95	գյուղատնտեսական	արոտավայր	100 000	25	չկան
2	Ծաղկաձոր համայնք գյուղ Աղավնաձոր	07-010-0166-0007	0,11085	գյուղատնտեսական	Այլ հողատեսք	25 000	25	չկան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 108-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԱԶՈՐ ԳՅՈՒՂԻ « ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱՐԴԻ ՏԵՍԱԿԻ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԵՎ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Հակոբ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, վարչատնտեսական մասի համակարգող՝ Հասմիկ Բրուտյանի գրությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Նկատի ունենալով, որ իրականացվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր գյուղի «Մեղրաձորի Հակոբ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հենապատի կառուցման աշխատանքներ: Հենապատի կառուցման շինարարական աշխատանքներին խոչընդոտում են դպրոցի տարածքում գտնվող բարդի տեսակի ծառերը:
Նշված աշխատաքների պատշաճ և անվտանգ իրականացման համար, թույլատրել կատարել տարածքում գտնվող բարդի տեսակի ծառերի հատման, մաքրման և բարեկարգման աշխատանքներ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր 2026 թվականի թիվ 109-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշումը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, գյուղ Արտավազ, գյուղ Փյունիկ 1-ին փողոց, 4-րդ նրբանցք, 1-ին փակուղի 7/1 հասցեում գտնվող 0,03838 հա /ծածկագիր 07-017-0035-0020,0010/ բնակավայրերի, ընդհանուր օգտագործման համար նախատեսված՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Աղավնաձոր գյուղի վարչական տարածքում գտնվող 0,49368 հա մակերեսով /ծածկագիր 07-010-0147-0015/ գյուղատնտեսական, խոտհարք՝ նպատակային և գործառնական նշանակության հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ
ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ
ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 110-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2025 թվականի նոյեմբերի 23-ի N 150-Ն հրամանը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի 2026 թվականի համայնքային սոցիալական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

Հավելված
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2026 թվականի սեպտեմբերի 08-ի N 110-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ

2026 ԹՎԱԿԱՆԻ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ք. ԾԱՂԿԱՁՈՐ, 2026 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....2

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ.....3

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....4
1.1. ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ.....4-10
1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ.....11-15
1.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ.....16-23
1.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ.....24-25

2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....26-39
2.1. ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....40-43
2.2. ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ.....44
2.3. ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ.....45

3. ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԸ.....46
3.1.ԵՆԹԱԾՐԱԳԻՐ N 1.ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ.....46-48
3.2.ԵՆԹԱԾՐԱԳԻՐ N 2. ԲՆԱԻՐԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ.....49-53
3.3.ԵՆԹԱԾՐԱԳԻՐ N 3. ԲՈՒԺՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ.....54-57
3.4.ԵՆԹԱԾԳՐԱԳԻՐ N 4. ՏՆԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՑԵՐԵԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ.....58-60
3.5.ԵՆԹԱԾԳՐԱԳԻՐ N 5. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ.....61-63

4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ.....64

5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆԸ.....65

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Ծաղկաձորի համայնքապետարանը, նպատակ ունենալով արձագանքել համայնքի բնակչությանը հանդիպող յուրահատուկ սոցիալական մարտահրավերներին, միաժամանակ խթանելով բնակիչների մասնակցությունը և ներգրավվածությունն այդ հարցերի նույնականացման և դրանց արձագանքման գործընթացում՝ նախաձեռնեց Ծաղկաձոր համայնքի՝ համայնքային սոցիալական ծրագրի (այսուհետ՝ ՀՍԾ) մշակման աշխատանքները՝ համայնքային կառույցների և համայնքի բնակիչների մասնակցությամբ:

Մասնավորապես, ՀՍԾ հենքով համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպումը դիտարկելով որպես համայնքային մակարդակում սոցիալական ծառայությունների պլանավորման գործիք, որը միտված է լրացնելու պետական և հասարակական սեկտորներում սոցիալական ոլորտի ծառայությունների (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն) իրավասություններից դուրս մնացած հարցերի լուծումը, որոնք սոցիալական խնդիրներ են առաջացնում բնակչության համար: Նմանատիպ խնդիրների արդյունավետ լուծման համար սույն ՀՍԾ-ն հիմնվում է սոցիալական խնդիրների լուծման հարցում պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության գործողությունների համատեղման ու ներդաշնակեցման սկզբունքի վրա:

Այդ նպատակով՝ համաձայն «Համայնքային սոցիալական ծրագրերի մշակման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2025 թվականի նոյեմբերի 23-ի N 150-Ն հրամանի կարգավորումների՝ ձևավորվել է աշխատանքային խումբ, ստեղծվել է սոցիալական հանձնաժողով, որոնցում ներառվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի, համայնքի ավագանու, ՄՄԾ Հրազդանի տարածքային կենտրոնի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Աշխատանքային խումբը ուսումնասիրել և վեր է հանել Ծաղկաձոր համայնքի և դրա առանձին բնակավայրերի սոցիալական կարիքները, ռեսուրսները, սահմանել կարիքների առաջնահերթությունը և մշակել է Ծաղկաձոր համայնքի սոցիալական ծրագիրը:

Սույն փաստաթղթում ամփոփված են համայնքային քննարկումների, հանդիպումների ընթացքում նույնականացված առավել նշանակալի խնդիրներն ու դրանց արձագանքման ծրագրերը:

ՀՍԾ-ով նախատեսված ենթածրագրերից բխող սոցիալական աջակցությունները տրամադրվելու են համաձայն Ծաղկաձոր համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու սահմանված չափորոշիչների:

1.ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1. Համայնքի մասին ընդհանրական տեղեկատվությունը

Ծաղկաձոր համայնք

Բնակչություն՝ 8093

Ծաղկաձոր համայնքում ընդգրկված են հետևյալ բնակավայրերը՝

Ծաղկաձոր

Մեղրաձոր-Գոռգոչ

Աղավնաձոր

Մարմարիկ

Արտավազ - Փյունիկ

Հանքավան

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Ծաղկաձոր համայնք (Կոտայքի մարզ) հարմարավետ կուրորտային համայնք է՝ 8093 բնակչությամբ: Այն գտնվում է Թեղենիս լեռան արևելյան լանջին, ծովի մակարդակից միջինը 1841մ բարձրության վրա: Մայրաքաղաք Երևանից Ծաղկաձոր համայնքը գտնվում է 60 կմ հեռավորության վրա: Ծաղկաձորից հյուսիս և հարավ ձգվող զառիթափ լեռնաշղթաները ծածկված են անտառներով:

ԾԱՂԿԱՁՈՐ ՔԱՂԱՔ

Մակերեսը – 1618.29

բնակչության թիվը – 1856

ներկայիս անվանումը – Ծաղկաձոր

պատմական անվանումները – Կեչառոյք,Դարաչիչակ,Ծաղկունյաց ձոր

հեռավորությունը մայրաքաղաքից - 60կմ

բնակչության կազմը – հայեր, ռուսներ, եզդիներ

կրթական հաստատություններ – միջնակարգ դպրոց, նախադպրոցական ուսումնական հաստատություն, արվեստի դպրոց

արտադրական ձեռնարկություններ – չկա

բնակչության հիմնական զբաղմունքը – զբոսաշրջություն /հյուրատներ,հյուրանոցներ/:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ծաղկաձորի անունն արդեն իսկ հուշում է, որ այն հնուց ի վեր գրավիչ է եղել որպես բնակավայր և հանգստավայր:

«Ծաղիկների ձոր»-ում (ինչ բառացի նշանակում է քաղաքի անունը) մարդը բնակություն է հաստատել դեռևս Ք.ա. III-V դդ: Ծաղկունյաց լեռների հարավ-արևելյան մասում ընկած գեղատեսիլ հովտի անտառներում որսի են դուրս եկել հայոց արքաները և նախարարները (իշխանները): Արտոնյալ դասին տեղանքը հրապուրել է իր մեղմ, առողջարար կլիմայով: Դարեդար Ծաղկաձորը մնացել է իշխանների տիրապետության տակ:

Վաղ միջնադարում (IV — Vդդ.) այս հողերը պատկանել են հայոց թագավորի կալվածքները տնօրինող Վարաժնունի տոհմին: VIդ.-ում հովիտն անցավ հայկական ազդեցիկ Կամսարական տոհմի տիրապետության տակ, որը սերվել էր Իրանի 7 մեծագույն տներից մեկի՝ Կարին-Պահլեվիդներից: Կամսարական տոհմի հետնորդ, Պահլավունի տոհմի առաջնորդ Գրիգոր Մագիստրոսը 1033թ. հրամայեց Ծաղկաձորում կառուցել եկեղեցի, որը կոչեցին Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով: Այսպես հիմնվեց Կեչառիս վանական համալիրը՝ հովտի իրական գանձը:

XVIIդ. սկզբին քոչվորական ցեղերը, գրավելով «Ծաղիկների ձորըե, տեղանքը կոչեցին Դարաչիչագ (քաղաքը կրկին Ծաղկաձոր վերանվանվեց 1947թ-ին): Իսկ երբ Արևելյան Հայաստանը միացավ ռուսական կայսրությանը (1828թ.), Ծաղկաձորը մտավ Էրիվան նահանգի մեջ: Այդ տարիներին Ծաղկաձորում բնակություն հաստատեցին հազարավոր հայ գաղթականներ Արևմտյան Հայաստանից և Պարսկաստանից: Այստեղ իր ամառային նստավայրերը սկսեց կառուցել արդեն նահանգային հասարակության սերուցքը: Քաղաքը պահպանեց իր հայտնի հանգստավայրի կարգավիճակը նաև խորհրդային իշխանության օրոք: Ծաղկաձորում հանգստանում էին ոչ միայն Հայաստանի քաղաքացիները,այլև այստեղ գալիս էին ԽՍՀՄ ողջ տարածքից: Հովտում գործում էին երկու տասնյակ պիոներական ճամբարներ, հանգստյան տներ: Ծաղկաձորը տեղակայված է նույն բարձրության վրա, ինչ Մեխիկոն: Ուստի Մեքսիկայի մայրաքաղաքում կայանալիք՝ 1968թ.-ի Ամառային Օլիմպիական խաղերի նախաշեմին հենց Ծաղկաձորում կառուցվեց ԽՍՀՄ գլխավոր սպորտային համալիրը: Այստեղ օլիմպիադաներին և աշխարհի առաջնություններին են պատրաստվել աշխարհի տարբեր երկրների հավաքականները: Իսկ երբ 1972թ.-ին Թեղենիս լեռան լանջերին կառուցվեց ճոպանուղին, Ծաղկաձորը հայտնի դարձավ նաև որպես լեռնադահուկային կուրորտ: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո քաղաքը արագ կերպով հաղթահարեց ճգնաժամը և դարձավ անկախ Հայաստանի և Հարավային Կովկասի առաջնակարգ զբոսաշրջության կենտրոններից մեկը:

Այսօր Ծաղկաձորը ժամանակակակակից հանգստավայր է՝զարգացած տուրիստական ենթակառուցվածքով, հիասքանչ շրջակա միջավայրով և անվտանգության բարձր մակարդակով: Այն

հարմարավետ կուրորտային քաղաք է, որն առաջարկում է համաշխարհային չափանիշներին համապատասխան ծառայություններ: Քաղաքը սերտ կապեր է հաստատել լեռնադահուկային տուրիզմի համաշխարհային կենտրոնների հետ:

Վերջին տարիներին քաղաքում վերակառուցվեցին ու կառուցվեցին մոտ 60 և ավելի ժամանակակից հանգստյան տներ և հյուրանոցներ, 50-ից ավելի հյուրատներ, արդիականացվեցին նաև սպասարկման ոլորտի ենթակառուցվածքները: Եվ քաղաքը վերստին ձեռք է բերել հանրապետության զբոսաշրջության կարևոր կենտրոններից մեկի համբավն ու հեղինակությունը: Այստեղ իրենց հանգիստն են անցկացնում հազարավոր զբոսաշրջիկներ աշխարհի տարբեր երկրներից, միաժամանակ, այստեղ, ինչպես նախկինում, անց են կացվում բարձր մակարդակի գիտաժողովներ, տնտեսական համաժողովներ և զանազան հավաքներ:

ՄԵՂՐԱՁՈՐ ԳՅՈՒՂ

մակերեսը - 12429 հա

Բնակչության թիվը – 2902

ներկայիս անվանումը – Մեղրաձոր

պատմական անվանումները - Թեժառույք, Թայչարուխ

հիմնադրման ժամանակաշրջանը -1830թ

Հեռավորությունը մայրաքաղաքից - 60կմ

Բնակչության կազմը – հայեր, ռուսներ

Օգտակար հանածոներ - ոսկի, պղինձ, նեֆելինային սիենիտների 18 քիմիական նյութերով, ալյումին

Կրթական հաստատություններ – միջնակարգ դպրոց, նախադպրոցական ուսումնական հաստատություն

Մշակութային հաստատություններ - մարզամշակութային կենտրոն

Արտադրական ձեռնարկություններ – հանքարդյունաբերություն, գործում է «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ-ն:

Բնակչության հիմնական զբաղմունքը - գյուղացիական տնտեսություն է /անասնապահություն , հողագործություն և մեղվաբուծություն /:

Հոգևոր կառույցներ - Սուրբ Աստվածածին եկեղեցի, վանք /1190 թվական/

Պատմամշակութային հուշարձաններ - Մեծ հայրենականում զոհվածների հուշարձան

Համայնքի մասին գրքի առկայություն - առաջին գիրքը <<Արծափ-Մեղրաձոր>> 2006թ. Հեղինակ պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Իգիթ Ղարիբյան, երկրորդ գիրք <<Մեղրաձոր>> 2008թ. հեղինակ՝ մանկավարժ Ալեքսան Հարությունյան

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մեղրաձո'րը սարերի, ձորերի, կարկաչուն աղբյուրների, ու թավուտ անտառների գյուղ է:

Գորշ են սարերը, գորգանման անտառները, անտառամերձ գոտու և տեսարժան վայրերի առկայությունը տալիս է տուրիզմի զարգացման հնարավորություն:

Գյուղը գտնվում է Փամբակի և Ծաղկունյաց լեռնազանգվածների հովտում, Մարմարիկ և Մեղրաձոր գետերի /Հրազդանի աջակողմյան վտակներ/ դելտայում, ծովի մակերեսից 1800մ բարձրության վրա: Փամբակի հարավահայոց լանջերը լերկ են, ժայռոտ ու կտրտված: Լանջերի ընդերքը հարուստ է ոսկով, պղնձով և նեֆելինային սիենիտների 18 քիմիական նյութերով, ալյումինը գերակշիռ է: Մեղրաձորում գործում է ոսկու հանքը 1987թվականից:

Համայնքի պատմական անվանումներից է Թեժառույք և Թայչարուխ:

Թեժառույք կոչվել է անտիկ ժամանակներից մինչև 17-րդ դարի սկիզբը Մարմարիկ Մեղրաձոր թեժ գիծ արագահոս գետերի դելտայում գտնվելու համար: Անվան արմատներն են <<Թեժ>> և <<Առու>> բառերը:

Թայչարուխ կոչվել է 17-րդ դարի կեսերից մինչև 1946թ: Պարսից Աիրգունա-խանը դեպի Թուրքահայաստան մի քանի արշավանք է կատարել և մուսուլման բնակչությանը բռնագաղթեցրել անմարդաբնակ հայկական տարածքներ: Թեժառույքում հաստատվել են թուրք-կարակալպակներ, որոնք էլ նոր բնակավայրին տվել են իրենց հնչմամբ Թայչարուխ անունը: Անունն առաջացել է թուրքերեն <<Թայ>>-զույգ և <<Չայ>>-գետ բառերի բարդացումից, որ նշանակում է զույգ գետերի արանքում գտնվող բնակավայր:

Գյուղը հիմնադրվել է 1830 թվականին: Գյուղը հայերով կրկին վերաբնակեցվել է 1830 թվականի մայիսին տաճկահայաստանի Բայազետի փաշայության Արծափ գյուղից արտագաղթածներով /52 ծուխ, 336 շունչ/:

Մեղրաձոր- ՀՍՍՀ գերագույն խորհրդի 30.05.1946թ. որոշմամբ, ի թիվս հանրապետության բազում այլ բնակավայրերի, Թայչարուխը վերանվանվեց Մեղրաձոր:

Համայնքում առկա է թվով վեց բազմաբնակարան շենքեր, 154 բնակարանով, որում ապրում են հիմնականում դրսեկ հայեր, և 25 ծուխ Ադրբեջանից փախստական հայեր:

Գյուղում գործում են հիմնանորոգված դպրոցը 360 աշակերտով, 33 ուսուցչով, մանկապարտեզը՝ 12 հաստիքով 63 երեխայով, մարզամշակութային կենտրոնը՝ 12 հաստիքով, որտեղ գործում է դաշնամուրի, դուդուկի, դհոլի, պարի, ձյուդո ըմբշամարտի խմբակներ, որտեղ հաճախում են 100 աշակերտ: Գյուղապետարանի աշխատակամը 13 հաստիք, որից քաղաքական պաշտոն՝ 1 համայնքի ղեկավար՝ հայցողական պաշտոններ 2, համայնքային ծառայողներ 5, տեխնիկական սպասարկողներ 5:

Գործում է կապիտալ նորոգված բժշկական ամբուլատորիան 11.75 հաստիքով, 2 բժիշկներով:

Գյուղը տվել է գիտության նվիրյալներ 10 գիտնական, որոնցից 4-ը դոկտորի, 6-ը գիտության թեկածուի գիտական աստիճան ունեն, 2-ը պրոֆեսորի կոչումով:

Գյուղի դիմաց, 2կմ անտառապատ մի հրվանդանի վրա 1190-ականներին վրացահայ իշխան-զորավար Իվանե Զաքարյանի պատվերով կառուցվել է կաթոլիկ վանք, որը վնասվածքով կանգուն է մինչ օրս:

Գյուղամիջում է սուրբ Աստվածածին եկեղեցու 2 շենքը /առաջինը փայտածածկ մատուռ է եղել/, որը

կառուցվել է 1881թ. և գործել է մինչև 1931թ.: 70 տարի շարունակ նպատակին չի ծառայել, հետո համայնքի ղեկավարի օգնությամբ, բարերարների նվիրատվությամբ և համայնքի բյուջեի միջոցների հաշվին հիմնանորոգվել և օծվել է 2011թ հոկտեմբերի 15-ին:

Գյուղում բնակեցված է 60 տոհմ ու տոհմաճյուղ: Գրվել է 24-ի համառոտ պատմությունը, կազմվել է տոհմածառը:

ԳՈՌԳՈՉ ԳՅՈՒՂ

Բնակչության թիվը – 17

Մեղրաձոր համայնքի վարչատարածքային մաս է կազմում Գոռգոչ փոքր ամառանոցային գյուղը, որի /նախկինում Կորչլու/ ադրբեջանցի բնակչությունը կամովին ադրբեջան արտագաղթեց 1992թ:

ԱՂԱՎՆԱՁՈՐ ԳՅՈՒՂ

Մակերեսը - 3566 հա

Բնակչության թիվը - 1399 մարդ

ներկայիս անվանումը - Աղավնաձոր

պատմական անվանումները -Բաբաքշի

հիմնադրման ժամանակաշրջանը - 1830 թվական

Հեռավորությունը մայրաքաղաքից - 60 կմ

Բնակչության կազմը - հայեր

Օգտակար հանածոներ - գրանիտ

Կրթական հաստատություններ–դպրոց, նախադպրոցական ուսումնական հաստատություն

Մշակութային հաստատություններ - 1

Մարզական հաստատություններ - չկա

Արտադրական ձեռնարկություններ - չկա

Բնակչության հիմնական զբաղմունքը - անասնապահություն, հողագործություն

Հոգևոր կառույցներ - VII դարում կառուցված եկեղեցի:

Համայնքի մասին գրքի առկայություն - չկա

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1830 թվականին գյուղը վերաբնակեցվել է Ալաշկետի Ղազի գյուղից եկած 28 մարդկանցով, որոնք գաղթել էին ռուս-թուրքական պատերազմից հետո:

Գյուղը գտնվում է Փամբակ և Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև: Գյուղում զարգացած է զբոսաշրջությունը, քանի որ այն ունի գեղատեսիլ վայրեր և գործող բազմաթիվ հանգստյան տներ: Համայնքն ունի հերոսական անցյալ: Հայրենական մեծ պատերազմին համայնքից մասնակցել են 300

հոգի, որից 76-ը ետ չեն վերադարձել: Արցախյան պատերազմի առաջին իսկ օրվանից գյուղի երիտասարդներից կազմավորվել է <<Ալաշկերտ>> ջոկատը, որի հրամանատարն էր Զարզանդ Դանիելյանը, ով 1991 թվականին Գետաշենի պաշտպանության մարտերում հերոսաբար զոհվեց: Այժմ նրա անունով է կոչվում Աղավնաձորի միջնակարգ դպրոցը: Արցախյան պատերազմում զոհվեցին նաև Աղավնաձորի զավակներ Անդրանիկ Խաչատրյանը և Արթուր Պետրոսյանը:

ԱՐՏԱՎԱԶ ԳՅՈՒՂ

Մակերեսը – 10638 հա

Բնակչության թիվը - 573

Ներկայիս անվանումը - Արտավազ

պատմական անվանումները - Թաքառլու

հիմնադրման ժամանակաշրջանը - 1950թ.

Հեռավորությունը մայրաքաղաքից - 65 կմ.

Բնակչության կազմը - հայեր

Կրթական հաստատություններ - միջնակարգ դպրոց, նախադպրոցական ուսումնական հաստատություն

Մշակութային հաստատություններ - ակումբ

Մարզական հաստատություններ - չկա

Արտադրական ձեռնարկություններ - չկա

Բնակչության հիմնական զբաղմունքը - գյուղատնտեսություն և անասնապահություն

Հոգևոր կառույցներ - Արտավազ վանք 7-րդ դար

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Նախկինում Թաքյառլու: Գտնվում է Մարմարիկ գետի ափին, Հրազդանից 24 կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս-արևմուտք: Նախկինում միավորված էր Հանքավանի կաթնաանասնապահական տնտեսության հետ: Կլիման առողջարար է, ամառային հանգստի համար օգտակար: Գյուղի դիմաց, Մարմարիկ գետի ձախ ափին կա քանդված եկեղեցի: Մոտակայքում են Արտավազի հին վանքն ու Կարակալա և Ուլաշիկ լքված գյուղերը: Գյուղի տարածքում են գտնվում հանգստյան տներ, ճամբարներ:

ՀԱՆՔԱՎԱՆ ԳՅՈՒՂ

Մակերեսը - 8141 հա

Բնակչության թիվը - 125

ներկայիս անվանումը - Հանքավան

պատմական անվանումները - Միսխանա

հիմնադրման ժամանակաշրջանը - 19-րդ դար

Հեռավորությունը մայրաքաղաքից - 83 կմ

Բնակչության կազմը - հայեր, հույներ, ռուսներ

Օգտակար հանածոներ - մոլիբդեն, ոսկի

Կրթական հաստատություններ - չկա

Բնակչության հիմնական զբաղմունքը - անասնապահություն

Հոգևոր կառույցներ - կաթոլիկ եկեղեցի

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մինչև 1949թ. Միսխանա, Միխայլկովա: Հեռավորությունը մարզկենտրոնից 29 կմ հյուսիս-արևմուտք: Բնակչությունը հիմնականում 1990-1991թթ. Ադրբեջանից բռնագաղթած հայեր են: Զբաղվում են անասնապահությամբ, հացահատիկի մշակությամբ, բանջարաբուծությամբ: Հանքավանը բարձր կլիմայական առողջարան է: Կլիման չափավոր է, ամառը՝ զով, խոնավ, ձմեռը՝ մեղմ, ձյունառատ, երկարատև: Հանքավանի աղբյուրների ջրերն իրենց քիմիական կազմով նման են եսենտուկյան ջրերին: Հանքավանում բուժում են ստամոքսի, աղիքների, լյարդի, լեղապարկի և ենթաստամոքսային գեղձի հիվանդություններ: Գործում են առողջարաններ և հանգստյան տներ:

ՄԱՐՄԱՐԻԿ ԳՅՈՒՂ

Մակերեսը - 3144 հա

Բնակչության թիվը - 813

ներկայիս անվանումը - Մարմարիկ

պատմական անվանումները - Փաշի գյուղ

հիմնադրման ժամանակաշրջանը -1915թ.

Հեռավորությունը մայրաքաղաքից - 62 կմ

Բնակչության կազմը - հայեր, եզդիներ

Կրթական հաստատություններ - միջնակարգ դպրոց

Բնակչության հիմնական զբաղմունքը - անասնապահություն և գյուղատնտեսություն

Հոգևոր կառույցներ - Սուրբ Հովհաննես եկեղեցի

Պատմամշակութային հուշարձաններ - 1945թ.հայրենական պատերամում զոհված զինվորների հիշատակին կառուցված հուշարձան, Արցախյան պատերազմում և 1915թ-ի ցեղասպանության նահատակների հիշատակին կառուցված հուշատախտակ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Մարմարիկ գյուղը գտնվում է Փամբակ և Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև, Մարմարիկ գետի հովտում, Հրազդանից 12 կմ հյուսիս-արևմուտք: Մարմարիկի սարերը հայտնի են իրենց սառնորակ աղբյուրներով, որը բավարարում է գյուղին 100 տոկոսով: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ,

հացահատիկի, կարտոֆիլի, կաղամբի, մշակությամբ: Գյուղում պահպանվել է Սուրբ Հովհաննես եկեղեցին: Գյուղի ջրերով սնվում է նաև Մեղրաձոր գյուղը: Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով:

ՓՅՈՒՆԻԿ ԳՅՈՒՂ

Բնակչության թիվը – 410

Բնակչության կազմը - հայեր

Նախկինում Ախունդով: Մինչև 90-ական թթ. գյուղի բնակիչների հիմնական մասը կազմում էին այլազգիներ:

1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Աղյուսակ N 1

Համայնքի սեռատարիքային կազմի վերաբերյալ տվյալների

Տվյալը		Ժամանակահատվածը՝		
		01.01.2025թ.	01.01.2026թ.	
1.	Մշտական բնակչության թիվը, որից՝	7732	8093	
1 1	Արական	3967	4146	
1 2	Իգական	3765	3947	
1 3	մինչև 18 տարեկան, որից՝	1777	1828	
1 3 1.	Արական	920	952	
1 3 2.	Իգական	857	876	
1 4	65-75 տարեկաններ, որից՝	741	832	

1 4 1.	Արական	330	365	
1 4 2.	Իգական	411	467	
1 5	75-ից բարձր, որից՝	289	309	
1 5 1.	Արական	106	106	
1.5.2	Իգական	183	203	

Աղյուսակ N 2

Համայնքի սոցիալ-ժողովրդագրական կազմի վերաբերյալ այլ տվյալների

Տվյալը		Ժամանակահատվածը՝ 01.01.2026թ.-ի դրությամբ
2.	Տնային տնտեսությունների թիվը, հաշվառված[5]	2066
2.1.	Մշտական տնային տնտեսությունների թիվը, որոնք մի տարուց ավել մշտապես բնակվում են համայնքում	1871
2.2.	Փաստացի բնակվող տնային տնտեսությունների թիվը[5]	1765
3.	Աշխատունակ տարիքի անձանց թիվը, որից՝	4905
3.1.	Կանայք	2298
3.2.	Տղամարդիկ	2607
4.	Աշխատանք փնտրող անձանց թիվը, որից՝	530
4.1.	Կանայք	305
4.2.	Տղամարդիկ	225

5.	Գործազուրկ անձանց թիվը, որից՝	240
5.1	Կանայք	150
5.2	Տղամարդիկ	90
6.	Ժամանակավոր աշխատանքի մեկնած (մեկնող) անձանց թիվը, որից՝	650
6.1.	Կանայք	300
6.2.	Տղամարդիկ	350
7.	Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը, որից՝	196
7.1.	Կանայք	93
7.2.	Տղամարդիկ	103
7.3.	Հաշմանդամության 1-ին խումբ կամ ֆունկցիոնալության խորն աստիճանի սահմանափակում ունեցող անձանց թիվը	18
7.4.	Հաշմանդամության 2-րդ խումբ կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակում անձանց թիվը	85
7.5.	Հաշմանդամության 3-րդ խումբ կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակում անձանց թիվը	93
8.	Հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը	15
9.	Հաշմանդամություն չունեցող, սակայն հոգեկան կամ մտավոր առողջության խնդիր ունեցող անձանց թիվը, որից՝	3
9.1.	Մինչև 18 տարեկան	0
9.2.	18 տարեկանից բարձր	3
10.	Ընտանեկան կամ կենցաղային բռնության դեպքերի թիվը	1
11.	Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում ներառված ընտանիքների թիվը,	75

	որից՝	
11.1.	Ծայրահեղ անապահով կամ անապահովության նպաստ ստացող ընտանիքների թիվը	33
11.2.	Չափավոր անապահով ընտանիքների թիվը	13
11.3.	Միջին անապահով ընտանիքների թիվը	8
11.4.	Անապահով ընտանիքների թիվը	11
12.	Ընտանիքների թիվը՝ համաձայն Կառավարության 2025 թվականի հունվարի 9-ի N 27-Ն որոշմամբ սահմանված խնամառության խմբերի	
13.	Բազմազավակ ընտանիքների թիվը (4 և ավելի երեխա ունեցող)	31
14.	Բնակիչների մեծամասնությունից սոցիալապես մեկուսացած ընտանիքների թիվը	
15.	Անօթևանների կամ որոշակի բնակության վայր չունեցողների թիվը	
16.	Միայնակ չաշխատող կենսաթոշակառուների թիվը	25
17.	Միածնող ընտանիքների թիվը	12
18.	Բռնի տեղահանվածների թիվը, որից՝	263
18.1.	Անձ	263
18.2.	Ընտանիք	79
19.	Փախստականների թիվը, որից՝	
19.1.	Անձ	
19.2.	Ընտանիք	
20.	Ապաստան հայցողների թիվը, որից՝	
20.1.	Անձ	
20.2.	Ընտանիք	
21.	Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների թիվը	0

22.	Առանց ծնողական խնամքի մնացած և համայնքում գտնվող երեխաների թիվը, որից՝	1
22.1.	Խնամակալության կամ հոգաբարձության ներքո գտնվող երեխաների թիվը	1
22.2.	Խնամատարության հանձնված երեխաների թիվը	0
23.	Վերջին մեկ տարում հարկադիր վերադարձած միգրանտ ունեցող ընտանիքների թիվը	19
24.	Վերջին մեկ տարում երկարաժամկետ միգրանտ ունեցող ընտանիքների թիվը	25
25.	Վերջին մեկ տարում ազատազրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառող հիմնարկներից վերադարձած անձանց թիվը, որից՝	2
25.1.	Կանայք	
25.2	Տղամարդիկ	2
26.	Նախորդ վեց ամիսների ընթացքում հրատապ արձագանք պահանջող իրավիճակներից (այդ թվում՝ արտակարգ դրության կամ ռազմական դրության) տուժած անձանց կամ ընտանիքների թիվը	

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ

Աղյուսակ N 3

Համայնքի տրանսպորտային կապի

Տրանսպորտային հաղորդակցության նկարագիրը (առկայությունը, մեկնման կամ ժամանման հաճախականությունը)	
Տրանսպորտային կապը մարզկենտրոնի հետ	Ծաղկաձոր-Հրազդան և հակառակ ուղղությամբ Երթուղու երկարությունը – 7 կմ Երթի տևողությունը՝ 10 րոպե Սկզբնակետ –Ծաղկաձոր քաղաքի հրապարակ Վերջնակետ – Հրազդան, Միկրոշրջան թաղամաս Տրանսպորտային միջոցների քանակը՝ 1 Երթերի կատարման օրերը՝ շաբաթվա բոլոր օրերին Օրվա ընթացքում կատարվող երթերի քանակը՝ 20
Տրանսպորտային կապը մայրաքաղաքի հետ	Ծաղկաձոր-Երևան և հակառակ ուղղությամբ Երթուղու երկարությունը - 57 կմ

	Երթի տևողությունը՝ 1 ժամ 5 րոպե Սկզբնակետ –Ծաղկաձոր քաղաքի հրապարակ Վերջնակետ – Երևանի մետրոյի «Երիտասարդական կայարան» ե/կ Տրանսպորտային միջոցների քանակը՝ 2 Երթերի կատարման օրերը՝ շաբաթվա բոլոր օրերին Օրվա ընթացքում կատարվող երթերի քանակը՝ 8 **Մեղրաձոր բնակավայր- Երևան և հակառակ ուղղությամբ** Երթուղու երկարությունը - 66 կմ Երթի տևողությունը՝ 1 ժամ 15 րոպե Սկզբնակետ –Մեղրաձոր բնակավայր, 3-րդ փողոց 68/6 շենքի հարակից տարածք /կանգառ/ Վերջնակետ – Երևանի մետրոյի «Երիտասարդական կայարան» ե/կ Տրանսպորտային միջոցների քանակը՝ 1 Երթերի կատարման օրերը՝ շաբաթվա բոլոր օրերին Օրվա ընթացքում կատարվող երթերի քանակը՝ 1
Ներհամայնքային տրանսպորտը (բոլոր բնակավայրերում առկա)	Բնակավայրերից քաղաք Ծաղկաձոր երթուղի առկա չէ, ներհամայնքային երթուղի գործում է Հանքավան, Արտավազ, Փյունիկ, Գոռգոչ, Մեղրաձոր, Մարմարիկ ուղղություններով:
Տրանսպորտային կապը հարևան համայնքների հետ	**քաղաք Ծաղկաձոր -Հրազդան և հակառակ ուղղությամբ** Երթուղու երկարությունը – 7 կմ Երթի տևողությունը՝ 10 րոպե Սկզբնակետ –ք. Ծաղկաձոր Վերջնակետ –ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. Տրանսպորտային միջոցների քանակը՝ 1 Երթերի կատարման օրերը՝ շաբաթվա բոլոր օրերին Օրվա ընթացքում կատարվող երթերի քանակը՝ 20 Շրջապտույտների քանակը՝ 10 Մեկնման կամ ժամանման հաճախականությունը՝ 1 ժամ

	Մեղրաձոր-Հրազդան և հակառակ ուղղությամբ Երթուղու երկարությունը – 14 կմ Երթի տևողությունը՝ 40 րոպե Սկզբնակետ – ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. Վերջնակետ –գ. Մեղրաձոր, 3-րդ փողոց 68/6 շենքի հարակից տարածք Տրանսպորտային միջոցների քանակը՝ 1 Երթերի կատարման օրերը՝ շաբաթվա բոլոր օրերին Օրվա ընթացքում կատարվող երթերի քանակը՝ 12, Շրջապտույտների քանակը՝ 6 Մեկնման կամ ժամանման հաճախականությունը՝ 1-2 ժամ **Հանքավան - Հրազդան և հակառակ ուղղությամբ** Երթուղու երկարությունը – 31 կմ Երթի տևողությունը՝ 50 րոպե Սկզբնակետ – ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. Վերջնակետ – Հանքավան Տրանսպորտային միջոցների քանակը՝ 2 Երթերի կատարման օրերը՝ շաբաթվա բոլոր օրերին Օրվա ընթացքում կատարվող երթերի քանակը՝ 6, Շրջապտույտների քանակը՝ 3 Մեկնման կամ ժամանման հաճախականությունը՝ 4-5 ժամ **Արտավազ, Փյունիկ - Հրազդան և հակառակ ուղղությամբ** Երթուղու երկարությունը – 19 կմ Երթի տևողությունը՝ 55 րոպե Սկզբնակետ – ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. Վերջնակետ – Արտավազ, գյուղամիջյան հատված Տրանսպորտային միջոցների քանակը՝ 2 Երթերի կատարման օրերը՝ շաբաթվա բոլոր օրերին Օրվա ընթացքում կատարվող երթերի քանակը՝ 8, Շրջապտույտների քանակը՝ 4 Մեկնման կամ ժամանման հաճախականությունը՝ 4-5 ժամ

	Աղավնաձոր - Հրազդան և հակառակ ուղղությամբ Երթուղու երկարությունը – 9 կմ Երթի տևողությունը՝ 15 րոպե Սկզբնակետ – ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. Վերջնակետ – Աղավնաձոր, գյուղամիջյան հատված Տրանսպորտային միջոցների քանակը՝ 2 Երթերի կատարման օրերը՝ շաբաթվա բոլոր օրերին Օրվա ընթացքում կատարվող երթերի քանակը՝ 16, Շրջապտույտների քանակը՝ 8 Մեկնման կամ ժամանման հաճախականությունը՝ 1-2 ժամ

Աղյուսակ N 4

Համայնքի՝ սոցիալական պատասխանատվության ուղղությամբ տնտեսական ներուժի

Համայնքի՝ սոցիալական պատասխանատվության ուղղությամբ տնտեսական ներուժի նկարագիրը	
Միջին և խոշոր ընկերությունները, որոնք ունեն ներուժ սոցիալական պատասխանատվության ուղղվածության ծրագրեր իրականացնելու համար	1. «ՄԵՂՐԱՁՈՐ ԳՈԼԴ» ՍՊԸ
Սոցիալական պատասխանատվության ուղղվածության ծրագրեր իրականացնող ընկերությունները. Վերջին երեք տարում սոցիալական պատասխանատվության ուղղվածության ծրագրեր իրականացնելու փորձառությամբ ընկերությունները	
Համայնքի հաշվեկշռում առկա չօգտագործվող, սակայն սոցիալական ծրագրերի նպատակով օգտագործման ենթակա շինությունները	Առկա չեն

Աղյուսակ N 5

Սոցիալական բնագավառի ծառայությունների

5.1 Առողջապահական և կրթական կազմակերպությունները	Անվանումը
Մանկապարտեզները կամ նախադպրոցական ուսումնական հաստատությունները	«Ծաղկաձոր քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ «Աղավնաձոր գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ «Մեղրաձոր գյուղի Լևոն Գալստյանի անվան նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ «Արտավազ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ
Բժշկական կենտրոնները	Առկա չեն
Առողջության առաջնային պահպանման կենտրոնները և ամբուլատորիաները	«Ծաղկաձոր քաղաքի բուժամբուլատորիա» ՊՈԱԿ «Մեղրաձորի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ

Արտադպրոցական կազմակերպությունները, այդ թվում՝ մշակույթի (արվեստի) դպրոցներ, սպորտդպրոցներ, այլ	Կրթական (լրացուցիչ, արտադպրոցական) Մարզական. Ծաղկաձորի լեռնադահուկային սպորտի մանկապատանեկան դպրոց *Կրթամշակութային.* Ծաղկաձոր համայնքի «Ծաղկաձորի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ (համայնքային ենթակայության) Մշակութային. Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ Գործում է համայնքային ենթակայության երկու գրադարան՝ քաղաք Ծաղկաձորում և Մեղրաձոր բնակավայրում: Աղավնաձոր բնակավայրում գործում է «Ալտերնատիվ երիտասարդական կենտրոն» (ՀՀ ԿԳՄՄՆ ենթակայության)
Համայնքում բարձրագույն ուսումնական հաստատությունները	Առկա չեն
Համայնքում նախնական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները	Առկա չեն
Այլ	Առկա չեն

5.2 Սոցիալական պաշտպանության ոլորտում գործող կազմակերպությունները, անհատները և նրանց գործունեության նկարագիրը	
Համայնքում սոցիալական ծառայություններ տրամադրող պետական մարմինները և կազմակերպությունները (ՄՍԾ տարածքային կենտրոն, պետական ոչ առևտրային կազմակերպություն, այլ) և նրանց կողմից տրամադրվող հիմնական	Միասնական սոցիալական ծառայության Հրազդանի տարածքային կենտրոն (ՄՍԾ, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության), ՄՍԾ Հրազդանի տարածքային կենտրոնի

ծառայությունները՝ ըստ թիրախային խմբերի	**սոցիալական համագործակցության համակարգող խորհուրդ** (գործում է հասարակական սկզբունքով), **Ծաղկաձոր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող հանձնաժողով** (քաղաքացիների կողմից համայնքապետարանի աշխատակազմ ներկայացվող սոցիալական աջակցության խնդիրներով հասցեագրված դիմումները ուսումնասիրելու նպատակող ստեղծված մշտական գործող հանձնաժողով), **Ծաղկաձոր համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով**
Սոցիալական ծառայություններ տրամադրող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները և նրանց կողմից տրամադրվող հիմնական ծառայությունները կամ իրականացվող ծրագրերը՝ ըստ թիրախային խմբերի	Առկա չեն
Համայնքում պետական դրամաշնորհով սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները և նրանց կողմից տրամադրվող հիմնական ծառայությունները կամ իրականացվող ծրագրերը՝ ըստ թիրախային խմբերի	Առկա չեն
Համայնքում սոցիալական ծառայություններ տրամադրող կամ սոցիալական աջակցության կամ շահապաշտպան ծրագրեր իրականացնող հասարակական կամ բարեգործական (այդ թվում՝ կրոնական) կազմակերպությունները և նրանց կողմից տրամադրվող հիմնական ծառայությունները կամ իրականացվող ծրագրերը՝ ըստ թիրախային խմբերի	1. Հայ Առաքելական Եկեղեցու Կոտայքի թեմի առաջնորդարան (Թեմի Սոցիալական կենտրոնի «Սոցիալական աջակցություն թեմի ծայրահեղ անապահով ընտանիքներին» ծրագիր) 2. «Մեղրաձոր Գոլդ» ՍՊԸ Իրականացնում է սոցիալական աջակցության ծրագրեր, սոցիալապես անապահով ընտանիքի կարիքների գնահատում և աջակցության տրամադրում:

	«Կայուն Զարգացման Հայկական Հիմնադրամ» Իրականացնում է անվճար կրթական ծրագիր՝ ուղղված կանանց մասնագիտական կարողությունների զարգացմանն ու զբաղվածության խթանմանը: Ծրագրերը նախատեսված են Արցախից բռնի տեղահանված կանանց և պատերազմում զոհված կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքների կանանց համար: Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի հայաստանյան գրասենյակ Իրականացնում է «Իրավաբանական աջակցություն բռնի տեղահանված անձանց» ծրագիր: Տրամադրվում է անվճար իրավաբանական խորհրդատվություն՝ Փաստաթղթերի ձեռքբերում և վերականգնում Աշխատանքային ստաժի և կենսաթոշակի նշանակման խնդիրներ Սոցիալական աջակցության ծրագրերին առնչվող հարցեր Անհրաժեշտության դեպքում տրամադրվում է նաև իրավաբանական օգնություն, ներառյալ՝ Անհրաժեշտ փաստաթղթերի կազմում Ներկայացուցչություն դատարանում **«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ** ՄԱԿ-ի Ժողովրդավարության հիմնադրամի (UNDEF) ֆինանսավորմամբ իրականացնում է ««Հայաստանում ժողովրդավարական մասնակցության և կլիմայական առումով «խելացի» գյուղատնտեսության խթանում»» ծրագիր:

(նշել նաև, թե արդյոք առկա է համագործակցություն այդ կազմակերպությունների հետ)	
Համայնքում սոցիալական խմբերի ներկայացուցիչների ոչ ֆորմալ նախաձեռնությունները և նրանց կողմից տրամադրվող հիմնական ծառայությունները կամ իրականացվող ծրագրերը՝ ըստ թիրախային խմբերի (նշել նաև, թե արդյոք առկա է համագործակցություն վերջիններիս հետ)	Համայնքում սոցիալական խմբերի ներկայացուցիչների ոչ ֆորմալ նախաձեռնություններ չկան, ակտիվանում են հիմնականում հրատապ արձագանք պահանջող իրավիճակներից (այդ թվում՝ արտակարգ դրության կամ ռազմական դրության) տուժած անձանց կամ ընտանիքներին աջակցելու պարագայում:
Համայնքի բնակիչներին աջակցող անհատ բարերարները, բարեգործական կամ մասնագիտական խմբերը, նրանց գործունեության հիմնական ուղղությունները (նշել նաև, թե արդյոք առկա է համագործակցություն վերջիններիս հետ)	
Սոցիալական կացարանները կամ բնակարանները (նշել գտնվելու վայրը)	Սոցիալական կացարաններ կամ բնակարաններ առկա չեն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ

Աղյուսակ N 6

Սոցիալական, առողջապահական և կրթական ոլորտների մասնագիտական ներուժը

Ոլորտը	Մասնագետներ	Թվաքանակը (եթե տեղեկատվությունն առկա է)
Սոցիալական	1. Սոցիալական աշխատող	1
	2. Սոցիալական սատարող	0

	3. Սոցիալական պատրոնաժ իրականացնող մասնագետ	0
	4. Սոցիալական խնամք իրականացնող կամ սոցիալական սպասարկման այլ մասնագետ	0
Հոգեբանական	5. Հոգեբան	3
	6. Մանկական հոգեբան	4
	7. Հատուկ հոգեբան	1
	8. Հոգեթերապևտ	0
Բժշկական	9. Վերականգնողաբան	0
	10. Նյարդաբան	0
	11. Հոգեբույժ	1
	12. Բժիշկ	2
	13. Բուժքույր	10
Իրավական	14. Փաստաբան	0
	15. Իրավաբան	1
	16. Իրավախորհրդատու	0
Կրթական-մասնագիտական	17. Կրթական ծրագրերով զբաղվող մասնագետներ, կարիերայի կենտրոնների, մասնագիտական կողմնորոշման գծով մասնագետներ և այլ (օրինակ՝ քոլեջներում և ՄՄԾ տարածքային կենտրոններում, այլ), ծրագրերի համակարգողներ-սուպերվիզորներ, մենթորներ (կենցաղավարման հմտություններ զարգացնող) և այլ մասնագետներ	
Հարբժշկական	18. Կինեզիոլոգ	0
	19. Էրգոթերապևտ	0
	20. Օրթեզիստ	0
	21. Պրոթեզիստ	0
	22. Լոգոպեդ	0
	23. Հատուկ մանկավարժ	0
	24. Սուրդոմանկավարժ	0
	25. Տիֆլոմանկավարժ	0

	26. Արտ-թերապևտ	0
	27. Խաղաթերապևտ	0
	28. Ֆիզիոթերապևտ	0

Մասնագիտական ներուժի թվերն արտացոլում են համայնքում գործող համայնքային, հասարակական և պետական համակարգերի մասնագետներին:

2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Աղյուսակ N 7

Համայնքի սոցիալական կարիքների և ռեսուրսների գնահատման արդյունքների

Հ/Հ	Համայնքի բացահայտված սոցիալական կարիքները՝ ըստ տարբեր խմբերի	Ռեսուրսը
	• Գործազրկության բարձր	ՄՍԾ սոցիալական աշխատանքի և

1.	մակարդակը, սոցիալապես անապահով և աղքատ բնակչություն, ցածր աշխատավարձի առկայությունը:	զբաղվածության կենտրոնի տրամադրած թափուր աշխատատեղերի և համայնքապետարանի կողմից հավաքագրվող թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվություն
2.	• Կոյուղագծերի և ոռոգման ջրի ցանցերի մաշվածությունը:	Համայնքապետարանի համապատասխան բաժնի կողմից տրամադրվող խողովակներ, բանվորական ուժ
3.	• Համայնքի նյութատեխնիկական բազան հզորացնելու համար անհրաժեշտ է ֆինանսական խոշոր միջոցների ներդրում:	Համայնքի նյութատեխնիկական բազայի հզորացման համար՝ • Բազմաֆունկցիոնալ համայնքային կենտրոններ (կրթություն, ժամանց) • Տրանսպորտի բարելավում • Սպորտային և ժամանցային տարածքներ • Սոցիալական ծառայությունների վերազինում • Հարմարեցված միջավայր (թեքահարթակներ և այլն) • Փոքր արտադրամասեր (աշխատատեղեր ստեղծելու համար) • Համայնքային տեխնիկայի համալրում
	ԵՐԵԽԱՆԵՐ • Երեխաների համար ժամանցային կենտրոնների բացակայությունը. Չնայած համայնքում երիտասարդ բնակչության գերակշռող թվին՝ համայնքում երեխաների ժամանցի կազմակերպման հնարավորությունները քիչ են, հատկապես խոսքը վերաբերում է համայնքի տարածքում գտնվող գյուղական բնակավայրերին:	ԵՐԵԽԱՆԵՐ – անհրաժեշտ ռեսուրսներ Մարդկային ռեսուրսներ • Հոգեբաններ • Սոցիալական աշխատողներ • Դասավանդողներ / կամավորներ • Արտադասարանական խմբակների ղեկավարներ Նյութական ռեսուրսներ • Խաղահրապարակներ, սպորտային գույք

4.	• Բուլլինգի առկայությունը. Մանկապարտեզներում և դպրոցներում հանդիպում են (մանկավարժ-երեխա, երեխա-երեխա հարաբերություններում) բուլինգի դեպքեր: • Ծնողավարման հմտությունների պակասը. Համայնքում ծնողների շրջանում նկատելի է ծնողավարման հմտությունների պակաս, որը հաճախ զուգորդվում է իրազեկվածության պակասով, մասնավորապես վարքային խնդիրներ ունեցող երեխաների հետ հաղորդակցման ու դաստիարակության դեպքում: Համայնքում չկան կրթությունից դուրս մնացած երեխաներ, լինում են ռիսկի խմբում հայտնվելու դեպքեր: Երեխաներն ունեն դեմ առ դեմ շփման մոտիվացիայի պակաս, բավական երկար ժամանակ են անցկացնում համացանցում, ցածր է նաև սովորելու մոտիվացիան: • Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ. Ծաղկաձոր համայնքում կա մեկ առանց ծնողական խնամքի մնացած երեխա, որը հանձնվել է խնամակալության: ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՐԻՔՆԵՐ • Աշխատող երեխաներ՝ ավագ դպրոցական տարիքի երեխաներ աշխատում են՝ հաճախ չգրանցվելով հարկային համակարգում գործատուի կողմից: • Հատուկ մասնագետների	• Գրքեր, կրթական նյութեր • Համակարգիչներ, ինտերնետ • Անվտանգ միջավայր (սենյակներ, կենտրոններ) Ինստիտուցիոնալ • Դպրոցներ, մանկապարտեզներ • ՀԿ-ներ (երեխաների իրավունքների պաշտպանություն) • Համայնքային սոցիալական ծառայություններ Ֆինանսական • Պետական կրթական ծրագրեր • Դոնոր կազմակերպություններ • Փոքր դրամաշնորհներ (youth grants)

	ծառայությունները վճարովի են, և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընտանիքները չեն կարողանում վճարել, ինչը վնասում է և՛ երեխայի ֆունկցիոնալությանը, և՛ ընտանիքի կենսագործունեությանը:	
5.	ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ • Կախվածություն ալկոհոլից, ծխախոտից, առցանց խաղերից, որոնք նպաստում են վատ սովորությունների տարածվածությանը: • Զբաղվածության խնդիր. Սահմանափակ աշխատատեղերը երիտասարդների համար գրավիչ և նախընտրելի չեն: Երիտասարդները կարիք ունեն լրացուցիչ կրթական ծրագրերի: Տեսական գիտելիքներն ու հմտությունները գործնականում կիրառելու հնարավորությունները սահմանափակ են, ինչի պատճառով էլ իրենց մասնագիտական գործունեությունը կազմակերպում են համայնքից դուրս: • Ազատ ժամանցի կազմակերպման խնդիր՝ ժամանցի վայրերի՝ սրճարանների, կինոթատրոնի, զբոսայգիների,համերգասրահների պակաս: • Երիտասարդական կենտրոնների բացակայություն. Համայնքային երիտասարդական կենտրոնների բացակայության պատճառով համայնքի երիտասարդները իրենց կարողություններն ու հմտություններն	ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ – անհրաժեշտ ռեսուրսներ Մարդկային • Մենթորներ • Բիզնես խորհրդատուներ • SS և մասնագիտական դասընթացավարներ Նյութական • Coworking տարածքներ • Համակարգիչներ, ինտերնետ • Դասընթացների սրահներ Ինստիտուցիոնալ • Երիտասարդական կենտրոններ • Բիզնես ինկուբատորներ • Քոլեջներ Ֆինանսական • Սկսնակ բիզնեսի դրամաշնորհներ • Պետական զբաղվածության ծրագրեր • Ստաժավորման ծրագրեր

	իրացնում են հիմնականում մայրաքաղաքում: Նմանատիպ կենտրոնները համայնքի երիտասարդության համար կարող են ծառայել ոչ ֆորմալ կրթության և համայնքային տարատեսակ խնդիրները լուծելու հարթակներ: Համայնքի մեկ բնակավայրում գործում է ալտերնատիվ երիտասարդական կենտրոն:	
6.	ՏԱՐԵՑՆԵՐ • Ժամանցի, զբաղվածության խնդիր՝ զբաղվածության բացակայության, և ժամանցի վայրերի պակասի, ինչպես նաև ընտանեկան տարբեր խնդիրների պատճառով առաջանում է անտեսվածության զգացում, ինչը բարձրացնում է տարեցների խոցելիությունը և մեկուսացվածությունը: • Իրազեկվածության խնդիր, տեղեկատվական և իրավաբանական խորհրդատվության պակաս՝ միայնակ տարեցները ունեն իրավաբանական խորհրդատվության կարիք, մասնավորապես, կապված պետության կողմից տրամադրվող աջակցությունների հետ: • Տարեցների համար բժշկական ծառայությունները ոչ միշտ են մատչելի և հասանելի: ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՐԻՔՆԵՐ • Կենսաթոշակառուների թոշակի անկանխիկ լինելը խնդիրներ է ստեղծում այն կանխիկացնելու	ՏԱՐԵՑՆԵՐ – անհրաժեշտ ռեսուրսներ Մարդկային • Խնամակալներ • Բժիշկներ • Սոցիալական աշխատողներ Նյութական • Տարեցների ակումբներ • Տրանսպորտ • Առողջապահական սարքավորումներ Ինստիտուցիոնալ • Սոցիալական աջակցության կենտրոններ • Բժշկական հաստատություններ Ֆինանսական • Պետական թոշակներ • Սոցիալական ծրագրեր • Բարեգործական աջակցություն

	համար, քանի որ տարեցները չունեն անհրաժեշտ հմտություններ, իսկ գյուղական բնակավայրերում ապրող տարեցները պետք է հասնեն կենտրոն՝ կենսաթոշակը ստանալու համար:	
7.	ԿԱՆԱՅՔ • Կանանց «բեռ»-ի ավելացում՝ կանայք ներգրավված են և՛ տան առօրյա, և՛ երեխաների խնամքի իրականացման, և՛ մասնագիտական գործունեության աշխատանքներում: • Բռնության ենթարկված կանանց համար ճգնաժամային կենտրոնի բացակայություն, այս առումով խնդիրներ են առաջանում բռնարարին ընտանիքից առանձնացնելու, ինչպես նաև երեխային և մորը ապահով վայր տեղափոխելու հետ կապված: • Կարծրատիպային մտածելակերպ. Հաճախ կանայք մշակութային-սոցիալական կարծրատիպերի ազդեցության ներքո վախենում են իրենց նկատմամբ բռնության մասին բարձրաձայնել կամ դիմել համապատասխան աջակցող կառույցների:	ԿԱՆԱՅՔ – անհրաժեշտ ռեսուրսներ Մարդկային • Իրավաբաններ • Հոգեբաններ • Սոցիալական աշխատողներ Նյութական • Ապաստարաններ • Վերապատրաստման կենտրոններ Ինստիտուցիոնալ • Կանանց աջակցության ՀԿ-ներ • Իրավապահ մարմիններ Ֆինանսական • Միկրոֆինանսավորում • Կարիերայի զարգացման ծրագրեր
	ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ • Ֆիզիկական միջավայրի մատչելիության խնդիր. տեղաշարժման խնդիրներ ունեցող	ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ Մարդկային • Լոգոպեդներ • Հատուկ մանկավարժներ • Վերականգնող թերապևտներ

8.	անձանց համար թեքահարթակները քիչ են, բացի այդ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձինք չեն կարողանում օգտվել տրանսպորտից կամ ազատ տեղաշարժվել համայնքում: • Զբաղվածության խնդիր. գործատուները խուսափում են աշխատանք առաջարկել հաշմանդամություն ունեցող անձանց: Այս խնդիրը լուրջ մարտահրավեր է նաև մտավոր/հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար: • Ծառայությունների պակաս հաշմանդամություն ունեցող երեխաների/ անձանց, ինչպես նաև նրանց ծնողների համար. վերականգնողական և ցերեկային, այդ թվում նաև սոցիալ-հոգեբանական ծառայությունների պակաս: • Հասարակությունում ինտեգրման խնդիր՝ ֆիզիկական միջավայրի անմատչելիության, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ առկա անհանդուրժողականության, կարծրատիպերի, հաճախ նաև բուլլինգի պատճառով դժվարություններ են առաջանում հասարակությունում ինտեգրվելու գործընթացում: Երեխաները չեն կարողանում հաճախել մշակութային կենտրոններ: Այս առումով առանձնահատուկ անհրաժեշտ է նշել կրթական իրավունքի իրացման խնդիրը: Վերոնշյալ խնդիրները	Նյութական • Թեքահարթակներ • Հատուկ սարքավորումներ • Հարմարեցված տրանսպորտ Ինստիտուցիոնալ • Վերականգնողական կենտրոններ • Ֆինանսական • Պետական նպաստներ • Միջազգային դրամաշնորհներ

	խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող երեխաների մուտքը մանկապարտեզներ և դպրոցներ, ինչպես նաև առաջացնում են դժվարություններ հետագա մասնագիտություն ընտրելու և ստանալու հարցում: • Հատուկ մասնագետների պակաս. համայնքում առկա է երեխաների հետ աշխատող հատուկ մասնագետների պակաս:	
9.	ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ • Բազմազավակ ընտանիքներ. համայնքում բազմազավակ ընտանիքներն առավել անապահով ընտանիքների թվում են. հիմնականում չունեն միջոցներ կոմունալ վճարումների, վարձավճարների կատարման, երեխաների ժամանցի կազմակերպման կամ բարձրագույն կրթության հետ կապված խնդիրները լուծելու համար: • Նպաստառու ընտանիքները. նպաստառու ընտանիքների շրջանում նկատվում է կախվածություն սոցիալական աջակցության ծրագրերից, այդ թվում զբաղվածության ծրագրերում ներգրավման մոտիվացիայի բացակայություն: Հիմնականում այս խմբի ընտանիքների մոտ տեսանելի են աղքատության մշակույթի դրսևորումներ, ընտանիքները նախընտրում են չաշխատել ու նպաստ ստանալ կամ ունենալ	ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ Մարդկային • Սոցիալական աշխատողներ • Զբաղվածության խորհրդատուներ Նյութական • Սնունդ • Հագուստ • Ժամանակավոր կացարաններ Ինստիտուցիոնալ • Սոցիալական ծառայություններ • Աշխատանքի կենտրոններ Ֆինանսական • Նպաստներ • Աշխատանքի խթանման ծրագրեր

	չգրանցված աշխատանք և զուգահեռ օգտվել պետական նպաստներից: ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՐԻՔՆԵՐ • 1. Համայնքում առկա չեն ժամանակավոր կացարաններ՝ անօթևան մնացած անձանց համար: Ավելին, նման կացարաններ չկան նաև հարակից համայնքներում, որոնցից Ծաղկաձոր համայնքը նույնպես կարող էր օգտվել: • 2. Անապահով ընտանիքների ակտիվացման հնարավորությունների, զբաղվածության խթանման ծրագրերի պակաս կա:	
10.	ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ • Ինտեգրման խնդիրներ. Արցախից բռնի տեղահանված բնակչությունը ամբողջությամբ ինտեգրված չէ համայնքում: • Բնակարանային ապահովման խնդիր. տեղահանված անձանց համար հիմնական խնդիրներից է կացարանը, վարձով տների պարագայում բնակվարձերը հիմնականում բարձրացել են: • Աշխատանքի տեղավորման խնդիր. Արցախից բռնի տեղահանված անձինք, տեղի շուկայի պահանջարկին ծանոթ չլինելով, չեն կարողանում լուծել զբաղվածության խնդիրը:	ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐ Մարդկային • Ինտեգրման մասնագետներ • Իրավաբաններ Նյութական • Բնակարաններ • Կահույք, կենցաղային տեխնիկա Ինստիտուցիոնալ • Միգրացիոն ծառայություններ • ՀԿ-ներ Ֆինանսական • Բնակարանային սուբսիդիաներ • Աշխատանքի ծրագրեր
	ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀ	ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

11.	ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ • Պատերազմական գործողությունների մասնակիցների համար սոցիալ-հոգեբանական աջակցության ծրագրերի ոչ գրավիչ լինելը:	Մարդկային • Հոգեբաններ (PTSD) • Բժիշկներ Նյութական • Աշխատանքային հարմար միջավայր Ֆինանսական • Պետական աջակցություն • Բիզնես դրամաշնորհներ
12.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԻՔՆԵՐ/ ԽՆԴԻՐՆԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐ • Աշխատատեղերի սակավություն Ծաղկաձոր համայնքում՝ համայնքի բնակիչները աշխատատեղերի սակավության պատճառով աշխատանք են փնտրում Երևանում, որտեղ աշխատանք գտնելու հնարավորություններն ավելի մեծ են: Վերջին տարիներին գործազրկության մակարդակը նվազել է.ՄՄԾ Զբաղվածության բաժինն առաջարկում է մի շարք ծրագրեր գործազուրկ անձանց: • Թափառող շների խնդիրը. Թափառող շների ստերջացման ծառայությունների ձեռքբերումը ժամանակավոր լուծումներ է առաջարկում: • Ենթակառուցվածքների հետ կապված խնդիրներ. Համայնքի տարածքը կտրտված է, առկա է տրանսպորտային հանգույցի սակավության խնդիր՝ բնակավայրերը համայնքի կենտրոնին կապելու առումով:	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԴԻՐՆԵՐ Մարդկային • Քաղաքաշինարարներ • Տրանսպորտի մասնագետներ Նյութական • Հանրային տրանսպորտ • Ենթակառուցվածքներ Ինստիտուցիոնալ • Համայնքապետարան • Պետական մարմիններ Ֆինանսական • Պետական բյուջե • Միջազգային ծրագրեր

	ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՐԻՔՆԵՐ • Համայնքապետարանի և ենթակա կառույցներում աշխատող մասնագետների համար սոցիալական փաթեթների բացակայությունը: • Երևան գնացող ուսանողների համար տրանսպորտային ծառայության բարձր գինը: • Հոգեբանական առաջին օգնության ծառայությունների բացակայությունը: • Սպասարկման ոլորտի աշխատակիցների՝ բնակչության հետ հաղորդակցման հմտությունների զարգացման անհրաժեշտությունը:	

Աղյուսակ N 8

ՍՈՒՈՐ (SWOT) վերլուծության արդյունքների

Ս - ուժեղ կողմերը կամ ներքին ռեսուրսները	ՈՒ - թույլ կողմերը կամ կարիքները
• Համայնքի աշխարհագրական դիրքը, • համայնքի բարենպաստ բնակլիմայական պայմանները, • համայնքը հանդիսանում է զարգացող զբոսաշրջության կենտրոն, • համայնքի գազաֆիկացվածության աստիճանը, • առևտրի հիմնական օբյեկտների առկայությունը, • սանմաքրման և աղբահեռացման բարձր մակարդակը, • գյուղատնտեսության զարգացման հնարավորությունները, • տեղեկատվությունների հասանելիությունը • Համայնքի երիտասարդների մեծ մասը սովորում է Հայաստանի Հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում, համայնք ունի ավարտած մասնագետների մեծ պոտենցիալ: Դրան նպաստում է նաև համայնքի կողմից տրամադրված ուսումնական կրթաթոշակները՝ գերազանց ուսանողներին: • Համայնքի տարածքում ջրամբարի շահագործման դեպքում ջրի ամբարման հնարավորությունները մեծանում են: • 2026 թվականին իրականացվել է Մեղրաձոր բնակավայրի խմելու ջրի կենտրոնացված ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքները	Համայնքի թույլ կողմերը • Գործազրկությունը, • Աշխատատեղերի պակասը, • կապիտալ նորոգման և բարեկարգման կարիք են զգում ներհամայնքային որոշ փողոցներ և մայթեր, • ոռոգման համակարգերի նորոգան կարիքը, • համայնքում ջրահեռացման կենտրոնացված համակարգերի մասնակի հատվածների բացակայությունը, • սոցիալական անապահով բնակչության տոկոսն ընդհանուրի մեջ, • տարեցտարի շարունակվող արտագաղթը՝ իր բացասական հետևանքներով, • համայնքում զբոսաշրջիկների ամառային և ձմեռային ժամանցի կազմակերպման վայրերի, զբաղմունքի կենտրոնների բացակայությունը, • երիտասարդների և մեծահասակների հանգստի և ժամանցի կազմակերպման խնդիրը, • Կոյուղագծերի և ոռոգման ջրի ցանցերի մաշվածությունը: • Համայնքի գյուղական բնակավայրերի խնդիրները վերաբերում են՝ խմելու և ոռոգման ջրի ցանցի բացակայությանը, ոռոգման ցանցի խնդիր գյուղական բնակավայրերում, որի պատճառով բնակչությունը օգտվում է բնական աղբյուրներից և սեփական հորերից: Ոռոգման ջրի առկայության դեպքում համայնքում

(աշխատանքները շարունակվում են): • Հաշվի առնելով համայնքի աշխարհագրական դիրքը, որ համայնքում ձմեռային ամիսներին ձյունը առատ է, հաստ ձնածածկույթը մոտ 4 ամիս չի հալվում, առկա են թեք լեռնալանջեր, որը նպաստավոր է դահուկավազքի և այլ ձմեռային սպորտաձևերի զարգացման համար: Համայնքում հաջողությամբ կարող է զարգանալ նաև ագրոտուրիզմը և էկոտուրիզմը: • Գյուղական մեկ բնակավայր բարձր լեռնային է, մյուս բնակավայրերը լեռնային են, զերծ են արտադրական թափոններից և մթնոլորտի աղտոտվածությունից: Տարածաշրջանում գերակշռում են հարուստ բազմատեսակ բուսականությունը, ինչը նպաստավոր է էկոլոգիապես մաքուր բերքի, ինչպես նաև մեղրի ստացման համար: • Համայնքում արևային օրերը շատ են, ինչը բարենպաստ է ջերմոցային տնտեսությունների հիմնման և արևային մարտկոցների տեղադրման, որի հետևանքով կարդատրվի էլեկտրաէներգիա և կստեղծվեն նոր աշխատատեղեր:	հնարավոր է զարգացնել բանջարաբուծությունը, կարտոֆիլի, հացահատիկային մշակաբույսերի արտադրությունը: • Համայնքում կոյուղու ցանցի բացակայում, որը խիստ անհրաժեշտ է կառուցել: • Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդության ներգրավմամբ, • Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստող, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացում, հանգստի գոտիների ստեղծում, • Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, սակայն համայնքում չկա արտադրամաս, որտեղ բնակիչները ստացած կաթը հանձնեն վերամշակման և ունենան համապատասխան եկամուտ: Կաթնամթերքի վերամշակման արտադրամասի կառուցման և գործարկման արդյունքում կստեղծվեն նաև նոր աշխատատեղեր:

Օ - հնարավորությունները կամ արտաքին ռեսուրսները	**Թ - սպառնալիքները կամ արտաքին վտանգները**
• *Մեծ աշխատուժի առկայությունը,* • *միջազգային կապը, համագործակցությունը այլ պետությունների քաղաքների հետ՝ համայնքում զբոսաշրջության զարգացման, զբոսաշրջիկների այցելությունների քանակը մեծացնելու ուղղությամբ,* • *համայնքի ֆինանսական կայունությունը,* • *տեղեկատվական համակարգերի և ցանցերի զարգացումը,* • *համայնքի տնտեսական կյանքի աշխուժացում,* • *արդյունաբերության, տրանսպորտի և այլ գյուղերի զարգացման միտումներ,* • *աստիճանաբար ընդլայնել համայնքում բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակը,* • *հողային ռեսուրսների նպատակային օգտագործումը, համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրման մակարդակը* Հեռանկարային ծրագրեր, ինչը կբերի ֆինանսական կայունության Աշխատուժի հզոր պոտենցիալ ↓ Ունենալով հումանիտար և տեխնիկական կրթություն ունեցողների մեծ բանակ՝ տեղական ինքնակառավարման մարմիններում գործող համակարգը թույլ է տալիս կատարելագործել համայնքապետարանի	↓ Ոռոգման ջրի ցանցի մաշվածություն, որոշ բնակավայրերում՝ բացակայություն ↓ Կոյուղագծի մաշվածություն ↓ Գործազրկության բարձր մակարդակ Համայնքի զարգացման ռիսկերը • Հեղեղատարների վթարայնությունը, • բնակչության արտագաղթը, • բնակչության ծերացումը, • ծնելիության սակավությունը , • ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը, • համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը: • համայնքում գյուղմթերքների վերամշակման կազմակերպման բացակայությունը վտանգում է գյուղատնտեսության ճյուղի զարգացմանը,

աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը: - Ձեռնարկությունների գործունեության հնարավոր աճը: - Համայնքի ղեկավարն ու ավագանին մեծ վստահություն ունեն բնակչության շրջանում:	

2.1. Տեսլականը և նպատակները

Աղյուսակ N 9

Կարիքների և նպատակների ծառի

Նշել կարիքը՝ 1. Համայնքում անհրաժեշտ է գործազրկության բարձր մակարդակի նվազեցում՝ ապահովելու բնակչության զբաղվածության աճ, եկամուտների ավելացում և սոցիալ-տնտեսական կայուն զարգացում: 2. Համայնքում անհրաժեշտ է կոյուղու միասնական և արդյունավետ ցանցի կառուցում և զարգացում՝ ապահովելու բնակիչների սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան կենսապայմաններ: 3. Համայնքում անհրաժեշտ է սոցիալապես անապահով և ծայրահեղ աղքատ բնակչության բարձր տոկոսի նվազեցում՝ ապահովելով սոցիալական արդարություն, կենսամակարդակի բարձրացում և հավասար հնարավորություններ բոլոր բնակիչների համար: 4. Համայնքում անհրաժեշտ է ոռոգման ջրի ցանցի վերանորոգում, արդիականացում և այն բնակավայրերում, որտեղ բացակայում է, նոր ոռոգման համակարգի ստեղծում՝ գյուղատնտեսության զարգացման և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով:
Նկարագրել դրա հետևանքները, բնակիչների կամ առանձին խմբերի կենսագործունեության վրա ունեցած ազդեցությունը՝ 1. Նվազում են բնակչության եկամուտները և կենսամակարդակը, 1.1. Բարձրանում է սոցիալական անապահովության մակարդակը, 1.2. Սահմանափակվում է հիմնական կարիքների բավարարումը, 1.3. Աճում է արտագաղթի միտումը, հատկապես երիտասարդների շրջանում, 1.4.Խոցելի խմբերը ավելի են տուժում աշխատանքի հնարավորությունների բացակայությունից, 1.5. Նվազում է համայնքի տնտեսական ակտիվությունը և զարգացման տեմպերը, 1.6. Կարող են առաջանալ սոցիալական լարվածություններ և անհավասարություն: 2. Շրջակա միջավայրի աղտոտում, 2.1 Վարակիչ հիվանդությունների տարածման վտանգ, 2.2. Բնակչության կենսապայմանների և կյանքի որակի վատթարացում, 2.3. Տհաճ հոտ և հակասանիտարահիգենիկ պայմաններ, 2.4. Համայնքի տնտեսական զարգացման:

3. Նվազում է բնակչության կենսամակարդակը և կյանքի որակը,
3.1. Սահմանափակվում է կրթության և առողջապահական ծառայությունների հասանելիությունը,
3.2. Աճում է սոցիալական անհավասարությունը և լարվածությունը համայնքում,
3.3. Խոցելի խմբերը (երեխաներ, տարեցներ, բազմազավակ ընտանիքներ) հայտնվում են ավելի ծանր պայմաններում,
3.4.Աճում է գործազրկության մակարդակը և միգրացիայի ռիսկը,
3.5. Նվազում է համայնքի տնտեսական ակտիվությունը և զարգացումը:

4. Նվազում է գյուղատնտեսական արտադրողականությունը,
4.1. Բերքատվության անկման հետևանքով նվազում են բնակչության եկամուտները,
4.2. Սահմանափակվում է հողերի արդյունավետ օգտագործումը,
4.3. Աճում է ջրի կորուստը և անարդյունավետ օգտագործումը,
4.4. Որոշ տարածքներում հնարավոր է հողերի չմշակում կամ լքվածություն,
4.5. Տուժում են հատկապես գյուղատնտեսությամբ զբաղվող ընտանիքները, որոնք կախված են ոռոգումից,
4.6. Երկարաժամկետ հեռանկարում խոչընդոտվում է համայնքի տնտեսական զարգացումը:

Մեկնաբանել պատճառները՝

1. Աշխատատեղերի սակավություն համայնքում,
1.1.Կրթության և մասնագիտական հմտությունների անհամապատասխանություն աշխատաշուկայի պահանջներին,
1.2. Տնտեսական զարգացման ցածր մակարդակ,
1.3. Ներդրումների և ձեռնարկատիրական նախաձեռնությունների պակաս,
1.4. Աշխատավարձերի ցածր մակարդակ և ոչ գրավիչ աշխատանքային պայմաններ,
1.5. Աշխատանք փնտրելու և աշխատանքի տեղավորման մեխանիզմների ոչ արդյունավետություն:

2. Հնացած կամ բացակայող ենթակառուցվածքներ,
2.1. Պլանավորման կամ կառավարման թերություններ,
2.2. Նախկինում պետական կամ համայնքային ծրագերի ոչ լիարժեք իրականացում:

3. Գործազրկության բարձր մակարդակ և աշխատատեղերի սակավություն,
3.1. Ցածր աշխատավարձեր և ոչ բավարար եկամուտներ,
3.2. Կրթության և մասնագիտական հմտությունների պակաս,
3.3. Տնտեսական զարգացման ցածր մակարդակ համայնքում,
3.4. Խոցելի խմբերի համար նպատակային ծրագրերի պակաս:

4. Ոռոգման համակարգերի հնացած և մաշված ենթակառուցվածքներ,
4.1. Նախկինում համակարգերի ոչ լիարժեք կամ անարդյունավետ նախագծում,
4.2. Տեխնիկական սպասարկման և վերահսկման պակաս,
4.3. Ջրային ռեսուրսների կառավարման թերություններ,
4.4. Բնակավայրերի արագ զարգացում առանց համապատասխան ենթակառուցվածքային

ներդրումների:

Ներկայացնել կարիքի բավարարման հիմնական ուղիները՝

1. Աշխատատեղերի ստեղծում և զբաղվածության աճ,
1.1. Տեղական բիզնեսի խթանում,
1.2. Երիտասարդների ներգրավում համայնքային կյանքում,
1.3. Կրթության որակի և կիրառականության բարձրացում,
1.4. Ենթակառուցվածքների բարելավում:

2. Համայնքային կամ պետական բյուջեներից ֆինանսավորման ապահովում,
2.1. Նոր ենթակառուցվածքների կառուցում կամ գործողների վերանորոգում,
2.2. Դոնոր կազմակերպությունների և միջազգային ծրագրերի ներգրավում:

3. Աշխատատեղերի ստեղծման խթանում և տեղական բիզնեսի զարգացում,
3.1. Մասնագիտական կրթության և վերապատրաստման ծրագրերի կազմակերպում,
3.2. Սոցիալական աջակցության ծրագրերի բարելավում և նպատակային ուղղվածություն,
3.3. Փոքր և միջին ձեռնարկությունների աջակցություն,
3.4. Ներդրումների ներգրավում համայնքում,
3.5. Խոցելի խմբերի համար հատուկ սոցիալական ծրագրերի իրականացում,
3.6. Պետական և համայնքային կառույցների համագործակցության ուժեղացում,
3.7. Բնակչության իրազեկման բարձրացում և մասնակցության խթանում:

4. Մաշված ոռոգման ցանցերի վերանորոգում և արդիականացում,
4.1. Նոր ոռոգման համակարգերի կառուցում այն բնակավայրերում, որտեղ դրանք բացակայում են,
4.2. Ջրի խնայող տեխնոլոգիաների (կաթիլային ոռոգում և այլն) ներդրում,
4.3. Պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորման ապահովում,
4.4. Միջազգային ծրագրերի և դոնոր կազմակերպությունների ներգրավում,
4.5. Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման և սպասարկման կազմակերպում,
4.6. Ֆերմերների իրազեկում և աջակցություն ժամանակակից ոռոգման մեթոդների կիրառման հարցում:

Նշել կարիքը՝ Համայնքում հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկեցիկ և մրցունակ:

- Համայնքի ղեկավարի իրավասության շրջանակներում միջոցներ ձեռնարկել՝ պաշտպանելու համայնքի բնակիչների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու շահերը:
- Նպաստել համայնքի բազմաբնակարան շենքերի պահպանմանը, շահագործմանն ու

նորոգմանը:

- Ջրահեռացման ներքին ցանցի հիմնանորոգում:
- Ապահովել կապիտալ ներդրումներ համայնքի բնակարանային կոմունալ տնտեսության, ճանապարհային տնտեսության, հանգստի և բակային տարածքների բարեկարգման բնագավառներում:
- Ապահովել մանկապարտեզների, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների անխափան ու նպատակային գործունեությունը, իրականացնել այդ կազմակերպությունների շենքերի վերանորոգման, ջեռուցման, էներգախնայող միջոցառումների, ջրամատակարարման վերականգնման և գույքի ձեռքբերման աշխատանքներ:
- Համայնքում պայմաններ ստեղծել՝ զարգացնելու փոքր ու միջին բիզնեսը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր մասնավոր հատվածում:
- Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, բնակարանային, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար:
- Բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակն ու որակը՝ բարելավվելով համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրման աշխատանքները և նպատակային օգտագործելով բյուջեի միջոցները:
- Ավելացնել բարեկարգված բակային տարածքների ու խաղահրապարակների քանակը:
- Համայնքի բնակչության մշակութային կյանքի և աշխատանքից ազատ ժամերին հանգստի կազմակերպում:
- Բարելավել համայնքի բյուջեի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ճշտելով հողի հարկի, գույքահարկի բազաներ:
- Համայնքում իրականացնել բարեկարգման և կանաչապատման ընդգրկուն աշխատանքներ:
- Համայնքապետարանի ենթակայության կազմակերպություններում իրականացնել գույքային ու տեխնիկական վերազինում:
- համայնքային ճանապարհների հիմնանորոգում
- Ապաստարանների կառուցման արդյունքում կապահովվի բնակչության անվտանգությունը

Քաղաքացիական պաշտպանության բնագավառի խնդիրների լուծման համար սեյսմիկ ռիսկերի, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների ներառում.

2.2. Թիրախային խումբը

Ծրագրերի շահառուներ են հանդիսանում՝ համայնքի ընդհանուր բնակչությունը, գյուղատնտեսությամբ զբաղվող բնակիչները (ֆերմերներ), աշխատանք փնտրող բնակչությունը, երեխաները, տարեցները, երիտասարդները՝ 13-35 տարեկան, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք և ընտանիքները:

1 Համայնքում գործազրկության բարձր մակարդակի նվազեցմանը կապահովի բնակչության զբաղվածության աճին, եկամուտների ավելացմնը և սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը:

2 Համայնքում անհրաժեշտ է կոյուղու միասնական և արդյունավետ ցանցի կառուցումը և զարգացումը կապահովի բնակիչների սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան կենսապայմաններ:

3 Համայնքում անհրաժեշտ է սոցիալապես անապահով և աղքատ բնակչության տոկոսի նվազեցումը կապահովի սոցիալական արդարություն, բնակչության կենսամակարդակի բարձրացում, ինչպես նաև հավասար հնարավորություններ բոլոր բնակիչների համար:

4 Համայնքում անհրաժեշտ է ոռոգման ջրի ցանցի վերանորոգում, արդիականացում և այն բնակավայրերում, որտեղ բացակայում է, նոր ոռոգման համակարգի ստեղծում՝ գյուղատնտեսության զարգացման և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով, որը կմեծացնի գյուղատնտեսական արտադրողականությունը, բնակչության եկամուտները, նոր աշխատատեղերի ավելացումը, ինչպես նաև կբարելավի գյուղաբնակների կենսամակարդակը:

2.3. Առաջարկները

- Աշխատատեղերի ստեղծում և զբաղվածության աճ,
- Տեղական բիզնեսի խթանում,
- Երիտասարդների ներգրավում համայնքային կյանքում,
- Կրթության որակի և կիրառականության բարձրացում,
- Ենթակառուցվածքների բարելավում,
- Համայնքային կամ պետական բյուջեներից ֆինանսավորման ապահովում,
- Նոր ենթակառուցվածքնների կառուցում կամ գործողների վերանորոգում,
- Դոնոր կազմակերպությունների և միջազգային ծրագրերի ներգրավում,
- Աշխատատեղերի ստեղծման խթանում և տեղական բիզնեսի զարգացում,
- Մասնագիտական կրթության և վերապատրաստման ծրագրերի կազմակերպում,
- Սոցիալական աջակցության ծրագրերի բարելավում և նպատակային ուղղվածություն,
- Փոքր և միջին ձեռնարկությունների աջակցություն,
- Ներդրումների ներգրավում համայնք,
- Խոցելի խմբերի համար հատուկ սոցիալական ծրագրերի իրականացում,
- Պետական և համայնքային կառույցների համագործակցության ուժեղացում,
- Բնակչության իրազեկման բարձրացում և մասնակցության խթանում,
- Մաշված ոռոգման ցանցերի վերանորոգում և արդիականացում,
- Նոր ոռոգման համակարգերի կառուցում այն բնակավայրերում, որտեղ դրանք բացակայում են,
- Ջրի խնայող տեխնոլոգիաների (կաթիլային ոռոգում և այլն) ներդրում,
- Պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորման ապահովում,
- Միջազգային ծրագրերի և դոնոր կազմակերպությունների ներգրավում,
- Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման և սպասարկման կազմակերպում,
- Ֆերմերների իրազեկում և աջակցություն ժամանակակից ոռոգման մեթոդների կիրառման հարցում:

3. ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԸ

3.1. Ենթածրագիր N 1

Անվանումը՝ Զբաղվածության ծառայությունների տրամադրում	
Ենթածրագրի համառոտ նկարագիրը՝ Սույն ծրագրով նախատեսված է աջակցել համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին՝ բավարարելու զբաղվածության պահանջարկը: Ծրագրի իրականացման շրջանակում նախատեսվում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության Հրազդանի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի բաժնի հետ համայնքում աշխատանք փնտրող համայնքի բնակիչներին ներառել ՄՄԾ զբաղվածության ծրագրերում:	
Կարիք (կարիքներ), որի (որոնց) լուծմանն է միտված ենթածրագիրը	Այս ծրագրի հիմնական կարիք է համարվում զբաղվածության խնդրի լուծումը, այն է. համայնքի բնակիչ հանդիսացող քաղաքացիներին ապահովել աշխատանքով:
Ենթածրագրի բնույթը՝ 2025 թվականի նոյեմբերի 23-ի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N150-Ն որոշման հավելվածի 6-րդ կետի համաձայն	Միջամտող՝ ուղղված առկա սոցիալական հիմնախնդիրները լուծելուն կամ համայնքի սոցիալական կարիքները բավարարելուն:
Ենթածրագրի նպատակը	Զբաղվածության ծառայությունների տրամադրման միջոցով օգնել համայնքի բնակչությանը լուծելու զբաղվածության խնդիրը: Այս ծրագրի համատեքստում կյանքի դժվարին իրավիճակներ են համարվում «Սոցիալական աջակցության

<table>
<tr><td></td><td colspan="4">մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում ներկայացված իրավիճակները:</td></tr>
<tr><td rowspan="8">Ենթածրագրի հիմնական գործողությունները, յուրաքանչյուր գործողության համար պատասխանատուների շրջանակը և իրականացման ժամանակացույցը</td><td>Գործողություն</td><td>Պատասխանատուներ</td><td>Մեկնարկի ժամկետ</td><td>Ավարտի ժամկետ</td></tr>
<tr><td>Համայնքում առկա թափուր հաստիքների մասին իրազեկել աշխատանք փնտրող քաղաքացիներին:</td><td>Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմ՝ Իրավաբանական, քարտուղարության անձնակազմի կառավարման բաժին</td><td>2026 սեպտեմբեր</td><td>2026 դեկտեմբեր</td></tr>
<tr><td>Թափուր աշխատատեղերի վերհանում, աշխատանք փնտրողների հետ համադրում և հարմար աշխատանքի առաջարկի ներկայացում:</td><td>Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմ՝ Իրավաբանական, քարտուղարության անձնակազմի կառավարման բաժին ,ՄՍԾ Հրազդանի տարածքային կենտրոն:</td><td></td><td></td></tr>
<tr><td>Աշխատանք փնտրողների՝ պետական զբաղվածության ծրագրերում ներառում</td><td>Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմ, ՄՍԾ Հրազդանի տարածքային կենտրոն:</td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="4"></td></tr>
<tr><td>Ենթածրագրի</td><td colspan="4">Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք կամ</td></tr>
</table>

<table>
<tr><td>շահառուները</td><td colspan="5">ընտանիքները: Աշխատանք փնտրող քաղաքացիներ:</td></tr>
<tr><td rowspan="3">Ենթածրագրի հիմնական արդյունքները</td><td rowspan="3">Շահառուների թիվը</td><td>Ելակետային արժեքը՝ ըստ ելակետային տարվա</td><td colspan="3">Թիրախային արժեքները՝ ըստ տարիների
(լրացնել տարիները՝ ըստ ծրագրի)</td></tr>
<tr><td>2026 դեկտեմբեր</td><td>2026 դեկտեմբեր</td><td></td><td></td></tr>
<tr><td>100</td><td>150</td><td></td><td></td></tr>
<tr><td>Ենթածրագրի այլ հիմնական արդյունքները</td><td colspan="5">Համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքների հիմնական կարիքները բավարարված են:
Այս ծրագրի հիմնական կարիք են համարվում մասնագիտական վերապատրաստում անցած, մասնագիտական կողմնորոշում և ուսում ստացած, ինչպես նաև պրակտիկա անցած աշխատանք գտած քաղաքացիները:</td></tr>
<tr><td>Ենթածրագրի բյուջեն</td><td colspan="5">100.000</td></tr>
<tr><td>Ենթածրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="5">Մասնագիտական ներուժ, համայնքապետարան-ՄՄԾ փոխգործակցություն, իրազեկման արշավներ, համայնքապետարանի կողմից տարածքի և տեխնիկայի տրամադրում՝ աշխատանք փնտրողների և գործատուների հետ հանդիպումներ և աշխատանքի տոնավաճառներ կազմակերպելու համար:</td></tr>
<tr><td>Ենթածրագրի հիմնական ռիսկերը և դրանց կառավարման մեխանիզմները</td><td colspan="5">Արտակարգ իրավիճակ, ռազմական դրություն</td></tr>
<tr><td>Այլ նշումներ</td><td colspan="5"></td></tr>
</table>

3.2. Ենթածրագիր N 2

Անվանումը՝ Բնաիրային օգնության տրամադրում	
Ենթածրագրի համառոտ նկարագիրը՝ Սույն ծրագրով նախատեսված է աջակցել համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին բավարարելու իրենց հիմնական կարիքները: Ծրագրի իրականացման շրջանակում նախատեսվում է սոցիալական աջակցությունը տրամադրել աջակցության քարտերի միջոցով: Աջակցության քարտերի միջոցով սոցիալական ծառայությունը տրամադրվում է կոնկրետ ապրանքատեսակի ձեռքբերման համար: Բնաիրային օգնության տրամադրման միջոցով նախատեսվում է աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին՝ համաձայն համայնքային սոցիալական ծրագրի շրջանակում համայնքի կարիքների բավարարմանն ուղղված և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 20-րդ հոդվածով նախատեսված ծառայությունների: Այս ծրագրի համատեքստում կյանքի դժվարին իրավիճակներ են համարվում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում ներկայացված իրավիճակները:	
Կարիք (կարիքներ), որի (որոնց) լուծմանն է միտված ենթածրագիրը	Բնակչության սոցիալական պաշտպանություն. Այս ծրագրի հիմնական կարիք են համարվում սննդի և այլ առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների (բացառությամբ ծխախոտի և ալկոհոլային խմիչքների), ինչպես նաև հիգիենայի պարագաների և առաջին անհրաժեշտության կենցաղային այլ պարագաների, դեղերի, շինանյութի, այլ

<table>
<tr><td></td><td colspan="4">ապրանքների կարիքները:</td></tr>
<tr><td>Ենթածրագրի բնույթը՝ 2025 թվականի նոյեմբերի 23-ի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N150-Ն որոշման հավելվածի 6-րդ կետի համաձայն</td><td colspan="4">Միջամտող՝ ուղղված առկա սոցիալական հիմնախնդիրները լուծելուն կամ համայնքի սոցիալական կարիքները բավարարելուն:</td></tr>
<tr><td>Ենթածրագրի նպատակը</td><td colspan="4">Բնաիրային օգնության միջոցով սոցիալական աջակցություն տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին:
Այս ծրագրի համատեքստում կյանքի դժվարին իրավիճակներ են համարվում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում ներկայացված իրավիճակները:</td></tr>
<tr><td rowspan="2">Ենթածրագրի հիմնական գործողությունները, յուրաքանչյուր գործողության համար պատասխանատուների շրջանակը և իրականացման ժամանակացույցը</td><td>Գործողություն</td><td>Պատաս խանատո ւներ</td><td>Մեկնարկի ժամկետ</td><td>Ավարտի ժամկետ</td></tr>
<tr><td>-Սահմանել նախատեսված աջակցությունը տրամադրող կազմակերպությունների ընտրության չափանիշները (օրինակ՝ խանութների, կազմակերպությունների),
-իրականացնել նշված չափանիշներին բավարարող կազմակերպությունների ընտրությունը,
-կազմակերպությունների հետ ստորագրել համապատասխան պայմանագրեր,
-մշակել և հաստատել շահառուների ընտրության չափանիշները,
-մշակել և հաստատել ծրագրի իրականացման ընթացակարգերն, այդ</td><td>Ծաղկաձոր ի համայնքա պետարան ի աշխատակ ազմ</td><td>2026 սեպտեմբեր</td><td>2026 դեկտեմբեր</td></tr>
</table>

	թվում՝ դիմումների ընդունման, կարիքի գնահատման, ուղղորդման, մոնիթորինգի, -մշակել և հաստատել ծրագրի հիմնական ձևաթղթերի նմուշները, - մշակել և հաստատել ծրագրի հաշվետվողականության մեխանիզմները:			
	Մատակարարումներ իրականացնող կազմակերպություններն ընտրվելու են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 453-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հրապարակային օֆերտայի հիման վրա, նախապես կնքված պայմանագրերին համապատասխան:	Ծաղկաձորի համայնքապետարանի աշպատակազ	2026 թվական սեպտեմբեր	2026 թվական դեկտեմբերի 31

Ենթածրագրի շահառուները	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք կամ ընտանիքները: *Առաջնահերթությունը տրվում է կրկնակի խոցելիություն ունեցող անձանց, օրինակ՝ բազմազավակ ընտանիքներին, հղի կանանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, տեղահանված անձանց, տարեցներին, հաշմանդամություն կամ անձի ֆունկցիոնալության սահմանափակում ունեցող անձանց և այլն:*				
Ենթածրագրի հիմնական արդյունքները	Շահառուների թիվը	Ելակետային արժեքը՝ ըստ ելակետային տարվա	Թիրախային արժեքները՝ ըստ տարիների (լրացնել տարիները՝ ըստ ծրագրի)		
		2026 սեպտեմ	2026 դեկ		

		բեր	տեմբեր		
		120	250		
Ենթածրագրի այլ հիմնական արդյունքները	Համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքների հիմնական կարիքները բավարարված են: Այս ծրագրի հիմնական կարիք են համարվում սննդի, հագուստի, կոշիկի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների, դեղերի,շինանյութի, առաջին անհրաժեշտության կենցաղային այլ ապրանքների կարիքները: Աջակցության քարտերի միջոցով նախատեսվում է բավարարել շահառուների սոցիալական կարիքները:				
Ենթածրագրի բյուջեն	3000000 ՀՀ դրամ				
Ենթածրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ֆինանսավորում, մասնագիտական ներուժ				
Ենթածրագրի հիմնական ռիսկերը և դրանց կառավարման մեխանիզմները	Արտակարգ իրավիճակ, ռազմական դրություն				
Այլ նշումներ					

ԲՆԱՀՐԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ

Բնաիրային աջակցության քարտը, համաձայն Ծաղկաձոր համայնքի սոցիալական ծրագրի, ենթադրում է ընտանիքի բացահայտված առաջնահերթ կարիքների հիման վրա աջակցության տրամադրում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին ստորև նշված ուղղություններով.

1. **Սննդի աջակցության քարտ** – տրամադրվում է ըստ վերհանված կարիքների շահառու ճանաչված ընտանիքներին: Բնաիրային աջակցության քարտը նախատեսված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին աջակցություն տրամադրելու համար՝ հնարավորություն ընձեռելով համապատասխան ապրանքներ կամ ծառայություններ տրամադրող առևտրային կազմակերպությունից ձեռք բերել սնունդ, այլ:

Սննդի աջակցության քարտի հատուցման չափը սահմանել առավելագույնը 50.000 ՀՀ դրամ:

2. **Առողջապահական աջակցության քարտ** – տրամադրվում է ըստ վերհանված կարիքների շահառու ճանաչված ընտանիքներին: Քարտը նախատեսված է օգտագործել հիգիենայի միջոցների, դեղորայքի ձեռքբերման համար:

Առողջապահական աջակցության քարտի հատուցման չափը սահմանել առավելագույնը 50.000 ՀՀ դրամ:

3. **Շինանյութի ձեռքբերման աջակցության քարտ**– տրամադրվում է ըստ վերհանված կարիքների շահառու ճանաչված ընտանիքներին: Քարտը նախատեսված է օգտագործել շինանյութի ձեռքբերման համար:

Շինանյութի ձեռքբերման աջակցության քարտի հատուցման չափը սահմանել առավելագույնը 150.000 ՀՀ դրամ:

4. **Այլ՝** հիմք ընդունելով համայնքում առկա սոցիալական կարիքների բնույթն ու հրատապությունը

- ✓ Քարտի գումարի փոխանցումը մեկ այլ քարտի հնարավոր չէ:
- ✓ Աջակցության քարտի գումարը հնարավոր չէ կանխիկացնել:
- ✓ Մինչև վերջնաժամկետ աջակցության քարտի գումարը ոչ ամբողջությամբ սպառելու դեպքում հնարավոր չէ պահանջել գումարի մնացորդը: Խրախուսվում է ծախսել գումարը մինչև սահմանված վերջնաժամկետի ավարտը: Վերջնաժամկետից հետո քարտի չօգտագործված գումարը կզրոյացվի:
- ✓ Արգելվում է գումարն օգտագործել ալկոհոլ, էներգետիկ ըմպելիքներ, ծխախոտային արտադրանք և այլ գնելու նպատակով
- ✓ Աջակցության քարտը հնարավոր չէ փոխանցել այլ անձի, քարտը տրամադրվում է շահառուին և նախատեսված է միայն շահառուի ընտանիքի անդամների կարիքների համար:

Քարտը վավեր է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը:

3.3. Ենթածրագիր N 3

Անվանումը՝ բուժսպասարկման և սոցիալ-վերականգնողական օգնության տրամադրում	
Ենթածրագրի համառոտ նկարագիրը՝ Բուժսպասարկման և սոցիալ-վերականգնողական օգնության միջոցով սոցիալական աջակցություն տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին: Սույն ծրագրով նախատեսված է աջակցել համայնքի՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին բավարարելու իրենց առողջապահական կարիքները: Ծրագրի իրականացման շրջանակում նախատեսվում է սոցիալական աջակցությունը տրամադրել դեղատների, բժշկական կենտրոնների, բուժմիավորումների, ատամնաբուժարանների, լաբորատորիաների, ինչպես նաև վերականգնողական կենտրոնների միջոցով:	
Կարիք (կարիքներ), որի (որոնց) լուծմանն է միտված ենթածրագիրը	Այս ծրագրի համատեքստում հիմնական կարիք են համարվում հիվանդության կամ վնասվածքների հետևանքով անձի առողջական վիճակի վատթարացումը, անկախ կյանքի ձեռքբերումը կամ պահպանումը, սոցիալական ներառումը, հոգեհուզական կամ վարքային վերականգնումը: Սոցիալ-վերականգնողական օգնության միջոցով նախատեսվում է բավարարել շահառուների սոցիալական կարիքները: Բուժսպասարկման օգնության տրամադրման միջոցով նախատեսվում է բավարարել շահառուների սոցիալական և առողջապահական կարիքները: Բժշկական ծառայություններից օգտվելու համար վճարված բժշկական ծախսերի համար կատարված հատուցումներ, որոնք փոխանցվելու են բժշկական ծառայություն մատուցած կազմակերպություններին, դեղատներին,ատամնաբուժարաններին, լաբորատորիաներին:
Ենթածրագրի բնույթը՝ 2025 թվականի նոյեմբերի 23-ի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N150-Ն որոշման հավելվածի	Արձագանքող և վերականգնողական՝ ուղղված համայնքի՝ որպես մեկ միասնական միավորի՝ արտակարգ իրավիճակներին և հրատապ արձագանք պահանջող այլ իրավիճակներին արձագանքմանը և վերականգնմանը, ինչպես նաև համայնքի բնակիչների առանձին խմբերի սոցիալական վերականգնմանը, համայնքում առկա սոցիալական ծառայությունների ներառականության

6-րդ կետի համաձայն	ապահովմանը և ներառական նոր սոցիալական ծառայությունների զարգացմանն աջակցելուն.			
Ենթածրագրի նպատակը	Բուժսպասարկման օգնության միջոցով սոցիալական աջակցություն տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքներին: Այս ծրագրի համատեքստում կյանքի դժվարին իրավիճակներ են համարվում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում ներկայացված իրավիճակները:			
Ենթածրագրի հիմնական գործողությունները, յուրաքանչյուր գործողության համար պատասխանատուների շրջանակը և իրականացման ժամանակացույցը	Գործողություն	Պատասխանատուներ	Մեկնարկի ժամկետ	Ավարտի ժամկետ
	-Սահմանել նախատեսված աջակցությունը տրամադրելու ընթացակարգերը (օրինակ ինչպես է իրականացվում բժշկական, վերականգնողական կենտրոնների, դեղատների և այլ կազմակերպությունների հետ համագործակցությունը), -մշակել և հաստատել շահառուների ընտրության չափանիշները, -մշակել և հաստատել ծրագրի իրականացման ընթացակարգ	Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմ	2026 սեպտեմբեր	2026 դեկտեմբեր

	երն, այդ թվում՝ դիմումների ընդունման, կարիքի գնահատման, ուղղորդման, մոնիթորինգի, -մշակել և հաստատել ծրագրի հիմնական ձևաթղթերի նմուշները, -մշակել և հաստատել ծրագրի հաշվետվողականության մեխանիզմները:			

Ենթածրագրի շահառուները	Ծրագրի շահառու են հանդիսանում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք կամ ընտանիքները: Առաջնահերթությունը տրվում է կրկնակի խոցելիություն ունեցող անձանց, օրինակ՝ բազմազավակ ընտանիքներին, հղի կանանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, տեղահանված անձանց, տարեցներին, հաշմանդամություն կամ անձի ֆունկցիոնալության սահմանափակում ունեցող անձանց:				
Ենթածրագրի հիմնական արդյունքները	Շահառուների թիվը	Ելակետային արժեքը՝ ըստ ելակետային տարվա	Թիրախային արժեքները՝ ըստ տարիների (լրացնել տարիները՝ ըստ ծրագրի)		
		2026	2026		

		սեպտեմբեր	դեկտեմբեր		
		50	100		
Ենթածրագրի այլ հիմնական արդյունքները					
Ենթածրագրի բյուջեն	2000000 ՀՀ դրամ				
Ենթածրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ֆինանսավորում, մասնագիտական ներուժ				
Ենթածրագրի հիմնական ռիսկերը և դրանց կառավարման մեխանիզմները	Արտակարգ իրավիճակ, ռազմական դրություն				
Այլ նշումներ					

3.4. Ենթածրագիր N 4

Անվանումը՝ Տնային խնամքի և ցերեկային կենտրոնի ծառայությունների տրամադրում				
Ենթածրագրի համառոտ նկարագիրը՝ Սոցիալապես անապահով, չաշխատող և խնամքի կարիք ունեցող տարեցների և (կամ) հաշմանդամություն, ֆունկցիոնալության սահմանափակում ունեցող անձանց խնամքի տրամադրումը ցերեկային կենտրոնում և տնային պայմաններում՝ ծառայության պատվիրակման միջոցով:				
Կարիք (կարիքներ), որի (որոնց) լուծմանն է միտված ենթածրագիրը	Ծաղկաձոր համայնքում բնակվող սոցիալապես անապահով, չաշխատող և խնամքի կարիք ունեցող տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց առաջնային սոցիալական խնդիրների լուծում:			
Ենթածրագրի բնույթը՝ 2025 թվականի նոյեմբերի 23-ի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N150-Ն որոշման հավելվածի 6-րդ կետի համաձայն	Կանխարգելիչ՝ ուղղված համայնքում հնարավոր սոցիալական հիմնախնդիրները, սոցիալական ռիսկերը և խոցելիության գործոնները կանխելուն.			
Ենթածրագրի նպատակը	Սոցիալապես անապահով, չաշխատող և խնամքի կարիք ունեցող տարեցների և (կամ) հաշմանդամություն, ֆունկցիոնալության սահմանափակում ունեցող անձանց խնամքի տրամադրումը ցերեկային կենտրոնում և տնային պայմաններում՝ ծառայության պատվիրակման միջոցով:			
Ենթածրագրի հիմնական գործողությունները, յուրաքանչյուր գործողության համար պատասխանատուների շրջանակը և իրականացման ժամանակացույցը	Գործողություն	Պատասխանատուներ	Մեկնարկի ժամկետ	Ավարտի ժամկետ
	-Ծառայությունների պատվիրակման համար անհրաժեշտ գործընթացների և ընթացակարգերի իրականացում, -Կազմակերպության հետ	Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմ	2026 սեպտեմբեր	2026 դեկտեմբեր

	ծառայությունների տրամադրման համաձայնագրի ստորագրում, - Ծառայությունների տրամադրման ընթացիկ մոնիթորինգի և ամփոփիչ գնահատման ընթացակարգերի, չափանիշների, գործիքակազմի մշակում և հաստատում, - Համայնքում ծառայությունների և դրանք տրամադրող կազմակերպության մասին իրազեկվածության ապահովում			
Ենթածրագրի շահառուները	Խնամքի կարիք ունեցող, անապահով, չաշխատող տարեցներ, հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության սահմանափակումներ ունեցող անձինք: (անհրաժեշտության դեպքում շահառուների խումբը կարող է հստակեցվել՝ առաջնահերթությունը տալով կրկնակի խոցելիություն ունեցող անձանց՝ օրինակ միայնակ կամ անժառանգ տարեցներին, հաշմանդամության առաջին կամ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակում ունեցող և անկողնային վիճակում գտնվող անձինք):			
Ենթածրագրի հիմնական արդյունքները	Շահառուների թիվը	Ելակետային արժեքը՝ ըստ ելակետա	Թիրախային արժեքները՝ ըստ տարիների (լրացնել տարիները՝ ըստ ծրագրի)	

		յին Տարվա			
		2026 սեպտեմբեր	2026 դեկտեմբեր		
		50	80		
Ենթածրագրի այլ հիմնական արդյունքները					
Ենթածրագրի բյուջեն	900000 ՀՀ դրամ				
Ենթածրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ֆինանսավորում, մասնագիտական ներուժ				
Ենթածրագրի հիմնական ռիսկերը և դրանց կառավարման մեխանիզմները	Արտակարգ իրավիճակ, ռազմական դրություն				
Այլ նշումներ					

3.5. Ենթածրագիր N 5

Անվանումը՝ Ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում	
Ենթածրագրի համառոտ նկարագիրը՝ Ծաղկաձոր համայնքում առկա են ընտանիքներ, որոնց երիտասարդ անդամները ունեն բարձր առաձադիմություն և շարունակական կրթություն ստանալու մոտիվացիա, սակայն ֆինանսական դժվարությունների պատճառով հաճախականգնում են ուսումը դադարեցնելու կամ չշարունակելու վտանջի առաջ: Ուսման վարձերի վճարման դժվարությունները հատակապես սուր են բազմազավակ, միայնակ ծնողի , տեղահանված և սոցիալապես անապահով ընտանիքների դեպքում: Բարձրագույն կամ մասնագիտական կրթության անհասանելիությունը սահմանափակում է երիտասարդների աշխատաշուկայում մրցունակությունը և խորացնում սոցիալական անհավասարությունը: Ծրագրի շրջանակներում համայնքապետարանը կտրամադրի ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝ համագործակցության միջոցով բարձրագույն ուսումնական հաստատություններում, մասնագիտական /արհեստագործական/, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորելու դեպքում մինչև 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի չափով՝ ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ: Աջակցությունը կտրամադրվի սոցիալական գնահատման դեպքում:	
Կարիք (կարիքներ), որի (որոնց) լուծմանն է միտված ենթածրագիրը	• Երիտասարդների կրթության հասանելիության սահմանափակում • Ուսման վարձի վճարման ֆինանսական դժվարություններ • Բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների սոցիալական խոցելիություն • Մասնագիտական հմտությունների ձևավորման սահմանափակում • Աշխատաշուկայում մրցունակության ցածր մակարդակ
Ենթածրագրի բնույթը՝ 2025	Միջամտող, արձագանքող, կրթական-իրազեկող, շահերի պաշտպանությանը ուղղված,

<table>
<tr><td>թվականի նոյեմբերի 23-ի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N150-Ն որոշման հավելվածի 6-րդ կետի համաձայն</td><td colspan="4">առկա սոցիալական հիմնախնդիրները լուծելուն:</td></tr>
<tr><td>Ենթածրագրի նպատակը</td><td colspan="4">Աջակցել սոցիալապես խոցելի ընտանիքների երիտասարդներին շարունակելու և ավարտելու իրենց կրթությունը՝ նպաստելով նրանց մասնագիտական զարգացմանը և աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը:</td></tr>
<tr><td rowspan="7">Ենթածրագրի հիմնական գործողությունները, յուրաքանչյուր գործողության համար պատասխանատուների շրջանակը և իրականացման ժամանակացույցը</td><td>Գործողություն</td><td>Պատասխանատուներ</td><td>Մեկնարկի ժամկետ</td><td>Ավարտի ժամկետ</td></tr>
<tr><td>Համագործակցություն համալսարանների և քոլեջների հետ, շահառուների կարիքների գնահատում, ուսման վարձի մասնակի փոխհատուցման տրամադրում</td><td>Համայնքապետարան</td><td>2026 սեպտեմբեր</td><td>2026 դեկտեմբեր</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="4"></td></tr>
<tr><td>Ենթածրագրի շահառուները</td><td colspan="4">Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք կամ ընտանիքները:
Առաջնահերթությունը տրվում է կրկնակի խոցելիություն ունեցող անձանց, օրինակ՝ բազմազավակ ընտանիքների ուսանողներին, միայնակ ծնողի խնամքին գտնվող ուսանողներին, հաշմանդամություն կամ անձի ֆունկցիոնալության սահմանափակում ունեցող անձանց երեխաներին:</td></tr>
<tr><td rowspan="2">Ենթածրագրի հիմնական արդյունքները</td><td>Շահառուների թիվը</td><td>Ելակետային արժեքը՝ ըստ ելակետային տարվա</td><td colspan="2">Թիրախային արժեքները՝ ըստ տարիների (լրացնել տարիները՝ ըստ ծրագրի)</td></tr>
<tr><td colspan="4"></td></tr>
</table>

		2026 սեպտեմբեր	2026 դեկտեմբեր		
		8			
Ենթածրագրի այլ հիմնական արդյունքները	• Բարձրագույն կրթության շարունակականության ապահովում • Ուսանողների արտահոսքի նվազում • Աշխատաշուկայում մրցունակ երիտասարդների թվի աճ • Համայքի մարդկային կապիտալի ամրապնդում				
Ենթածրագրի բյուջեն	1500000 ՀՀ դրամ				
Ենթածրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ֆինանսավորում, մասնագիտական ներուժ				
Ենթածրագրի հիմնական ռիսկերը և դրանց կառավարման մեխանիզմները	Արտակարգ իրավիճակ, ռազմական դրություն				
Այլ նշումներ					

4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ

Միջո- ցառումներ	Գնահատված ծախսեր /ՀՀ դրամ/	Ֆինանսավորման աղբյուր (նշել չափը)				Ֆինանսավորման պակաս	Պակասող միջոցների համալրման եղանակները
		Համայն-քային բյուջե	Պետական բյուջե, այդ թվում՝ սուբվենցիա	Այլ կազմակեր-պություններ-ի հատկացրած միջոցներ	Այլ նախաձեռնո-ւթյունների, ոչ ֆորմալ խմբերի, անհատներ-ի հատկացրած միջոցներ		
Չբաղվածության ծառայություններ-ի տրամադրում	100 000	100 000	0	0	0		
Բնաիրային օգնության տրամադրում	3000000	3000000	0	0	0		
բուժսպասարկմ-ան և սոցիալ-վերականգնողա-կան օգնության տրամադրում	2000000	2000000	0	0	0		
Տնային խնամքի և ցերեկային կենտրոնի ծառայություններ-ի տրամադրում	900000	900000	0	0	0		
Ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման ծրագիր	1500000	1500000	0	0	0		

5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆԸ

Գործողությունները	Տևողությունը (սկիզբ-ավարտ)	Յուրաքանչյուր գործողության իրականացված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը - իրականացվել է ամբողջությամբ - իրականացվել է մասամբ - չի իրականացվել	Արդյունքային ցուցանիշներ	Յուրաքանչյուր ցուցանիշի իրացված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը (%) - % - % - %	Հիմնա-վորումներ, նշումներ
	2026 թվականի սեպտեմբերի 15-ից 2026 թվականի դեկտեմբերի 30-ը				

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 111-Ա

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 08-ի N127-Ն որոշումը և Սուսաննա Ալբերտի Բաղդասարյանի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սուսաննա Ալբերտի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի, Արտավազ գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքի գլխավոր հատակագծով նախատեսված գյուղատնտեսական, այգի համարվող, 2.0 հա մակերեսով, 07-017-0171-0020 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակության փոփոխության ժամկետները նախատեսել միջնաժամկետի փոխարեն /5-10 տարի/, առաջնահերթության /1-5 տարի/ ժամկետներում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 112-Ա

ՀԵՆԱՍՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի թիվ 66 որոշումը և անհատ ձեռներեց Կարեն Հովհաննիսյանի դիմումը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել անհատ ձեռներեց Կարեն Հովհաննիսյանին օգտագործել, Արտավազ և Փյունիկ բնակավայրերի լուսավորության հենասյուները՝ օպտիկամանրաթելային մալուխներ ամրացնելու, Ծաղկաձոր համայնքի Արտավազ և Փյունիկ բնակավայրերի բաժանորդներին ինտերնետ կապի մատակարարման համար, համայնքի ավագանու կողմից սահմանված մատուցվող ծառայությունների վճարի դիմաց:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ
ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ
ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 113-Ա

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԲԵՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով և «Գնումների մասին » օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝ Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակայրի 6-րդ փողոցի (դեպի Մեղրաձորի ջրվեժ գնացող ճանապարհ) 1,5 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքները անցկացնել հրատապ բաց մրցույթի ընթացակարգով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 114-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 98-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2026 թվականի հուլիսի 14 -ի « Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման չհաստատված հայտերը 2027 թվական տեղափոխելու մասին» N98-Ա որոշման 1-ին կետի, 5-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ.
5) «Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր, Մարմարիկ բնակավայրերում ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքներ»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 115-Ա

ՄԱՐՄԱՐԻԿ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով և հիմք ընդունելով «Առողջ Միջավայր» բնապահպանության, առողջապահության, գյուղատնտեսության և զբոսաշրջության կենտրոն հասարակական կազմակերպության նախագահ՝ Ա. Արսենյանի գրությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն՝ Մարմարիկ գետի ավազանի պահպանության և կայուն զարգացման տեղական քաղաքականությանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ
ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ
ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր

Հավելված
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2026թ. մարտի 05-ի N 115-Ա
որոշման

ԱՌՈՂՋ ՄԻՋԱՎԱՅՐ ՀԿ

ՄԱՐՄԱՐԻԿ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ և ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծաղկաձոր - 2026

Բովանդակություն

1. Ամփոփագիր 2-4 էջ

2. Մարմարիկ գետի ավազանի նշանակությունը 4-5 էջ

3. Իրավիճակի վերլուծություն 5-6 էջ

4. Հիմնական խնդիրներ, աղտոտվածության հիմնական պատճառները և մարտահրավերներ առաջարկվող լուծումներ և միջամտություններ 6-12 էջ

5. Տեսլական 12 էջ

6. Քաղաքականության նպատակ 12 էջ

7. Ռազմավարական ուղղություններ 12-14 էջ

8. Քաղաքականության իրականացման մեխանիզմներ 15-16 էջ

9. Գործողությունների ծրագիր 17-18 էջ

10. Արդյունքների չափման համակարգ 19 էջ

11. Մոնիթորինգ, գնահատում և հաշվետվողականություն 19-22 էջ

12. Եզրակացություն 22 էջ

13. Հավելվածներ (քարտեզներ, ջրի որակի տվյալներ, համայնքների նկարագրություններ, աղբյուրներ) 23-34 էջ

1. Ամփոփագիր

Մարմարիկ գետը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի կարևորագույն ջրային համակարգերից մեկն է և Հրազդան գետի խոշոր վտակներից: Գետը կարևոր դեր է կատարում ոչ միայն տարածաշրջանի ջրային ռեսուրսների ձևավորման և պահպանության, այլև բնապահպանական հավասարակշռության, կենսաբազմազանության պահպանության, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և բնակչության կենսագործունեության ապահովման գործում: Մարմարիկ գետի ավազանը ներառում է տարբեր բնական լանդշաֆտներ, անտառային և մարգագետնային էկոհամակարգեր, ջրային միջավայրեր, ինչպես նաև բնակավայրեր, որոնք իրենց առօրյա կյանքով և տնտեսական գործունեությամբ սերտորեն կապված են գետի հետ: **(Հավելված 1) (Հավելված 2)**

Մարմարիկ գետն ու նրա ավազանը հանդիսանում են տարածաշրջանի կարևոր բնական կապիտալը: Գետի ջրերը օգտագործվում են կենցաղային, գյուղատնտեսական, տնտեսական և ոռոգելացիոն նպատակներով, իսկ ավազանի բնական միջավայրը կարևոր նշանակություն ունի կենսաբազմազանության պահպանության, հողի և ջրային ռեսուրսների պաշտպանության, ինչպես նաև գրոսաշրջության զարգացման տեսանկյունից: Գետի ավազանի տարածքում գտնվող համայնքների համար Մարմարիկը ոչ միայն բնական ռեսուրս է, այլև տեղական ինքնության, մշակութային ժառանգության և պատմական հիշողության կարևոր բաղադրիչ:

Միաժամանակ վերջին տարիներին իրականացված ուսումնասիրությունները, դիտարկումները և դորտային վերլուծությունները ցույց են տալիս, որ Մարմարիկ գետի ավազանը բախվում է մի շարք բնապահպանական և կառավարման խնդիրների: Գետի վրա ազդող մարդածին ճնշումները, բնակավայրերի զարգացումը, թափոնների կառավարման առկա խնդիրները, որոշ տարածքներում կեղտաջրերի ոչ բավարար մաքրումը, գյուղատնտեսական գործունեության ազդեցությունները և բազմաթիվ ռեսուրսների ոչ միշտ կայուն օգտագործումը բացասաբար են անդրադառնում գետի էկոլոգիական վիճակի վրա: Առանձին հատվածներում արձանագրվել են ջրի որակի վատթարացման միտումներ, ափամերձ տարածքների աղտոտման դեպքեր և բնական էկոհամակարգերի խոցելիության աճ:

Մարտահրավերների շարքում առանձնահատուկ ուշադրության են արժանի նաև կլիմայական փոփոխությունների հետևանքով առաջացող ռիսկերը: Ջերմաստիճանի փոփոխությունները, տեղումների ռեժիմի փոփոխականությունը, երաշտների և ծայրահեղ եղանակային երևույթների հաճախականության աճը կարող են էական ազդեցություն ունենալ գետի հոսքային ռեժիմի, ջրային ռեսուրսների հասանելիության, կենսաբազմազանության և համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Հետևաբար Մարմարիկ գետի ապագա կառավարման գործընթացներում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն ներկայիս խնդիրները, այլև երկարաժամկետ կլիմայական և բնապահպանական ռիսկերը:

Չնայած առկա մարտահրավերներին՝ Մարմարիկ գետի ավազանն ունի զարգացման զգալի ներուժ: Տարածքը հարուստ է բնական, պատմամշակութային և գրոսաշրջային ռեսուրսներով, որոնք կարող են ծառայել կայուն զարգացման կարևոր հիմք: Էկոտուրիզմի, բնապահպանական կրթության, համայնքային մասնակցության, երիտասարդական նախաձեռնությունների, կանաչ տնտեսության և բնական ռեսուրսների պատասխանատու կառավարման զարգացման միջոցով հն

արավոր է ոչ միայն նվազեցնել առկա խնդիրները, այլև ստեղծել նոր հնարավորություններ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Սույն քաղաքականությունը մշակվել է որպես Մարմարիկ գետի ավազանի պահպանության և կայուն զարգացման ռազմավարական ուղղորդող փաստաթուղթ: Այն հիմնված է գետի ավազանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների, տվյալների վերլուծության, շահագրգիռ կողմերի կարծիքների և դորտային փորձագիտական առաջարկությունների վրա: Քաղաքականության հիմնական նպատակն է ձևավորել միասնական և համակարգված մոտեցում, որը կուղղորդի Մարմարիկ գետի ավազանում իրականացվող բնապահպանական, սոցիալական և զարգացման գործընթացները՝ ապահովելով բնական ռեսուրսների պահպանումն ու կայուն օգտագործումը:

Քաղաքականությունը նպատակ ունի ապահովել գետի ջրային ռեսուրսների պահպանությունը, ջրի որակի բարելավումը, աղտոտման աղբյուրների նվազեցումը, գետի և հարակից էկոհամակարգերի

վերականգնումը, կենսաբազմազանության պահպանությունը, համայնքների մասնակցության խթանումը և միջհամայնքային համագործակցության զարգացումը: Կարևոր նշանակություն է տրվում նաև կլիմայական փոփոխությունների նկատմամբ դիմակայունության բարձրացմանը, քանի որ երկարաժամկետ հեռանկարում դա հանդիսանում է Մարմարիկ գետի և դրա ավազանի կայուն զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը:

Քաղաքականության շրջանակում առանձնացվել են մի շարք ռազմավարական ուղղություններ, որոնք փոխկապակցված են և միտված են ընդհանուր նպատակների իրականացմանը: Դրանք ներառում են.

- ջրի որակի բարելավում և աղտոտման կանխարգելում,
- կեղտաջրերի և թափոնների կառավարման համակարգերի կատարելագործում,
- գետի էկոհամակարգերի և կենսաբազմազանության պահպանում ու վերականգնում,
- համայնքային մասնակցության և բնապահպանական կրթության զարգացում,
- միջհամայնքային համագործակցության և ավազանային կառավարման ամրապնդում,
- կլիմայական փոփոխություններին հարմարվողականության բարձրացում,
- կայուն գյուղատնտեսության և կանաչ տնտեսության զարգացման խթանում:

Քաղաքականության կարևոր առանձնահատկություններից է ավազանային և համագործակցային կառավարման մոտեցումը: Մարմարիկ գետի պահպանությունը հնարավոր չէ իրականացնել մեկ համայնքի կամ մեկ կառույցի ջանքերով: Գետի ավազանի խնդիրներն ու զարգացման հնարավորությունները պահանջում են համակարգված համագործակցություն համայնքների, պետական մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, գիտական հաստատությունների, մասնավոր հատվածի և բնակիչների միջև: Այդ նպատակով քաղաքականությունը նախատեսում է համագործակցության մեխանիզմների ձևավորում, տեղեկատվության փոխանակման խթանում և համատեղ ծրագրերի իրականացում:

Քաղաքականության իրականացման արդյունքում ակնկալվում է, որ Մարմարիկ գետի ավազանում կբարելավվի բնապահպանական վիճակը, կնվազեն աղտոտման աղբյուրները, կուժեղանան էկոհամակարգերի պահպանության և վերականգնման գործընթացները, կբարձրանա համայնքների մասնակցությունն ու պատասխանատվությունը, ինչպես նաև կստեղծվեն նոր հնարավորություններ կայուն տնտեսական և գյուղատնտեսական զարգացման համար: Միաժամանակ քաղաքականությունը կնպաստի համայնքների և շահագրգիռ կառույցների միջև համագործակցության խորացմանը, բնապահպանական կառավարման արդյունավետության բարձրացմանը և բնական ռեսուրսների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորմանը:

Երկարաժամկետ հեռանկարում քաղաքականության իրականացումը նպատակ ունի ապահովել, որ Մարմարիկ գետը շարունակի պահպանել իր բնապահպանական, սոցիալական և տնտեսական արժեքը՝ ծառայելով նե

րկա և ապագա սերունդների բարեկեցությանը, տարածաշրջանի կայուն զարգացմանը և Հայաստանի բնական ժառանգության պահպանությանը: Սա ոչ միայն բնապահպանական, այլև համայնքային զարգացման, սոցիալական պատասխանատվության և բնական ռեսուրսների խելամիտ կառավարման կարևոր նախաձեռնություն է, որի հաջողությունը կախված է բոլոր շահագրգիռ կողմերի համատեղ և հետևողական աշխատանքից:

2. Մարմարիկ գետի ավազանի նշանակությունը

2.1. Բնապահպանական նշանակություն

Մարմարիկ գետը Հրազդան գետի կարևորագույն վտակներից է և Կոտայքի մարզի առանցքային ջրային համակարգերից մեկը: Գետի ավազանը ձևավորվում է Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների տարածքում և ներառում է բազմազան բնական լանդշաֆտներ, անտառային և մարգագետնային էկոհամակարգեր, ինչպես նաև արժեքավոր ջրային միջավայրեր, հատուկ պահպանվող տարածքներ **(Հավելված 4)**, ջրաճահիճներ կարևոր նշանակություն ունի Մարմարիկի ջրամբարը **(Հավելված 5)** :

Մարմարիկ գետը կարևոր դեր ունի տարածաշրջանի էկոլոգիական հավասարակշռության պահպանման գործում՝ ապահովելով կենսաբազմազանության (**Հավելված 6**) համար անհրաժեշտ կենսամիջավայրեր, բնական ջրաշրջանառություն և էկոհամակարգային ծառայություններ: Գետի և նրա վտակների տարածքում հանդիպում են Հայաստանի լեռնային գոտուն բնորոշ բուսական և կենդանական տեսակներ, որոնց պահպանությունը կարևոր նշանակություն ունի ինչպես տեղական, այնպես էլ ազգային մակարդակում:

2.2. Սոցիալական և տնտեսական նշանակություն

Մարմարիկ գետի ավազանը կենսական նշանակություն ունի տարածաշրջանի բնակչության համար: Գետի ջրային ռեսուրսներն օգտագործվում են կենցաղային, գյուղատնտեսական և տնտեսական նպատակներով:

Ավազանի համայնքներում գյուղատնտեսությունը, անասնապահությունը, զբոսաշրջությունը և փոքր ձեռնարկատիրությունը շարունակում են մնալ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները: Գետի բնական ռեսուրսների վիճակն անմիջական ազդեցություն ունի բնակչության կենսամակարդակի, զբաղվածության և համայնքների զարգացման հնարավորությունների վրա:

2.3. Զբոսաշրջային և մշակութային նշանակություն

Մարմարիկ գետի ավազանը հայտնի է իր գեղատեսիլ բնությամբ, անտառային տարածքներով, պատմամշակութային ժառանգությամբ և զբոսաշրջային ներուժով:

Հանքավանի, Մեղրաձորի, Մարմարիկի և հարակից բնակավայրերի տարածքները գրավիչ են բնապահպանական և ակտիվ զբոսաշրջության զարգացման տեսանկյունից: Գետի ավազանում առկա բնական և մշակութային արժեքների պահպանումը կարևոր նախապայման է կայուն զբոսաշրջության զարգացման համար:

2.4. Հազմավարական նշանակություն

Մարմարիկ գետի ավազանը հանդիսանում է տարածաշրջանի ջրային անվտանգության, բնապահպանական կայունության և համայնքային զարգացման կարևոր բաղադրիչ: Գետի պահպանությունն ու արդյունավետ կառավարումը նպաստում են ինչպես բնական ռեսուրսների պահպանմանը, այնպես էլ համայնքների երկարաժամկետ զարգացմանը:

3. Իրավիճակի վերլուծություն

3.1. Ընդհանուր իրավիճակ

Մարմարիկ գետի ավազանում իրականացված ուսումնասիրությունները և մշտադիտարկման տվյալները ցույց են տալիս, որ գետի էկոլոգիական վիճակի վրա ազդում են ինչպես բնական, այնպես էլ մարդածին գործոններ:

Թեև գետի վերին հոսանքներում պահպանվել են համեմատաբար բարենպաստ պայմաններ, ստորին հոսանքներում և բնակավայրերի հարակից հատվածներում նկատվում են ջրի որակի վատթարացման միտումներ, որոնք պայմանավորված են տնտեսական գործունեության, բնակավայրերի ազդեցության և թափոնների կառավարման խնդիրներով:

3.2. Ջրի որակի վիճակ

2019–2025 թվականներին իրականացված մշտադիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ գետի տարբեր հատվածներում արձանագրվել են ջրի որակի ցուցանիշների տատանումներ (**Հավելված 7**):

Որոշ հատվածներում արձանագրվել են ամոնիումի, ֆոսֆատների, երկաթի, մանգանի և այլ նյութերի բարձր կոնցենտրացիաներ, որոնք կարող են պայմանավորված լինել կենցաղային, գյուղատնտեսական և այլ տնտեսական գործունեությամբ:

Ջրի որակի առկա վիճակը վկայում է շարունակական վերահսկողության և աղտոտման աղբյուրների նվազեցման անհրաժեշտության մասին:

3.3. Աղտոտման հիմնական աղբյուրները

Վերլուծությունները ցույց են տալիս, որ գետի վրա ազդեցություն ունեցող հիմնական գործոններն են՝

- չմաքրված կամ անբավարար մաքրված կենցաղային կեղտաջրերը,
- գյուղատնտեսական գործունեության արդյունքում առաջացող աղտոտումը,
- կոշտ կենցաղային թափոնները,
- շինարարական թափոնները,
- առանձին արտադրական և տնտեսական օբյեկտների ազդեցությունը,
- գետի ափամերձ տարածքների ոչ պատշաճ օգտագործումը:

3.4. Կառավարման ներկայիս վիճակը

Մարմարիկ գետի պահպանությանն առնչվող գործառույթներն իրականացվում են տարբեր պետական և տեղական կառույցների կողմից: Սակայն ներկայումս բացակայում է գետի ամբողջ ավազանը ներառող միասնական կառավարման և համակարգման մեխանիզմը:

Համայնքների, պետական կառույցների, գիտական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցությունը հիմնականում իրականացվում է առանձին ծրագրերի շրջանակներում և չունի մշտական ինստիտուցիոնալ ձևաչափ:

3.5. Հնարավորություններ և ներուժ

Չնայած առկա խնդիրներին՝ Մարմարիկ գետի ավազանն ունի զգալի զարգացման ներուժ:

Այդ ներուժը ներառում է.

- էկոտուրիզմի զարգացում,
- բնապահպանական կրթության խթանում,
- համայնքային նախաձեռնությունների ընդլայնում,
- միջազգային և ազգային ծրագրերի ներգրավում,
- կանաչ տնտեսության և կայուն զարգացման նախաձեռնությունների իրականացում,
- միջհամայնքային համագործակցության ամրապնդում:

4. Հիմնական խնդիրներ, աղտոտվածության հիմնական պատճառները և մարտահրավերներ առաջարկվող լուծումներ և միջամտություններ

4.1. Կենցաղային և կոյուղաջրերի արտանետումը ջրամբարի ավազան

Վերջին տարիներին իրականացված ուսումնասիրությունները, մասնավորապես՝ 2024–2025 թթ. «Առողջ Մրջավայր» ՀԿ-ի և «Առողջ Հրազդան» քաղաքացիական նախաձեռնության կողմից կատարված հետազոտությունները (իրականացված «Համայնքային համահիմքման աջակցության կենտրոն» (SSMC)-ի աջակցությամբ), վկայում են, որ Մարմարիկ գետի ավազանում առկա է կենցաղային և կոյուղաջրերի լուրջ արտահոսքի խնդիր:

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ գետի ավազանում գտնվող համայնքներում՝ Հանքավան, Արտավազ, Փյունիկ, Մեղրաձոր և Աղավնաձոր, կոմունալ-կենցաղային և չմաքրված կոյուղաջրերի գգալի մասը անմիջապես թափվում է գետ: Մասնավորապես՝ Աղավնաձոր համայնքում կոյուղաջրերի մոտ 20%-ը լցվում է անմիջապես գետ, մինչդեռ մնացած շուրջ 80%-ը, ինչպես նաև Մարմարիկ համայնքի կոյուղաջրերը, միանում են կոյուղատար համակարգին:

Միևնույն ժամանակ, նշված կոյուղատար համակարգը գտնվում է տեխնիկապես վատթար վիճակում, ինչի հետևանքով այն ևս գետաբերանի հատվածում արտահոսում է Մարմարիկ գետ՝ շարունակելով աղտոտման գործընթացը:

Արտահոսքի աղբյուրների թվում են ոչ միայն բնակելի տները, այլև գրոսաշրջային և տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտները՝ ներառյալ հյուրանոցներ, հյուրատներ, ինչպես նաև փոքր և միջին արտադրամասեր:

Միաժամանակ հարկ է նշել, որ Հանքավան համայնքում գործող որոշ կազմակերպություններ՝ Հանքավանի առողջարանային հաստատությունը, «RARE» հանքային ջրերի գործարանը և «Գայիրի» հյուրանոցային համալիրը, ունեն տեղական մաքրման կայաններ, ինչը մասամբ նվազեցնում է նրանց կողմից առաջացող ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

4.2. Գյուղատնտեսական [illegible] աղտոտում

Մարմարիկ գետի ավազանում գտնվող բոլոր համայնքներում յայն տարածում ունի գյուղատնտեսությունը և անասնապահությունը, որոնք հանդիսանում են բնակչության հիմնական զբաղմունքներից մեկը:

Իրականացված ուսումնասիրությունները, ինչպես նաև ոլորտային մասնագետների գնահատականները ցույց են տալիս, որ գետի ավազանում գործող անասնագոմերից առաջացող թափոնները հիմնականում անուղղակի ճանապարհով (հողային հոսքերով, տեղումների և մակերևույթային ջրերի միջոցով) ներթափանցում են գետ, ինչը բացասաբար է անդրադառնում ջրի որակի վրա:

Միաժամանակ, գետի էկոհամակարգի համար զգալի վտանգ են ներկայացնում գյուղատնտեսությունում կիրառվող պարարտանյութերը և թունաքիմիկատները, որոնք ևս անուղղակի ճանապարհով ներթափանցում են գետ՝ առաջացնելով քիմիական աղտոտում և էկոլոգիական հավասարակշռության խախտում:

4.3. Աղբով և կոշտ թափոններով [illegible]

Մարմարիկ գետի ավազանի համայնքներում առկա է գետի աղտոտման խնդիր՝ պայմանավորված կենցաղային և կոշտ թափոնների ոչ պատշաճ կառավարմամբ:

2025 թվականից Կոտայքի և Գեղարքունիքի Կոշտ կենցաղային թափոնների կառավարման կենտրոնը (ԿԿԹԿ) ապահովում է կանոնավոր աղբահանության իրականացում՝ նպաստելով համայնքներում թափոնների կառավարման համակարգի բարելավմանը:

Սակայն գետի ավազանի հարակից համայնքների բնակիչները, ինչպես նաև գրոսաշրջային ակտիվ սեզոնին (մայիս–հոկտեմբեր) հանգստի նպատակով տարածք այցելող անձինք, հաճախ կենցաղային աղբը թողնում կամ լցնում են գետի մեջ կամ ափամերձ տարածքներում:

Բացի կենցաղային աղբից, պարբերաբար արձանագրվում են նաև կոշտ թափոնների՝ շինանյութերի, ինչպես նաև ասեղած կենդանիների մարմինների գետ նետելու դեպքեր, որոնք էապես վատթարացնում են գետի ջրի որակը և ստեղծում սանիտարահիգիենիկ լուրջ վտանգներ:

4.4. Արտադրական գործունեության և [illegible]

Համաձայն Հանրապետական կրկրաբանական ֆոնդի տվյալների՝ Մարմարիկի հովտում առկա են մետաղական 4 հանքավայր և 4 հանքերևակում, որոնցից ներկայումս շահագործվում է Մեղրաձորի ոսկու

հանքավայրը: Բացի այդ, տարածքում առկա են նաև ոչ մետաղական 6 հանքավայր և 6 հանքերևակում: Հովտում գործում են նաև մի շարք արտադրական ձեռնարկություններ:

Արտադրական գործունեության արդյունքում առաջացող կեղտաջրերը բացասաբար են անդրադառնում գետի ջրի որակի վրա:

«Քաղաքացիական հասարակության մասնակցությունը Հայաստանում քիմիական անվտանգության պաշտպանությանը» ծրագրի շրջանակում (իրականացված 2022–2023 թթ. Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աջակցությամբ, չեխական «Arnika» ՀԿ-ի, «Համայնքային համախմբման աջակցության կենտրոնի» (SSMC) և «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի համագործակցությամբ) իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ ոսկու հանքավայրից արտահոսող ջրային հոսքերի հատակային նստվածքներում արձանագրվել են ծանր մետաղների՝ մասնավորապես սնդիկի, նիկելի և ցինկի բարձր կոնցենտրացիաներ:

Վերոնշյալը վկայում է, որ հանքարդյունաբերական և արտադրական գործունեությունը էական ազդեցություն է ունենում Մարմարիկ գետի ջրի քիմիական կազմի և ընդհանուր էկոլոգիական վիճակի վրա:

4.5. Էկոհամակարգերի խոցելիություն

Գետի բնական էկոհամակարգերը ենթարկվում են տարբեր ճնշումների՝ պայմանավորված հողօգտագործման փոփոխություններով, աղտոտմամբ և մարդու տնտեսական գործունեությամբ:

Ափամերձ բուսականության վնասումը, բնական միջավայրերի մասնատումը և կենսաբազմազանության նվազման ռիսկերը պահանջում են հատուկ ուշադրություն:

4.6. Կլիմայական փոփոխությունների ազդեցություն

Կլիմայական փոփոխությունները կարող են էական ազդեցություն ունենալ Մարմարիկ գետի ջրային ռեժիմի, էկոհամակարգերի և համայնքների սոցիալ-տնտեսական գործունեության վրա:

Սպասվում են.

- ջրային ռեսուրսների սեզոնային փոփոխություններ,
- երաշտների հաճախականության աճ,
- հեղեղումների և սելավների ռիսկերի մեծացում,
- բնական էկոհամակարգերի վրա լրացուցիչ ճնշումներ:

4.7. Կառավարման և համագործակցության անհրաժեշտություն

Մարմարիկ գետի ավազանի կառավարման գործընթացում ներգրավված են բազմաթիվ շահագրգիռ կողմեր, սակայն ներկայումս բացակայում է միասնական համակարգող հարթակ:

Միջհամայնքային համագործակցության, տվյալների փոխանակման և համատեղ պլանավորման սահմանափակ հնարավորությունները դժվարացնում են խնդիրների համալիր լուծումը:

Առաջարկվող լուծումներ և միջամտություններ

4.1. Մարմարիկ գետի [illegible]

[illegible]

1. Կոյուղաջրերի մաքրման ենթակառուցվածքների զարգացում

- Նախատեսել և կառուցել համայնքային կամ միջհամայնքային կոյուղաջրերի մաքրման կայաններ (ԿՄԿ)՝ հատկապես այն բնակավայրերում, որտեղ առկա է անմիջական արտահոսք դեպի գետ:
- Աջակցել փոքրածավալ, տեղային (դեցենտրալիզացված) մաքրման համակարգերի ներդրմանը՝ անհատական տնտեսությունների և փոքր բիզնեսների համար:
- Խթանել ժամանակակից, էներգաարդյունավետ և բնապահպանական տեսանկյունից անվտանգ տեխնոլոգիաների կիրառումը:

2.Գետի հովտի պահպանման հատուկ միջամտություններ

- Գետի հունի մաքրում՝ հոսքի բնականությունն ու ջրի որակը բարելավելու նպատակով ազատել գետը կուտակված մացառուտներից, սեդիմենտներից և բնական խոչընդոտներից:
- Կառուցել (գաբիոններ) գետի մեջ տեղադրված քարե ցանցային կառուցվածքներ՝ հեղեղումներից պաշտպանելու, ինչպես նաև գետի հունի կայունությունը պահպանելու համար:
- Ըստ ՀՀ Ջրային օրենսգրքի և ՀՀ Կառավարության N 64-Ն որոշմանը (20.06.2025) Ջրապահպան և ջրաէկոհամակարգի պահպանման գոտիների (ասիմտարական գոտի) ստեղծմամբ՝ նպատակով գետի ափամերձ տարածքներում սահմանել հատուկ գոտիներ՝ ադրի մուտքը կանխարգելելու, բնական միջավայրի պաշտպանությունը ապահովելու և գրուսշրջային և համայնքային օգտագործումը կանոնակարգելու համար:

3. Գոյություն ունեցող կոյուղատար համակարգերի վերականգնում և արդիականացում կամ նորի կառուցում:

- Իրականացնել Մարմարիկ համայնքի և հարակից բնակավայրերի կոյուղատար համակարգերի տեխնիկական վիճակի գնահատում:
- Վերանորոգել և արդիականացնել վնասված և մաշված կոյուղատարները՝ կանխելու արտահոսքերը և անօրինական միացումները, կամ կառուցել նորը:
- Ապահովել կոյուղաջրերի անվտանգ տեղափոխում դեպի մաքրման կայաններ՝ բացառելով գետ մուտքը:

4. Իրավական և վերահսկողական մեխանիզմների ուժեղացում

- Սահմանել և կիրառել խստացված բնապահպանական նորմեր կոյուղաջրերի արտահոսքի նկատմամբ:
- Ներդնել պարբերական մոնիթորինգի և վերահսկողության համակարգ՝ համայնքների և տնտեսավարողների գործունեության նկատմամբ:
- Սահմանել վարչական պատասխանատվություն և տուգանքներ՝ շրջակա միջավայրի աղտոտման դեպքերի համար:

5. Մասնավոր հատվածի ներգրավում և խթանում

- Պարտադիր դարձնել մաքրման կայանների առկայությունը նոր կառուցվող հյուրանոցների, հյուրատների և արտադրական օբյեկտների համար:
- Ստեղծել ֆինանսական և հարկային խթաններ այն տնտեսավարողների համար, որոնք ներդրում են կատարում մաքրման համակարգերի մեջ:
- Խրախուսել հաջողված փորձի տարածումը (օրինակ՝ գործող մաքրման կայաններ ունեցող կազմակերպությունների փորձը):

6. Համայնքային իրազեկում և մասնակցություն

- Կազմակերպել իրազեկման արշավներ բնակիչների շրջանում՝ կոյուղաջրերի կառավարման և գետի պահպանության կարևորության վերաբերյալ:
- Ներգրավել համայնքային խմբերին և քաղաքացիական նախաձեռնություններին՝ մոնիթորինգի և վերահսկողության գործընթացներում:
- Ձարգացնել «համայնք–իշխանություն–մասնավոր հատված» համագործակցության մեխանիզմներ:

7. Ֆինանսավորման և ծրագրային աջակցություն

- Ներգրավել պետական, միջազգային և դոնոր կազմակերպությունների ֆինանսական միջոցներ ենթակառուցվածքների զարգացման համար:
- Մշակել նպատակային ծրագրեր՝ ուղղված Մարմարիկ գետի ավազանի էկոհամակարգի վերականգնմանը:
- Ապահովել ծրագրերի շարունակականություն և վերահսկելի իրականացում:

4.2.1. Գյուղատնտեսական քիմիկատների [illegible] ենթակառուցվածքով արտադրում

1. Անասնապահական թափոնների կառավարման բարելավում

- Խրախուսել և աջակցել փակ և անվտանգ գոմաղբի պահեստարանների (գոմաղբահավաք հարթակների) կառուցմանը:
- Ներդնել անասնապահական թափոնների մշակման մեխանիզմներ (օրինակ՝ կոմպոստացում, կենսագազի արտադրություն):
- Սահմանել պահանջներ անասնագոմերի տեղակայման և շահագործման համար՝ բացառելով գետի անմիջական ազդեցության գոտում դրանց գործունեությունը:

2. Գյուղատնտեսական քիմիկատների կիրառման կարգավորում

- Մշակել և կիրառել պարարտանյութերի և թունաքիմիկատների օգտագործման ուղեցույցներ՝ հիմնված լավագույն փորձի վրա:
- Խթանել օրգանական և էկոլոգիապես անվտանգ գյուղատնտեսության մեթոդների կիրառումը:
- Սահմանել սահմանափակումներ գետերին հարակից տարածքներում քիմիկատների կիրառման համար (բուֆերային գոտիներ):

3. Մոնիթորինգ և վերահսկողություն

- Իրականացնել հողերի և ջրի որակի պարբերական մոնիթորինգ:
- Ներգրավել մասնագիտական կառույցներ՝ աղտոտման աղբյուրների բացահայտման և գնահատման համար:
- Սահմանել պատասխանատվություն՝ բնապահպանական նորմերի խախտման դեպքերում:

4. Իրազեկում և կարողությունների զարգացում

- Կազմակերպել ուսուցողական ծրագրեր գյուղատնտեսների և անասնապահների համար՝ կայուն գործելակերպերի վերաբերյալ:
- Տարածել տեղեկատվական նյութեր՝ քիմիկատների ճիշտ և անվտանգ կիրառման մասին:

4.3.1. Ագրոլ և կոշտ թափոններով աղտոտում

1. Թափոնների կառավարման համակարգի բարելավում

- Համայնքներում կենցաղային աղրի հավաքման և տեղափոխման կանոնավոր ծառայությունների լավարկում:
- Տեղադրել բավարար քանակով աղբամաններ՝ հատկապես գետի ափամերձ և հանգստի գոտիներում:
- Կազմակերպել թափոնների տեսակավորման և վերամշակման պիլոտային ծրագրեր:

2. Վերահսկողության ուժեղացում

- Սահմանել և կիրառել վարչական տուգանքներ գետի և ափամերձ տարածքների աղտոտման համար:
- Իրականացնել պարբերական հսկողություն՝ հատկապես զբոսաշրջային սեզոնի ընթացքում:

- Ներգրավել համայնքային կառույցներ և կամավորական խմբեր վերահսկողության գործընթացում:

3. Հանրային իրազեկում և վարքագծի փոփոխություն

- Իրականացնել լայնածավալ իրազեկման աշխատանքներ՝ ուղղված շրջակա միջավայրի պահպանությանը:
- Կազմակերպել համայնքային մաքրման ակցիաներ և բնապահպանական միջոցառումներ:
- Խթանել պատասխանատու զբոսաշրջության մշակույթ:

4. Հատուկ միջոցառումներ կոշտ թափոնների համար

- Սահմանել շինարարական և խոշոր թափոնների կառավարման հատուկ կարգեր:
- Արգելել և վերահսկել ապօրինի կենդանիների նետումը գետ՝ ապահովելով դրանց անվտանգ հավաքման և ոչնչացման մեխանիզմներ:

4.4.1 Արտադրական աղբամանների և թիմերով տարածքի մաքրության ապահովում

1. Արտադրական կեղտաջրերի կառավարման բարելավում

- Պարտադիր դարձնել արտադրական ձեռնարկությունների համար կեղտաջրերի մաքրման կայանների առկայությունը և շահագործումը:
- Ապահովել մաքրման տեխնոլոգիաների համապատասխանությունը բնապահպանական նորմերին:
- Խթանել փակ ջրաշրջանառության համակարգերի ներդրումը արտադրությունում:

2. Հանքարդյունաբերության վերահսկողություն

- Խստացնել հանքավայրերի շահագործման բնապահպանական պահանջները:
- Պարտադիր դարձնել պոչամբարների և արտահոսքերի անվտանգ կառավարումը:
- Իրականացնել անկախ և պարբերական բնապահպանական աուդիտներ:

3. Ջրի որակի մոնիթորինգ և հետազոտություններ

- Ստեղծել մշտադիտարկման համակարգ՝ գետի ջրի և նստվածքների քիմիական կազմի գնահատման համար:
- Ներգրավել գիտահետազոտական կազմակերպություններ՝ տվյալների վերլուծության և ռիսկերի գնահատման նպատակով:
- Ապահովել տվյալների թափանցիկություն և հանրային հասանելիություն:

4. Իրավական և տնտեսական գործիքներ

- Սահմանել պատասխանատվություն և տուգանքներ՝ քիմիական աղտոտման դեպքերի համար:
- Ներդնել «աղտոտողը վճարում է» սկզբունքը:
- Խրախուսել շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ներդրումները՝ հարկային կամ այլ արտոնությունների միջոցով:

4.5.1 Էկոհամակարգերի խոցելիություն

Պահպանել և վերականգնել գետի էկոլոգիական ամբողջականությունը:

4.6.1 Կլիմայական փոփոխություններ

Բարձրացնել ավազանի և համայնքների կլիմայական դիմակայունությունը:

Ձևավորել ինտեգրված ավազանային կառավարման համակարգ և ամրապնդել համագործակցությունը համայնքների, պետական մարմինների և այլ շահագրգիռ կողմերի միջև:

5. Տեսլական

Մինչև 2035 թվականը Մարմարիկ գետի ավազանը պետք է դառնա բնապահպանապես առողջ, արդյունավետ կառավարվող և կլիմայական փոփոխություններին դիմակայուն տարածք, որտեղ պահպանվում են ջրային և ցամաքային էկոհամակարգերը, ապահովվում է ջրային ռեսուրսների կայուն օգտագործումը, նվազեցվում են աղտոտման աղբյուրները, իսկ համայնքները մասնակցում են գետի պահպանության և զարգացման գործընթացներին:

Մարմարիկ գետը պետք է հանդիսանա համայնքների համագործակցության, բնական ռեսուրսների պատասխանատու կառավարման և կայուն զարգացման հաջողված օրինակ՝ նպաստելով բնակչության կյանքի որակի բարելավմանը, էկոլոգիական անվտանգության ամրապնդմանը և տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

6. Քաղաքականության նպատակ

Սույն քաղաքականության գլխավոր նպատակն է ապահովել Մարմարիկ գետի ավազանի պահպանությունը, վերականգնումը և կայուն զարգացումը՝ ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման, էկոհամակարգերի պահպանության, համայնքային մասնակցության, միջհամայնքային համագործակցության և կլիմայական փոփոխություններին հարմարվողականության միջոցով:

Քաղաքականության իրականացումը պետք է նպաստի.

- գետի ջրի որակի բարելավմանը,
- աղտոտման աղբյուրների նվազեցմանը,
- կենսաբազմազանության պահպանությանը,
- բնական էկոհամակարգերի վերականգնմանը,
- համայնքների բնապահպանական պատասխանատվության բարձրացմանը,
- կայուն տնտեսական և գրոսաշրջային զարգացման խթանմանը,
- ավազանային կառավարման համակարգի ձևավորմանը:

7. Ռազմավարական ուղղություններ

Քաղաքականության նպատակին հասնելու համար սահմանվում են հետևյալ ռազմավարական ուղղությունները.

Այս ուղղության նպատակն է նվազեցնել գետի վրա մարդածին ճնշումները և ապահովել ջրի որակի աստիճանական բարելավում:

Հիմնական գործողությունները.

- կեղտաջրերի կառավարման բարելավում,
- աղտոտման աղբյուրների բացահայտում և վերահսկում,
- ջրի որակի մշտադիտարկման զարգացում,
- ջրապահպան գոտիների ձևավորում:

Ակնկալվող արդյունք

Գետի ջրի որակի ցուցանիշների բարելավում և աղտոտման ծավալների նվազեցում:

Ռազմավարական ուղղություն 2. Կենսաբազմազանության վերականգնում և պահպանություն

Այս ուղղությունն ուղղված է գետի բնական միջավայրերի պահպանությանը և վերականգնմանը:

Հիմնական գործողությունները.

- ափամերձ բուսականության վերականգնում,
- էրոզիայի կանխարգելում,
- կենսաբազմազանության պահպանման միջոցառումներ,
- էկոլոգիական արժեքավոր տարածքների պաշտպանություն:

Ակնկալվող արդյունք

Գետի էկոլոգիական վիճակի բարելավում և կենսաբազմազանության պահպանություն:

Ռազմավարական ուղղություն 3. Աղտոտման նվազեցում և կանխարգելում

Այս ուղղությունը նպատակ ունի նվազեցնել գետի աղտոտումը թափոնների և կեղտաջրերի միջոցով:

Հիմնական գործողությունները.

- աղբահանության համակարգերի կատարելագործում,
- թափոնների տեսակավորման խթանում,
- գետի մաքրման պարբերական աշխատանքներ,
- կոյուղու ենթակառուցվածքների զարգացում:

Ակնկալվող արդյունք

Գետի և ափամերձ տարածքների աղտոտման էական կրճատում:

Ռազմավարական ուղղություն 4. Հանրության մասնակցության և տեղեկատվության ապահովում

Այս ուղղությունը նպատակ ունի ձևավորել պատասխանատու վերաբերմունք մարմարիկ գետի նկատմամբ:

Հիմնական գործողությունները.

- դպրոցական ծրագրեր,
- երիտասարդական նախաձեռնություններ,
- կամավորական շարժումների զարգացում,
- հանրային իրազեկման աշխատանքներ:

Ակնկալվող արդյունք

Համայնքների ակտիվ ներգրավվածություն և բնապահպանական մշակույթի զարգացում:

Ռազմավարական ուղղություն 5. Գետի վերաբերյալ գիտական հետազոտությունների կատարելագործում

Այս ուղղությունն ուղղված է կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Հիմնական գործողությունները.

- Մարմարիկ գետի ավազանի համագործակցության հարթակի ստեղծում.
- համատեղ ծրագրերի իրականացում.
- տվյալների փոխանակման մեխանիզմների ներդրում.
- համատեղ պլանավորման գործընթացների զարգացում:

Ակնկալվող արդյունք.

Համակարգված և արդյունավետ ավազանային կառավարում:

Ռազմավարական ուղղություն 6. Կլիմայական փոփոխություններին հարմարվողականություն

Այս ուղղության նպատակն է նվազեցնել կլիմայական ռիսկերի ազդեցությունը գետի և համայնքների վրա:

Հիմնական գործողությունները.

- կլիմայական ռիսկերի գնահատում.
- ջրախնայող տեխնոլոգիաների խթանում.
- հեղեղումների ռիսկերի կառավարում.
- բնական էկոհամակարգերի դիմակայունության բարձրացում:

Ակնկալվող արդյունք

Ավազանի և համայնքների դիմակայունության աճ կլիմայական փոփոխությունների նկատմամբ:

Ռազմավարական ուղղություն 7. Կայուն զբոսաշրջության և բնական տեսարժանությունների զարգացում

Այս ուղղությունն ուղղված է բնական ռեսուրսների պահպանության և տնտեսական զարգացման համատեղմանը:

Հիմնական գործողությունները.

- էկոտուրիզմի զարգացում.
- բնապահպանական երթուղիների ստեղծում.
- տեղական արտադրանքի խթանում.
- կանաչ բիզնես նախաձեռնությունների աջակցություն:

Ակնկալվող արդյունք

Բնության պահպանության և համայնքների տնտեսական զարգացման միջև հավասարակշռության ապահովում:

8. Քաղաքականության իրականացման մեխանիզմներ

8.1. Ընդհանուր մոտեցում

Մարմարիկ գետի ավազանի պահպանության և կայուն զարգացման քաղաքականության իրականացումը հիմնվում է բազմաշահառու համագործակցության, մասնակցային կառավարման և պատասխանատվության բաշխման սկզբունքների վրա:

Քաղաքականության իրականացումը պահանջում է պետական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, բաղնիքային համայնքի, գիտական կազմակերպությունների, մասնավոր հատվածի և բնակչության համակարգված համագործակցություն:

8.2. Իրականացման հիմնական դերակատարներ

Տեղական իշխանության մարմիններ

Համայնքները հանդիսանում են քաղաքականության իրականացման առաջնային դերակատարներ:

Նրանց հիմնական գործառույթներն են՝

- համայնքային ծրագրերի իրականացում,
- աղբահանության և սանիտարական վիճակի բարելավում,
- հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում,
- համայնքային բնապահպանական նախաձեռնությունների աջակցություն,
- միջհամայնքային համագործակցության ապահովում:

Պետական կառույցներ

Համապատասխան պետական մարմինները պատասխանատու են.

- ոլորտային քաղաքականությունների համակարգման,
- բնապահպանական վերահսկողության,
- ջրային ռեսուրսների կառավարման,
- մոնիթորինգի և տվյալների հավաքագրման,
- պետական ծրագրերի իրականացման համար:

Քաղաքացիական հասարակություն

Հասարակական կազմակերպությունները և նախաձեռնող իմքերը կպատրաստ են.

- իրականացնել հանրային վերահսկողություն,
- աջակցել իրազեկման աշխատանքներին,
- կազմակերպել կամավորական ծրագրեր,
- ներգրավել արտաքին ֆինանսավորում:

Գիտական և կրթական կազմակերպություններ

Նրանց դերն է.

- հետազոտությունների իրականացում,
- տվյալների հավաքագրում և վերլուծություն,
- մասնագիտական խորհրդատվություն,
- բնապահպանական կրթության զարգացում:

8.3. Մարմարիկ գետի ավազանի համագործակցության հարթակ

Քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով առաջարկվում է ձևավորել **Մարմարիկ գետի ավազանի համագործակցության հարթակ**: Հարթակը մշտական խորհրդակցական և համագործակցային ձևաչափ է, որի նպատակն է.

- ապահովել տեղեկատվության փոխանակում,
- քննարկել ավազանի խնդիրները,
- համակարգել համատեղ ծրագրերը,
- մշակել զարգացման նախաձեռնություններ,
- աջակցել ռեսուրսների ներգրավմանը:

Հարթակը կարող է ներառել.

- համայնքների ներկայացուցիչներ,

- պետական կառույցներ.
- ՀԿ-ներ,
- գիտնականներ.
- երիտասարդական խմբեր,
- մասնավոր հատվածի ներկայացուցիչներ:

8.4. Հանրային մասնակցություն

Քաղաքականության իրականացման ընթացքում ապահովվում է բնակչության մասնակցությունը հետևյալ ձևերով.

- հանրային քննարկումներ.
- խորհրդակցություններ,
- կամավորական նախաձեռնություններ.
- բնապահպանական ակցիաներ,
- առցանց և տեղական տեղեկատվական հարթակներ:

8.5. Ֆինանսական և տեխնիկական աջակցություն

Քաղաքականության իրականացումը կարող է ֆինանսավորվել հետևյալ աղբյուրներից.

- համայնքային բյուջեներ,
- պետական ծրագրեր,
- միջազգային կազմակերպություններ,
- դրամաշնորհային ծրագրեր,
- մասնավոր հատվածի ներդրումներ,
- հանրային-մասնավոր համագործակցության նախաձեռնություններ:

8.6. Իրականացման փուլեր

Կարճաժամկետ փուլ (2027–2028)

- համագործակցության հարթակի ստեղծում,
- առաջնային խնդիրների քարտեզագրում,
- մոնիթորինգի համակարգի ձևավորում,
- իրազեկման ծրագրերի մեկնարկ:

Միջնաժամկետ փուլ (2029–2031)

- հիմնական բնապահպանական ծրագրերի իրականացում,
- միջհամայնքային նախագծերի զարգացում,
- ջրի որակի բարելավման միջոցառումների ընդլայնում:

Երկարաժամկետ փուլ (2032–2035)

- համակարգի կայունացում,
- արդյունքների գնահատում,
- քաղաքականության վերանայում և թարմացում

9. Գործողությունների ծրագիր

9.1. Առաջնահերթություն 1. Ջրի որակի բարելավում և աղտոտման կանխարգելում

Գործողություն	Պատասխանատու կողմեր	Ժամկետ	Ցուցիչ
Գետի ջրի որակի մշտադիտարկման համակարգի կատարելագործում	ՇՄՆ, գիտական կազմակերպություններ	2027–2035	Տարեկան առնվազն 12 մոնիթորինգ
Աղտոտման հիմնական աղբյուրների քարտեզագրում	Համայնքներ, ՀԿ-ներ	2027	Քարտեզագրված աղբյուրների ցանկ
Ջրի որակի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների հրապարակում	Համագործակցության հարթակ	Ամեն տարի	1 հաշվետվություն տարեկան
Ջրապահպան գոտիների պահպանության միջոցառումներ	Համայնքներ, պետական մարմիններ	2028–2035	Պահպանվող տարածքների աճ

Ակնկալվող արդյունք

Մարմարիկ գետի ջրի որակի ցուցանիշների աստիճանական բարելավում և աղտոտման աղբյուրների կրճատում:

9.2. Առաջնահերթություն 2. Թափոնների և կեղտաջրերի կառավարում

Գործողություն	Պատասխանատու կողմեր	Ժամկետ	Ցուցիչ
Թափոնների կուտակման հիմնական օջախների գույքագրում	Համայնքներ	2027	Գույքագրման գեկույց
Գետի ափամերձ տարածքների մաքրման արշավներ	Համայնքներ, ՀԿ-ներ	Տարեկան	Առնվազն 4 արշավ
Աղբամանների և հավաքման կետերի ավելացում	Համայնքներ	2027–2029	Տեղադրված նոր կետերի թիվ
Կեղտաջրերի կառավարման հնարավորությունների ուսումնասիրություն	Համայնքներ, մասնագետներ	2027–2028	Ուսումնասիրության գեկույց

Ակնկալվող արդյունք

Ափամերձ տարածքների աղբոտվածության նվազում և կեղտաջրերի կառավարման բարելավման նախադրյալների ստեղծում:

9.3. Առաջնահերթություն 3. Էկոհամակարգերի վերականգնում

Գործողություն	Պատասխանատու կողմեր	Ժամկետ	Ցուցիչ
Ափամերձ տարածքների վիճակի գնահատում	Մասնագետներ	2027	Գնահատման գեկույց
Վերականգնման ենթակա տարածքների ընտրություն	Համայնքներ	2027–2028	Ընտրված տարածքների ցանկ
Ծառատունկ և կանաչապատման ծրագրեր	Համայնքներ, կամավորներ	2028–2035	Տարեկան իրականացված միջոցառումներ
Էրոզիայի ռիսկերի նվազեցման միջոցառումներ	Պետական և համայնքային կառույցներ	2028–2035	Բարելավված հատվածների թիվ

Ակնկալվող արդյունք

Գետի բնական միջավայրերի բարելավում և կենսաբազմազանության պահպանության պայմանների ամրապնդում:

Գործողություն	Պատասխանատու կողմեր	Ժամկետ	Ցուցիչ
Բնապահպանական դասընթացներ դպրոցներում	Կրթական հաստատություններ	Տարեկան	Մասնակիցների թիվ
«Մաքուր Մարմարիկ» կամավորական աշշավներ	Համայնքներ, ՀԿ-ներ	Տարեկան	Առնվազն 2 միջոցառում
Տեղեկատվական նյութերի պատրաստում	Համագործակցության հարթակ	Ամեն տարի	Հրապարակված նյութերի թիվ
Երիտասարդական բնապահպանական նախաձեռնությունների աջակցություն	Համայնքներ	2027–2035	Աջակցված ծրագրերի թիվ

Ակնկալվող արդյունք

Բնակչության բնապահպանական իրազեկվածության և մասնակցության աճ:

Գործողություն	Պատասխանատու կողմեր	Ժամկետ	Ցուցիչ
Մարմարիկ գետի ավազանի համագործակցության հարթակի ստեղծում	Համայնքներ	2027	Հարթակի ձևավորում
Տարեկան համատեղ նիստերի անցկացում	Հարթակ	Տարեկան	Առնվազն 2 նիստ
Համատեղ ծրագրերի մշակում	Համայնքներ	2027–2035	Ծրագրերի թիվ
Տվյալների փոխանակման մեխանիզմի ներդրում	Հարթակ	2028	Գործող համակարգ

Ակնկալվող արդյունք

Ավազանի խնդիրների համակարգված և համագործակցային կառավարում:

Գործողություն	Պատասխանատու կողմեր	Ժամկետ	Ցուցիչ
Կլիմայական ռիսկերի գնահատում	Գիտական կազմակերպություններ	2027–2028	Գնահատման զեկույց
Ջրախնայող տեխնոլոգիաների խթանում	Համայնքներ	2028–2035	Մասնակիցների թիվ
Հեղեղումների ռիսկային հատվածների քարտեզագրում	Մասնագետներ	2028	Քարտեզ
Վաղ նախազգուշացման մեխանիզմների ընեարկում	Պետական մարմիններ	2028–2030	Առաջարկությունների փաթեթ

Ակնկալվող արդյունք

Ավազանի կլիմայական դիմակայունության բարձրացում:

10. Արդյունքների չափման համակարգ

Քաղաքականության արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշները.

Ցուցիչ	Բազային մակարդակ	Թիրախ 2030	Թիրախ 2035
Ջրի որակի մոնիթորինգների թիվ	Գործող մակարդակ	≥7տարեկան	≥12 տարեկան
Գետի մաքրման ակցիաների թիվ	Ոչ կանոնավոր	≥4 տարեկան	≥10 տարեկան
Համատեղ ծրագրերի թիվ	0	≥5	≥10
Բնապահպանական կրթական միջոցառումներ	Սահմանված չէ	Տարեկան աճ	Կայուն համակարգ
Վերականգնվող տարածքներ	Սահմանված չէ	Տարեկան աճ	Կայուն աճ
Համայնքների մասնակցություն	Սահմանված չէ	Աճ	Կայուն մասնակցություն

11. Մոնիթորինգ, գնահատում և հաշվետվողականություն

11.1. Մոնիթորինգի և գնահատման նպատակը

Մոնիթորինգի և գնահատման համակարգի նպատակն է ապահովել Մարմարիկ գետի ավազանի պահպանության և կայուն զարգացման քաղաքականության իրականացման ընթացքի վերահսկումը, արդյունքների գնահատումը, խնդիրների վաղ բացահայտումը և քաղաքականության շարունակական կատարելագործումը:

Մոնիթորինգի համակարգը հնարավորություն կտա.

- գնահատել քաղաքականության իրականացման առաջընթացը.
- չափել նախատեսված արդյունքների ձեռքբերման մակարդակը.
- բացահայտել առկա խնդիրներն ու խոչընդոտները.
- ապահովել թափանցիկություն և հաշվետվողականություն.
- անհրաժեշտության դեպքում վերանայել գործողությունների առաջնահերթությունները:

11.2. Մոնիթորինգի հիմնական սկզբունքները

Մոնիթորինգի և գնահատման գործընթացն իրականացվում է հետևյալ սկզբունքների հիման վրա.

Թափանցիկություն

Քաղաքականության իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի շահագրգիռ կողմերին և հանրությանը:

Մասնակցություն

Մոնիթորինգի գործընթացում ներգրավվում են համայնքները, պետական մարմինները, հասարակական կազմակերպությունները, մասնագիտական կառույցները և քաղաքացիները:

Վիճակագրություն

Գնահատումները պետք է հիմնվեն հավաստի տվյալների, հետազոտությունների և փաստերի վրա:

Ճարտարապետություն

Մոնիթորինգը պետք է իրականացվի պարբերաբար և համակարգված կերպով:

11.3. Մոնիթորինգի կազմակերպումը

Մոնիթորինգի համակարգման նպատակով առաջարկվում է, որ Մարմարիկ գետի ավազանի համագործակցության հարթակը հանդես գա որպես քաղաքականության իրականացման ընթացքի քննարկման և արդյունքների ամփոփման հիմնական հարթակ:

Մոնիթորինգի գործընթացում ներգրավվում են.

Համայնքներ

- ներկայացնում են կատարված աշխատանքների մասին տեղեկատվություն,
- մասնակցում են արդյունքների գնահատմանը,
- ներկայացնում են տեղական խնդիրները և առաջարկությունները:

Պետական կառույցներ

- տրամադրում են պորտային տվյալներ,
- իրականացնում են մասնագիտական վերահսկողություն,
- աջակցում են գնահատման գործընթացին:

Քաղաքացիական հասարակություն

- աջակցում է հանրային վերահսկողությանը,
- մասնակցում է գնահատման գործընթացին,
- ներկայացնում է անկախ դիտարկումներ:

Գիտական և մասնագիտական կազմակերպություններ

- աջակցում են տվյալների վերլուծությանը,
- տրամադրում են մասնագիտական եզրակացություններ,
- մասնակցում են հետազոտություններին:

11.4. Մոնիթորինգի հիմնական ուղղությունները

Քաղաքականության իրականացման ընթացքում գնահատվում են հետևյալ ուղղությունները.

Ջրի որակ

- ֆիզիկաքիմիական ցուցանիշներ,
- կենսաբանական ցուցանիշներ,
- աղտոտման աղբյուրների փոփոխություններ:

Լեռնամակարդների վիճակ

- ափամերձ տարածքների վիճակ,
- կենսաբազմազանության ցուցանիշներ,
- վերականգնվող տարածքների ծավալներ:

Ռեկրեացիոն կառուցվածք

- աղբոտված տարածքների թիվ,

- մաքրման միջոցառումների արդյունքներ.
- աղբահանության արդյունավետություն:

Համայնքային մատակարարում:

- իրականացված միջոցառումների քանակ.
- ներգրավված բնակիչների թիվ.
- կրթական ծրագրերի ընդգրկվածություն:

Արհեստական ռադիոակտիվության:

- իրականացված միջոցառումներ.
- ռիսկերի նվազեցման արդյունքներ.
- դիմակայունության բարձրացման մակարդակ:

11.5. Հաշվետվությունների ներկայացում

Քաղաքականության իրականացման վերաբերյալ պատրաստվում են հետևյալ հաշվետվությունները.

Տարեկան առաջընթացի հաշվետվություն:

Ներառում է.

- կատարված աշխատանքները.
- ձեռք բերված արդյունքներ.
- առաջացած խնդիրները.
- հաջորդ տարվա առաջնահերթություններ:

Միջանկյալ գնահատման զեկույց:

Պատրաստվում է յուրաքանչյուր երեք տարին մեկ և գնահատում է.

- ռազմավարական նպատակների իրականացումը.
- միջոցառումների արդյունավետությունը.
- անհրաժեշտ փոփոխությունները:

Վերջնական գնահատում:

Քաղաքականության գործողության ավարտին իրականացվում է համապարփակ գնահատում՝ քաղաքականության ընդհանուր ազդեցությունը գնահատելու նպատակով:

11.6. Հաշվետվողականության մեխանիզմներ

Հաշվետվողականության բարձրացման նպատակով ապահովվում է.

- տարեկան արդյունքների հրապարակում.
- հանրային քննարկումների կազմակերպում.
- հետադարձ կապերի ներգրավում.
- առաջարկությունների հավաքագրում և քննարկում:

Քաղաքականության իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը պետք է լինի հնարավորինս բաց և հասանելի:

11.7. Քաղաքականության վերանայում

Քաղաքականությունը կենդանի փաստաթուղթ է և կարող է վերանայվել հետևյալ դեպքերում.

- նոր բնապահպանական մարտահրավերների առաջացման դեպքում.
- օրենսդրական փոփոխությունների դեպքում.
- նոր գիտական տվյալների ի հայտ գալու դեպքում.
- մոնիթորինգի արդյունքներով անհրաժեշտության հիմնավորման դեպքում:

Վերանայումը պետք է իրականացվի շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և հիմնված լինի փաստերի ու տվյալների վրա:

12. Եզրակացություն

Մարմարիկ գետը Կոտայքի մարզի կարևորագույն բնական ռեսուրսներից է, որն ունի բնապահպանական, սոցիալական, տնտեսական և մշակութային բացառիկ նշանակություն: Գետի ավազանը ոչ միայն կենսական դեր է կատարում տարածաշրջանի ջրային անվտանգության և կենսաբազմազանության պահպանման գործում, այլև կարևոր նախադրյալ է համայնքների կայուն զարգացման, գյուղատնտեսության, գրոսաշրջության և բնակչության բարեկեցության համար:

Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Մարմարիկ գետի ավազանը բախվում է մի շարք մարտահրավերների՝ կապված ջրի որակի վատթարացման, կենցաղային և գյուղատնտեսական աղտոտման, թափոնների կառավարման, էկոհամակարգերի խոցելիության և կլիմայական փոփոխությունների ազդեցությունների հետ: Միաժամանակ, ավազանն ունի զգալի ներուժ՝ դառնալու բնապահպանական պատասխանատու կառավարման, համայնքային համագործակցության և կայուն զարգացման հաջողված օրինակ:

Սույն քաղաքականությունը սահմանում է Մարմարիկ գետի ավազանի պահպանության և կայուն զարգացման միասնական տեսլական, նպատակներ և ռազմավարական ուղղություններ՝ ուղղված ջրային ռեսուրսների պահպանությանը, էկոհամակարգերի վերականգնմանը, աղտոտման աղբյուրների նվազեցմանը, համայնքային մասնակցության խթանմանը և կլիմայական փոփոխություններին հարմարվողականության բարձրացմանը:

Քաղաքականության հաջող իրականացումը հնարավոր կլինի միայն պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության, գիտական կազմակերպությունների, մասնավոր հատվածի և բնակչության ակտիվ ու շարունակական համագործակցության պայմաններում: Հատուկ նշանակություն ունի միջհամայնքային համագործակցության զարգացումը, քանի որ Մարմարիկ գետի պահպանությունը և արդյունավետ կառավարումը մեկ համայնքի սահմաններում լուծվող խնդիր չէ, այլ պահանջում է ամբողջ ավազանի մակարդակով համակարգված մոտեցում:

Քաղաքականության շրջանակում նախատեսված միջոցառումների իրականացումը կնպաստի.

- Մարմարիկ գետի ջրի որակի բարելավմանը.
- աղտոտման աղբյուրների կրճատմանը.
- գետի և հարակից էկոհամակարգերի պահպանությանն ու վերականգնմանը.
- կենսաբազմազանության պահպանմանը.
- համայնքների բնապահպանական իրազեկվածության և մասնակցության բարձրացմանը.
- կլիմայական ռիսկերի նկատմամբ դիմակայունության ամրապնդմանը.
- կայուն գրոսաշրջության և տեղական զարգացման հնարավորությունների ընդլայնմանը:

Մարմարիկ գետի ավազանի պահպանությունը և կայուն զարգացումը երկարաժամկետ գործընթաց է, որի հաջողությունը կախված է ոչ միայն ծրագրերի իրականացումից, այլև համայնքների, կազմակերպությունների և քաղաքացիների համատեղ պատասխանատվությունից ու հետևողական աշխատանքից: Սույն քաղաքականությունը նպատակ ունի ծառայել որպես այդ համագործակցության հիմք և ուղղորդող փաստաթուղթ՝ նպաստելով Մարմարիկ գետի բնական արժեքների պահպանմանը և ապագա սերունդների համար առողջ ու կենսունակ միջավայրի ապահովմանը:

13. Հավելվածներ (քարտեզներ, ջրի որակի տվյալներ, համայնքների նկարագրություններ, աղբյուրներ):

(Հավելված 1)

Մարմարիկ գետի էկոհամակարգի վերլուծություն

Մարմարիկ գետի ավազանը (մակերեսը՝ 427 կմ²) ընդգրկում է տարածք, որը հյուսիսից սահմանափակված է Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջերով, իսկ հարավից՝ Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիսային (հյուսիս-արևելյան) լանջերով: Արևմուտքում ավազանի սահմանը ձևավորվում է նշված լեռնաշղթաների հատման գոտով, իսկ արևելքում հիմնական գետը միանում է Հրազդան գետին:

Ավազանի առավել բարձր կետը Թեժլեր լեռն է (3101,0 մ), որը գտնվում է Փամբակի լեռնաշղթայի փոքր հարավային ելուստում՝ Թեժ գետի վերին հոսանքում, նրա հովտի ձախ լանջին: Ավազանի ամենացածր կետը Մարմարիկ գետի գետաբերանն է (1703,8 մ), Ջրառատ գյուղի մոտ՝ Հրազդան գետին միանալու տեղում:

Ավազանի հիմնական գետը՝ Մարմարիկը, սկիզբ է առնում Ծաղկունյաց լեռնաշղթայի հյուսիս-արևելյան լանջից՝ 2480–2510 մ բարձրության վրա: Այն հավաքում է իր ջրերը և սկիզբ հոսքը ինչպես Փամբակի, այնպես էլ Ծաղկունյաց լեռնաշղթաների լանջերից. գետի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 45 կմ:

Մեղրաձոր գյուղից հովիտն ընդարձակվում է, ձեռք բերում հարթավայրային բնույթ: Գետի հոսքը ձևավորվում է Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաներից հոսող գետակների ջրերով:

Մարմարիկ գետը տիպիկ լեռնային գետ է, և նրա սնման հիմնական աղբյուրներն են՝ հալոցքային 55%, անձրևային 18% և ստորերկրյա 27% ջրերը: Գետի ջրի միջին տարեկան ելքը կազմում է 1.67 մ³/վ, հոսքի մոդուլը 18.3 լ/վրկ կմ²: Մարմարիկի ավազանում, որպես կանոն, գարնանային վարարումները, որի ընթացքում անցնում է միջին տարեկան հոսքի 78%-ը, սկսվում են ապրիլի սկզբին և շարունակվում են մինչև հուլիսի առաջին տասնօրյակ: Վարարման միջին տևողությունը 95 օր է: Վարարման ամենավաղ ժամկետը մարտի 1-ն է (2010 թ.), ամենաուշը՝ ապրիլի 19-ը (2007 թ.): Առավելագույն ելքերը դիտվում են մայիսի կեսերին: Վարարման ավարտի ամենաուշ ժամկետը օգոստոսի 8-ն է (1963 թ.): Գարնանային վարարումների ընթացքում բացարձակ առավելագույն ելքը Մարմարիկ-Հանքավան դիտակետում կազմել է 33.4 մ³/վ և դիտվել է 2007 թվականի մայիսի 11-ին: Ջրերն օգտագործվում են ոռոգման և արդյունաբերական ձեռնարկությունների ջրամատակարարման նպատակներով:

Տարածքի ռելիեֆը բնութագրվում է մեղմ կտրտվածությամբ՝ ոչ խորը ձորակների առկայությամբ: Մարմարիկ գետը հանդիսանում է տարածքի էրոզիայի տեղական բազիսը և դրենաժավորում է ավազանի գրեթե ամբողջ մակերևութային հոսքը:

Մարմարիկ գետի երկայնքով դիտվում են երկրաբանական, հիդրոերկրաբանական և հիդրոերկրաքիմիական բազմազան փոփոխություններ, որոնք պայմանավորված են ինչպես տարածքի երկրաբանական կառուցվածքով, այնպես էլ անտրոպոգեն ազդեցություններով:

Վերջիններս ձևավորում են ավազանի բավականին բազմազան, բարդ և հետաքրքիր երկրաբանական պատկերը: Այստեղ տեղակայված են Հանքավանի և Մեղրաձորի հանքավայրերը, հանքային ջրերի բազմաթիվ ելքեր, այդ թվում հայտնի Հանքավան հանքային ջուրը: Գործում են ինչպես հին, հաճախ փլուզված, այնպես էլ համեմատաբար նոր լեռնային փորվածքներից դուրս ելող հանքավայրային ջրեր: Խմելու նպատակով օգտագործվում են աղբյուրների բաղցրահամ ջրերը:

(Հավելված 2)

Մարմարիկ գետր շուրջ գտվող համայնքների բնութագիրը, պատմական ակնարկ, պատմամշակութային վայրեր և հուշարձաններ:

Հանքավան

Սահմանակից համայնքները - Արտավազ, Ալպարան, Վանաձոր
Գյուղի մակերեսը - 8141 հա
Հեռավորությունը մայրաքաղաքից - 83 կմ
Բնակչության կազմը - հայեր
Բնակչության թիվը – 112
Օգտակար հանածոներ - մոլիբդեն, ոսկի
Արտադրական ձեռնարկություններ - «Rare» հանքային ջրերի գործարան
Բնակչության հիմնական զբաղմունքը – անասնապահություն, գրոսաշրջություն
Պատմական ակնարկ
Հեռավորությունը մարզկենտրոնից 35 կմ հյուսիս-արևմուտք: Բնակչությունը հիմնականում 1990-
Հանքավանը բարձր լլիմայական առողջարան է: Կլիման չափավոր է, ամառը՝ զով, խոնավ, ձմեռը՝ մեղմ, ձյունառատ, երկարատև: Հանքավանի աղբյուրների ջրերն իրենց քիմիական կազմով նման են եսենտուկյան ջրերին: Հանքավանում գործում են առողջարաններ և հանգստյան տներ, հանքային ջրերի, տաք ջրերի ավազաններ:: **Հանքավանում նշանավոր պատմաշակութային կոթողներից է**: Կայծոլիկ հունական եկեղեցին և 7-րդ դարի հուշակոթողներ:

Արտավազ-Ֆյունիկ

Սահմանակից համայնքները - Մեղրաձոր և Հանքավան
Գյուղի մակերեսը - 10638հա
Հեռավորությունը մայրաքաղաքից - 65 կմ
Բնակչության թիվը - 955
Բնակչության կազմը - հայեր
Օգտակար հանածոներ - չկա
Կրթական հաստատություններ - 2 միջնակարգ դպրոց
Արտադրական ձեռնարկություններ - չկա
Բնակչության հիմնական զբաղմունքը – գյուղատնտեսություն, անասնապահություն, գրոսաշրջություն
Պատմական ակնարկ
Գտնվում է Մարմարիկ գետի ափին, Հրազդանից 24 կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս-արևմուտք: Ներկայումս իր մեջ ներառում է նաև Ֆյունիկ բնակավայրը: Կլիման առողջարար է, ամառային հանգստի համար օգտակար: Գյուղի տարածքում են գտնվում հանգստյան տներ, ճամբարներ: Արտավազում նշանավոր պատմաշակութային կոթողներից է՝ Արտավազդտախտ վանական համալիրը 7-րդ դար, հին խաչքարեր և Դամբարանադաշտ Ք.ա 2-1 հազարամյակ:

Մեղրաձոր

Հեռավորությունը մայրաքաղաքից - 60կմ
Մակերեսը - 12429 հա
Բնակչության կազմը-հայեր
Բնակչության թիվը-2711
Օգտակար հանածոներ -ոսկի, պղինձ, նեֆելինային սիենիտների 18 քիմիական նյութերով, ալյումին
Կրթական հաստատություններ - միջնակարգ դպրոց, մսուր-մանկապարտեզ
Մշակութային հաստատություններ - մարզամշակութային կենտրոն, փայտարվեստի թանգարան
Արտադրական ձեռնարկություններ - Մեղրաձորի ոսկու հանքավայր
Բնակչության հիմնական զբաղմունքը - գյուղացիական տնտեսություն է՝ անասնապահություն, հողագործություն, մեղվաբուծություն,գրոսաշրջություն:
Պատմական ակնարկ
Մեղրաձո՛րը սարերի, ձորերի, կարկաչուն աղբյուրների, ու թավուտ անտառների գյուղ է:
Գյուղը գտնվում է Փամբակի և Ծաղկունյաց լեռնագագաթների հովտում, Մարմարիկ և Մեղրաձոր գետերի /Հրազդանի աջակողմյան վտակներ/ ձեղտային, ծովի մակերեսից 1800մ բարձրության վրա: Փամբակի հարավսահայոց լանջերը լերկ են, ժայռոտ ու կտրտված: Լանջերի ընդերքը հարուստ է ոսկով, պղնձով և նեֆելինային սիենիտների 18 քիմիական նյութերով, ալյումինը գերակշիռ է: Մեղրաձորում գործում է ոսկու հանքը 1987թվականից:

Թեժառույց կոչվել է անտիկ ժամանակներից մինչև՝ այնուհետև 17-րդ Մարմարիկ Մեղրաձոր թեժ գիծ արագահոս գետերի դեպռայում գտնվելու համար: Անվան արմատներն են «ԹԵԺ» և «Առու» բառերը: Մեղրաձորի նշանավոր պատմաշակութային կոթողներից է՝ Սուրբ Աստվածածին եկեղեցին. Թեժառույց վանական համալիրը 12-13-րդ դարեր, հին խաչքարեր, մատուռներ, դամբարաններ, դամբարանադաշտ, ամրոցներ:

Մարմարիկ

Սահմանակից համայնքները - Մեղրաձոր, Աղավնաձոր
Գյուղի մակերեսը - 3144 հա
Հեռավորությունը մայրաքաղաքից - 58 կմ
Բնակչության թիվը - 758
Բնակչության կազմը - հայեր
Օգտակար հանածոներ - չկա
Կրթական հաստատություններ - միջնակարգ դպրոց
Մշակութային հաստատություններ – մշակույթի տուն
Արտադրական ձեռնարկություններ - չկա
Բնակչության հիմնական զբաղմունքը – անասնապահություն, գյուղատնտեսություն, գրոսաշրջություն
Պատմական ակնարկ
Մարմարիկ գյուղը գտնվում է Փամբակ և Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև. Մարմարիկ գետի հովտում. Հրազդանից 12 կմ հյուսիս-արևմուտք: Մարմարիկի ապրանքը հայտնի են իրենց առևտրական աղբյուրներով, որը բավարարում է գյուղին 100 տոկոսով: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի, կաղամբի, մշակությամբ: Գյուղում գտնվում է Սուրբ Հովհաննես եկեղեցին: Գյուղի ջրերով սնվում է նաև Մեղրաձոր գյուղը: Կլիման ձմռանը զրահապատ է, ամռանը՝ զով: Մարմարիկի **նշանավոր պատմաշակութային կոթողներից է** Սուրբ Հովհաննես եկեղեցի 9-10 դդ, եկեղեցի 15-րդ դար, դամբարանադաշտ Ք. ա 2-1 հազ.

Աղավնաձոր

Գյուղի մակերեսը - 3566 հա
Հեռավորությունը մայրաքաղաքից - 60 կմ
Բնակչության թիվը - 1274 մարդ
Բնակչության կազմը - հայեր
Օգտակար հանածոներ - գրանիտ
Կրթական հաստատություններ - Միջնակարգ միջնակարգ դպրոց
Մշակութային հաստատություններ - Աղավնաձորի «Արտերնատիվ» երտասարդական կենտրոն
Բնակչության հիմնական զբաղմունքը - անասնապահություն, հողագործություն, գրոսաշրջություն
Պատմական ակնարկ
Գյուղը գտնվում է Փամբակ և Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև: Գյուղում զարգացած է գրոսաշրջությունը, քանի որ այն ունի գեղատեսիլ վայրեր և գրեթե բացառապես հանգստյան տներ: Աղավնաձորի նշանավոր պատմաշակութային կոթողներից է՝ Ս. Հովհաննես եկեղեցին 17-րդ դար, Ս Աստվածածին եկեղեցի 17-րդ դար, Մատռո, հին խաչքարեր, դամբարանադաշտ Ք. ա 4-3 հազ.

Ծաղկաձոր

Սահմանակից համայնքները - Արտավազ, Ապարան, Վանաձոր
Գյուղի մակերեսը - 4000 հա
Հեռավորությունը մայրաքաղաքից - 60 կմ
Բնակչության կազմը - հայեր, ռուսներ, մոլականներ
Բնակչության թիվը -1589
Օգտակար հանածոներ - չկա
Կրթական հաստատություններ -մրջնակարգ դպրոց, մանկապարտեզ
Մշակութային հաստատություններ - մշակույթի տուն
Բնակչության հիմնական զբաղմունքը - գրոսաշրջություն
Պլատմական ակնարկ
Ծաղկաձորի անունն արդեն իսկ հուշում է, որ այն հնուց ի վեր գրավիչ է եղել որպես բնակավայր և հանգստավայր:
«Ծաղիկների ձոր»-ում (ինչ բառագի նշանակում է բույսերի անուն) սարդը բնակություն է հաստատել դեռևս III-

V դդ: Ծաղկունյաց լեռների հարավ-արևելյան մասում ընկած գեղատեսիլ հովտի անտառներում որսի են դուրս եկել հայոց արքաները և նախարարները (իշխանները): Արտոնյալ դասին տեղանքը հրապուրել է իր մեղմ, առողջարար կլիմայով: Դարեդար Ծաղկաձորը մնացել է իշխանների տիրապետության տակ:
Վաղ միջնադարում (IV-Vդդ.) այս հողերը պատկանել են հայոց թագավորի կալվածքները տնօրինող Վարաժնունի տոհմին: VIդ.-ում հովիտն անցավ հայկական ազդեցիկ Կամսարական տոհմի տիրապետության տակ, որը սերվել էր Իրանի 7 մնծագույն տներից մեկի՝ Կարին-Պահլավիդներից: Կամսարական տոհմի հետնորդ, Պահլավունի տոհմի առաջնորդ Գրիգոր Մագիստրոսը 1033թ. հրամայեց Ծաղկաձորում կառուցել եկեղեցի, որը կոչեցին Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով: Այսպես հիմնվեց Կեչառիս վանական համալիրը՝ հովտի իրական գանձը:
Ջաղաքը պահպանեց իր հայտնի հանգստավայրի կարգավիճակը նաև խորհրդային իշխանության օրոք: Այստեղ օլիմպիադաներին և աշխարհի առաջնություններին են պատրաստվել աշխարհի տարբեր երկրների հավաքականները: Իսկ երբ 1972թ.-ին Թեղենիս լեռան լանջերին կառուցվեց ռոպանուղին, Ծաղկաձորը հայտնի դարձավ նաև որպես լեռնադահուկային կուրորտ:
Այսօր Ծաղկաձորը ժամանակակակից հանգստավայր է՝ զարգացած տուրիստական ենթակառուցվածքով, հիասքանչ շրջակա միջավայրով, որն առաջարկում է համաշխարհային չափանիշներին համապատասխան ծառայություններ: Արևմուտքից արևելք հոսում է Տանձաղբյուր գետը՝ լցվելով Հրազդան գետը:
Ծաղկաձորը նշանավոր պատմաշրջակայքային կոթողներից է է Կեչառիս վանական համալիրը 11-13 դդ, Սուրբ Հարություն եկեղեցի 13-րդ դար, վերջին շրջանում պեղված հնավայրեր, հին խաչքարեր և Օրբելի եղբայրների թանգարանը:

(Հավելված 3)

Մարմարիկի հովտում գտվող համայնքներ, Ծաղկաձոր
Բնակչության թիվը

Համայնք / բնակավայր	Վարչական կարգավիճակ	Բնակչություն (2011)	Բարձրություն (մ)	Տնտեսություն / բնույթ
Հանքավան	Գյուղ	~116	~1 900	Գյուղատնտեսություն, զբոսաշրջություն
Արտավազ	Գյուղ	~467-541	1 850-1 994	Գյուղատնտեսություն, զբոսաշրջություն
Փյունիկ	Գյուղ	~316	~1 850	Գյուղատնտեսություն, զբոսաշրջություն
Մարմարիկ	Գյուղ	~720	~1 750	Գյուղատնտեսություն, զբոսաշրջություն
Աղավնաձոր	Գյուղ	~1 232	1 640-1 770	Գյուղատնտեսություն, զբոսաշրջություն
Մեղրաձոր	Գյուղ	~2 309	~1 820	Գյուղատնտեսություն, մեղվաբուծություն, զբոսաշրջություն
Ծաղկաձոր	Քաղաք	~1 010	~1 841	Զբոսաշրջություն
Ծաղկաձոր	խոշորացված համայնք	~5893		

(Հավելված 4)

Հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ

Ըստ «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարության, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014 թ. N- 1059-Ն որոշում, Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները ներառում են 3 պետական արգելոց («Խոսրովի անտառ», «Շիկահող» և «Էրեբունի»), զբաղեցնում են 35 439.6 հեկտար տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 1.19%-ը, 4 ազգային պարկ («Սևան», «Դիլիջան», «Արփի լիճ» և «Արևիք»), զբաղեցնում են 236 802.1 հեկտար

տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 7.96 %-ը, ինչպես նաև 232 բնության հուշարձան և 27 պետական արգելավայրեր, որոնք զբաղեցնում են 114 812.7 հեկտար տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 3.95 %-ը:

Բնության հատուկ պահպանվող տարածքները պետության կողմից բնության տարբեր տարածքներում որևէ տնտեսական գործունեության սահմանափակումը կամ առհասարակ արգելումն է օրենսդրությամբ, որն ուղղված է կենսաբազմազանությունը և էկոհամակարգերը պահպանելուն:

Բնության հատուկ պահպանվող տարածքների շնորհիվ ապահովվում են եզակի էկոհամակարգերի, հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող, էնդեմիկ, ռելիկտային տեսակների պահպանությունը և վերարտադրությունը բնական միջավայրում:

Բնության հատուկ պահպանվող տարածք կարող են լինել մակերեսային և ստորերկրյա ջրավազանները, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի առանձնացված տեղամասերը:

Բնության հուշարձանները բնության բացառիկ կամ տիպիկ, գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող բնական օբյեկտներ են:

Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքները դասակարգվում են՝

ա) ըստ նշանակության՝ միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների.

բ) ըստ կատեգորիայի՝ պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի:

2. Տարբեր կատեգորիաներ ունեցող բնության հատուկ պահպանվող տարածքները կարող են միավորվել էկոլոգիական ցանցում՝ էկոլոգիական միջանցքների և պահպանական գոտիների միջոցով:

3. Բնության հատուկ պահպանվող տարածքները, ինչպես նաև բնական և մարդածին տարբեր աստիճանի ազդեցության ենթարկված էկոհամակարգերը, լանդշաֆտները կարող են միավորվել մեկ ամբողջական համակարգի՝ կենսոլորտային տարածքների մեջ, որոնք ստեղծվում են համընդհանուր էկոլոգիական մոնիթորինգի իրականացման և բնօգտագործման արդյունավետ մեթոդների, ձևերի մշակման ու ներդրման նպատակով: Կենսոլորտային տարածքում ընդգրկված տարբեր կատեգորիաների բնության հատուկ պահպանվող տարածքում գործում են սույն օրենքով այդ կատեգորիաների համար նախատեսված ռեժիմները և սահմանափակումները:

4. Կենսոլորտային տարածքները կարող են ընդգրկվել միջազգային էկոլոգիական ցանցում՝ համաձայն միջազգային կազմակերպությունների կանոնակարգերի և ընթացակարգերի:

Մարմմարիկի հովտում կա մի քանի հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ

«Արզական-Մեղրաձորի»


Հիմնադրման տարեթիվը - **09.04.1971 թ. (ՀԱՍՀ Մինիստրների սովետի N 212 կարգադրություն)**
Տարածքը – **13 532 հա**
Գերատեսչական ենթակայությունը - **ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն**
Կառավարող կազմակերպությունը - **«Հայանտառ» ՊՈՒԿ**
Տեղադիրքը - **ՀՀ Կոտայքի մարզ, Մարմարիկ և Դալարիկ գետերի ավազաններ, ծովի մակարդակից 1600-2100 մ բարձրության վրա**
Պահպանության օբյեկտը - **անտառային հազվագյուտ կենդանիներ (բծավոր եղջերու, գորշ արջ, կովկասյան մարեհավ)**

«Բանքսի սոճու»

Հիմնադրման տարեթիվը - 29.01.1959 թ. (ՀԱՍՀ Մինիստրների սովետի N 20 որոշում)
Տարածքը – 4 հա
Գերատեսչական ենթակայությունը - ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
Կառավարող կազմակերպությունը - «Հայանտառ» ՊՈՒԿ
Տեղադիրքը - ՀՀ Կոտայքի մարզ, Մարմարիկ գետի ափազան, Ծաղկունյաց լեռնաշղթայի լանջեր, ծովի մակարդակից 1800-2000 մ բարձրության վրա
Պահպանության օբյեկտը - Բանքսի սոճու եզակի տնկարանային պուրակ

«Կովկասյան մրտավարդենու»

Հիմնադրման տարեթիվը - 29.01.1959 թ. (ՀՍՍՀ Մինիստրների սովետի N 20 որոշում)
Տարածքը – 1000 հա
Գերատեսչական ենթակայությունը –ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
Կառավարող կազմակերպությունը - «Հայանտառ» ՊՈԱԿ
Տեղադիրքը - ՀՀ Լոռու մարզ, Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների հյուսիսահայաց լանջեր, ծովի մակարդակից 1900-2200 մ բարձրության վրա
Պահպանության օբյեկտը - ռելիկտային Մրտավարդ կովկասյան տեսակի թփուտներ



Մարմարիկի հովիտ. Բնության հուշարձաններ և պահպանվող տարածքներ

(Հավելված 5)

Մարմարիկ ջրամբար

Մարմարիկ գետի ավազանում է գտնվում **Մարմարիկի ջրամբարը**, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Արտավազ համայնքից 0.5 կմ հեռավորության վրա՝ Մարմարիկ գետի հունում:

Ջրամբարն ունի 55 մ բարձրությամբ պատվար, 24 մլն խմ ընդհանուր ծավալ և 23 մլն խմ օգտակար ծավալ: Մարմարիկի ջրամբարն իր նշանակությամբ դասվում է պետական նշանակության օբյեկտների ցանկում:

Ջրամբարը կառուցվել է 1974 թ.-ին, սակայն չէր շահագործվել մինչև 2011 թվականը, քանի որ 1975թ.-ին շահագործման հանձնելուց հետո, առաջին ջրալցման ժամանակ, դեռևս ամբողջ ծավալով չլցված, ջրամբարը վթարվել է. պատվարի ներքին շեպը, ապա և մոտ 500 հազար խմ բնահող սահել են դեպի ստորին բյեֆը:

Պատվարը վերականգնվել է 2011 թ.-ին: Մարմարիկի ջրամբարի առաջին ջրալցումը սկսվել է 2013թ. մարտին: Վերականգնված ջրամբարը լուծել է Մեղրաձորի, Աղավնաձորի, Մարմարիկի, Ֆյունիկի և Հրազդանի ոռոգման ջրապահովության խնդիրը (Կոտայքի մարզի 1600 հա գյուղատնտեսական հողատարածք ստանում է մոտ 9 մլն խմ ոռոգման ջուր): Վերականգնված

պատվարը հնարավորություն է տալիս կարգավորել Մարմարիկ գետի հոսքը: Մարմարիկի ջրամբարի շահագործման շնորհիվ ջրի բացթողումները Սևանա լճից նվազել են տարեկան 23 մլն խմ-ով:

2024 թվականի ընթացքում դիտարկվող հինգ ջրամբարներում ջրի առավելագույն լցվածությունը բավական բարձր է եղել: Ագատի և Մարմարիկի ջրամբարներում առավելագույն լցվածությունը կազմել է 100%: 2024 թվականին դիտված առավելագույն ծավալները և դրանք արտահայտված տոկոսներով ընդհանուր ծավալի նկատմամբ:

Մարմարիկ ջրամբարի ջրալցվածությունը

	Ջրամբար	Տարողությունը, մլն.մ3	2024, 2025, 2026 հույիս թվականներին ջրի առավելագույն դիտված	
			ծավալը, (մլն.մ3)	արտահայտված ընդհանուր ծավալի նկատմամբ, %
	Մարմարիկ	24	23,99	100


Մարմարիկ ջրամբարի բնութագրիչները

Անվանումը	Հայելու մակերես (հա)	Ծավալը (մլն մ^3)	Պատվարի բարձրություն (մ)	Կառուցման տարին	Ջրօգտագործման նպատակը
Մարմարիկ	1.20	24.3	55.5	2014	ոռոգում


(Հավելված 6)

Մարմարիկի հովտի բուսական և կենդանական աշխարհը

ՀՀ-ում հանդիպում է 3200 բարձրակարգ բուսատեսակ:
ՀՀ-ում կենդանական աշխարհը, հանդիպում է 12000 կենդանատեսակ: Դրանցից կաթնասուններ են 75-ը, թռչուններ՝ 302-ը, սողուններ՝ 43-ը, անողնաշարավորներ՝ ավելի քան 11000-ը:
Մարմարիկի հովիտը նույնպես առանձնանում է իր յուրատեսակ բուսական և կենդանական աշխարհով:



Մարմարիկի հովտի բուսական և կենդանական աշխարհի քարտեզ



(Հավելված 7)

Մարմարիկ գետի ջրի քիմիական որակը և դրա դինամիկան 2019-2025 թթ.

ՀՀ գետերի եւ ջրամբարների ջրի քիմիական որակը գնահատվում է համաձայն ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 _Ն որոշում) սահմանված նորմերի: ՀՀ-ում մակերեւութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) եւ «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձեւավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:
Մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 91 հիդրոլոգիական դիտակետում, այդ թվում՝ 82 գետային, 5 ջրամբարային (Արփիլիճ, Ախուրյան, Մարմարիկ, Ապարան, Ազատ) և 4 լճային (Սևանա լճում): 91 դիտակետերում իրականացվել են ամենօրյա դիտարկումներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ (ջրի մակարդակ, ջրի և օդի ջերմաստիճան, սառցային երևույթներ): 80 գետային և 2 ջրանցքի դիտակետերում իրականացվել են ջրի ելքի չափումներ տարեկան 25-35 անգամ: 91 դիտակետից 61-ը օպերատիվ դիտակետեր են, որոնցից ամենօրյա ռեժիմով տվյալներ են ստացվել մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ:

Այս պահին Մարմարիկ գետը համարվում է Հայաստանի ամենաաղտոտված գետերից մեկը, այն ունի ամենաբարձր՝ 5-րդ դասի աղտոտվածություն, աղտոտիչը մանգանն է: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2020թ. տարեվերջյան տվյալների համաձայն՝ Մարմարիկի գետաբերանում գետն աղտոտված է եղել նաև վանադիումով, երկաթով, բարիումով, կալիումով: Նախագծի մեջ նշված է, որ «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից 2020թ. հանքից վերև և 500 մ ներքև ընկնող գետահատվածներում իրականացված մոնիթորինգի արդյունքները ցույց են տվել, որ Մարմարիկ գետի ջրերում մկնդեղի և որոշվող մետաղների պարունակությունները համապատասխանում են ջրի 1-2-րդ դասերի որակին, սուլֆատների, քլորիդների պարունակությունը և հանքայնացումը՝ ջրի 3-րդ դասի որակին: Կախված նյութերի պարունակությամբ Մարմարիկ գետն ունի ջրի որակի 5-րդ դաս:
2019 Մարմարիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):
Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Ծաղկաձոր քաղաքից ներքև ընկած հատվածում «վատ» (5-րդ դաս):
2020 Մարմարիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հունվարին գնահատվել է՝ «վատ» (5-րդ դաս):
Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):
Ծաղկաձոր քաղաքից ներքև գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):
2021 Մարմարիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):
Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում «վատ» (5-րդ դաս): Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):
2022թ Մարմարիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):
Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի ջրի որակը Ծազկաձոր քաղաքից վերև և ներքև հատվածներում փետրվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

2023թ Մարմարիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):
Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի ջրի որակը Ծազկաձոր քաղաքից վերև «միջակ» (3-րդ դաս) և ներքև հատվածներում փետրվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

2024թ. Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով:
Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, վանադիումով, երկաթով, բարիումով և ալյումինով, Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված՝ ամոնիում իոնով և մանգանով:

2025 թ. Մարմարիկ գետի ջրի որակը գետաբերանում փետրվարին և մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):
Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում փետրվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ փետրվարին և մարտին՝ «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում հունիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ ապրիլին՝ «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):
Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ ապրիլին և հունիսին՝ «վատ» (5-րդ դաս):
Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում հուլիսին և օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ երեք ամիսների ընթացքում՝ «անբավարար» (4-րդ դաս):
Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում հուլիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), օգոստոսին և սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ երեք ամիսների ընթացքում՝ «վատ» (5-րդ դաս):

Գետերի ջրերի որակը 2019-2025 թվականներին պայմանավորված փոսփատ իոնով, վանադիումով եւ ընդհանուր փոսփորով և այլ քիմյական տարրերով:

«գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) եւ «վատ» (5-րդ դաս)

Տարեթիվ	Ջրային օբյեկտ	Գիտակետի տեղադրությունը	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
2019	Մարմարիկ	Գետաբերան	ԹԿՊՏ, վանադիում, կոբալտ, երկաթ	3-րդ	4-րդ
			Մանգան, ալյումին	4-րդ	
	Ծաղկաձոր	Ծաղկաձոր քաղաքից ներքև	ԹԿՊՏ, նիտրիտ իոն, երկաթ, ԸԱԱ	3-րդ	5-րդ
			Վանադիում, կոբալտ, կապարտ, ընդհանուր փոսփոր	4-րդ	
			Ամոնիում իոն, փոսփատ իոն, մանգան	5-րդ	
2020	Մարմարիկ	Գետաբերան	Վանադիում, բարիում, կապարտ	3-րդ	5-րդ
			Մանգան	5-րդ	
	Ծաղկաձոր	Ծաղկաձոր քաղաքից վերև	ԹՔՊՏ, կոբալտ, երկաթ	3-րդ	4-րդ
			Վանադիում, մանգան, ալյումին	4-րդ	
		Ծաղկաձոր քաղաքից ներքև	ԹԿՊՏ, ԹՔՊՏ, նիտրիտիոն, կոբալտ	3-րդ	5-րդ
			Փոսփատ իոն, բարիում, կապարտ, ԸԱԱ, ընդհանուր փոսփոր	4-րդ	
			Ամոնիում իոն, մանգան, վանադիում	5-րդ	

2021	Մարմարիկ	Գետաբերան	Վանադիում. երկաթ. բարիում, կալիում. ընդհանուր ֆոսֆոր. բյորիդ իոն, ՔԱՀ	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն. ֆոսֆատ իոն. նատրիում	4-րդ	
			Մանգան	5-րդ	
	Ծաղկաձոր	Ծաղկաձոր բաղաքից վերև	Ցինկ, վանադիում. երկաթ. բարիում. ալյումին	3-րդ	4-րդ
			Մանգան	4-րդ	
		Ծաղկաձոր բաղաքից ներքև	ՌԿՊՏ,ՌԳՊՏ, կոբալտ. երկաթ. բյորիդ իոն. սուլֆատ իոն, ՔԱՀ, ԿՆ	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն. ֆոսֆատ իոն, վանադիում, բարիում, կալիում, նատրիում, ՔԱՀ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն. մանգան	5-րդ	
2022	Մարմարիկ	Գետաբերան	Երկաթ. բյորիդ իոն. ՔԱՀ	3-րդ	5-րդ
			Մանգան	5-րդ	
	Ծաղկաձոր (Տանձաղբյուր	Ծաղկաձոր բաղաքից վերև	Վանադիում. կոբալտ. եր կաթ. ալյումին	3-րդ	5-րդ
			Մանգան	5-րդ	
		Ծաղկաձոր բաղաքից ներքև	ՌԿՊՏ. կոբալտ. երկաթ. ալ յումին. ՔԱՀ. բյորիդ իոն. սուլֆատ իոն. ՔԱՀ	3-րդ	5-րդ
			Բարիում	4-րդ	
			Ամոնիում իոն. ֆոսֆատ իոն. մանգան. վանադիում. ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	
2023	Մարմարիկ	Գետաբերան	Ամոնիում իոն. մանգան	5-րդ	5-րդ
	Ծաղկաձոր	Ծաղկաձոր բաղաքից վերև	Մմանգան. վանադիում. երկաթ. բարիում. ալյումին	5-ջդ	5-րդ
		Ծաղկաձոր բաղաքից ներքև	Ամոնիում իոն. ֆոսֆատ իոն	5-ջդ	
2024	Մարմարիկ	Գետաբերան	Մանգան	4-րդ	4-րդ
	Ծաղկաձոր	Ծաղկաձոր բաղաքից վերև	Մմանգան. վանադիում. երկաթ. բարիում. ալյումին	3-րդ	5-րդ
		Ծաղկաձոր բաղաքից ներքև	Ամոնիում իոնով և մանգանով	5-րդ	
2025	Մարմարիկ	Գետաբերան	Մանգան	5-րդ	5-րդ
	Ծաղկաձոր	Ծաղկաձոր բաղաքից վերև	Մմանգան. վանադիում. երկաթ. բարիում. ալյումին	4-րդ	5-րդ
		Ծաղկաձոր բաղաքից ներքև	Ամոնիում իոնով և մանգանով	5-րդ	

Օգտագործված գրականություն

1. «Մարմարիկ գետի էկոհամակարգի երկրաքիմիական բնութագիրն ըստ հիդրոերկրաքիմիական և լիթիոերկրաքիմիական ադեղների» 2014թ. հեղինակ Հ.Վ Ճահինյան, Ծ.Զ. Զաքարյան, Ց. Ա. գյուլնազարյան: ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ
2. Մարմարիկի հովտի գրաւաշրջային բարտեզ: Քարտեզը ստեղծվել է «Մարմարիկ գետի հովտում կենսառեսուրսների պահպանություն և կայուն զարգացում՝ էկոտուրիզմի զարգացման, ներառական էկոպարահեռի ստեղծման և տեղական համայնքների իրազեկության բարձրացման միջոցով» ենթադրամաշնորհային նախագծի շրջանակներում, որն իրականացվում է «ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի ներքո:
3. Հայաստանի Հանրապետության օրենքը բնության հատուկ պահպանվող տարածքների մասին
4. ՀՀ կառավարության 25.09.2014 թ. N- 1059-Ն որոշում
5. Ծրջակա միջավայրի նախնարարության կայք
6. Շրջակա միջավայրի մոնիթորինգի եվ տեղեկատվության կենտրոն տեղեկագիրք 2019-2025 թվականներ
7. ՀՀ կառավարության որոշումն Երևանի շրջակա միջավայրի [illegible] 2023-2027 թվականների կառավարման ոլան
8. ՀՀ Ջրային օրենսգիրք
9. ՀՀ Կառավարության N 64-Ն որոշում (20.06.2025)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 սեպտեմբեր2026 թվականի թիվ 116-Ա

«ԽԵԼԱՑԻ ԿԱՆԳԱՌ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 42 -րդ կետերով և հիմք ընդունելով Սարգիս Սարգսյանի դիմումը «Խելացի Կանգառ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Դավիթ Իսպիրյանի դիմումը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Խելացի Կանգառ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից համայնքի բյուջի՝ 900125002239 հաշվե համարին՝ սխալ փոխանցված 3 000 000 / երեք միլիոն/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարը, վերադարձնել « Խելացի Կանգառ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ 2470600592400000 հաշվե համարին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀԱՍՄԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ
ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ
ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱԲԱՅԱՆ
ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՆՈՒՆԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 սեպտեմբերի 2026
ք. Ծաղկաձոր